

1572
1573

22 22
U-15 22

2nd March 1900.
Bury H. Rogers

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ-ՈՒՒՏԻ

ԱՂԱԿԵՐՏԱՅ ԵՒ ԱՂԱԿԵՐՏՈՒՀԵԱՅ ՀԱՄԱՐ

„Եկայք որդեակք իմ եւ լուարուք ինձ.
Եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ“:
Սողոմոն

ՀԱՏՈՐ Ա.

Աշխատասիրեց

ՍԱՀԱԿ ՔԱՀՈՂԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՑ

Տ Փ Խ Ի Ս

Տպարան Զովհաննէս Մարտիրոսեանցի

1888

28291-42

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Мая 1888 г.

2001



11398-57

Типог. И. Мартirosianца, Орбел. ул., д. 1/2



Հ Ի Ն Ո Ւ Ն Տ

Հ Ի Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:



Ա Ջ Դ

Այս գրքույկի («Սրբազան պատմութիւն») նիւթի մշակութիւնը տպագրուած է առանձին—«Դասագիրք կրօնի» անունով:

Մեր կարծիքով աշակերտաց ձեռքը սրբազան պատմութեան մի առանձին դասագիրք տալն աւելորդ է, ամենաբարձր և նպատակադրմար դասագիրքը հէնց Սուրբ գիրքը՝ բնագիրն է: Բայց որովհետեւ մեր մէջ այդ բանը մի քանի դժուարութիւններ ունի, չասեմ անկարելիութիւնք, մանաւանդ ստորին դասատանց համար—գործընակ լեզուն, գրքի ստուարութիւնը, գինը, հազուագիւտ լինելը, ուստի ի հարկէ ստիպեալ՝ մեր նպատակին հասնելու համար՝ այսինքն մեր ցանկացած կրօնական-բարոյական իմաստները սաներին հաղորդելու համար, քաղուածօրէն ընտրեցինք այս նիւթերը՝ ըստ կարելւոյն պահպանելով բնագրի ոճը:

Տայ Աստուած, որ հասակով և սրտով մանուկները նոյնչափ սիրեն այս գրքույկը՝ որչափ և սորա բնագիրը:

Ս. ք. Ս.

Տիիսիս 1888 ամի:

Յ Ա Ն Կ

Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Ա.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ

§		Երէս
1	Աշխարհի արարչագործութիւնը և մարդու ստեղծագործութիւնը	1
2	Դրախտ	4
3	Պատուիրանազանցութիւն	5
4	Կայէն և Աբէլ	7
5	Ջրհեղեղ	9
6	Բաբելոնի աշտարակաշինութիւնը	12

Բ.

ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐ

Ա. Ա Բ Բ Ա Ն Ա Մ

7	Աստուած կանչում է Աբրահամին	13
8	Աբրահամը և Դովտը բաժանում են իրարից	14
9	Աբրահամն ազատում է Դովտին	15
10	Աստուծոյ խոստումն Աբրահամին	16
11	Աբրահամը, բարեխօսում է Աստուծուն Սողոմ և Գոմոր քաղաքների համար	18
12	Սողոմ և Գոմոր քաղաքների կործանումն	20
13	Խաւհակի ծնունդը և զոհուելը	22
14	Սաուայի մահը	24
15	Խաւհակի ամուսնութիւնը	25
16	Աբրահամի մահը	29

Բ. Ի Ս Ա Ն Ա Կ

17	Եսաւ և Յակովբ	29
18	Յակովբի խաբեբայութիւնը	30
Գ. Յ Ա Կ Ո Վ Բ		
19	Յակովբի փախուստը	33

Բ

20	Յակովբի տեսիլքը	35
21	Յակովբը Լաբանի մօտ	36
22	Յակովբը փախչում է Լաբանի մօտից	38
23	Եսաւի և Յակովբի հաշտութիւնը	41

Դ. Յ Ո Վ Ս Ի Փ

24	Յովսէփը և իւր եղբայրները	44
25	Յովսէփը Պետափրէսի տանը	47
26	Յովսէփի բարձրանալը	48
27	Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս	53
28	Յովսէփը յայտնում է եղբայրներին	59
29	Յովսէփը Եգիպտոսում	63
30	Յովսէփի մահը	67

Գ.

ԴԱՏԱԻՈՐՆԵՐԻ ԴԱՐ

Ա. Մ Ո Վ Ս Ի Ս

31	Իսրայէլի ներդրութիւնները Եգիպտոսում	69
32	Մովսէսի ծնունդը և ազատութիւնը	70
33	Մովսէսի փախուստը	72
34	Աստուած կանչում է Մովսէսին	73
35	Եգիպտոսից դուրս գալը	75
36	Կարմիր ծովն անցնելը	78
37	Իսրայէլացիներն անցնում են անապատով	80
38	Յոթորի բարի խորհուրդը	83
39	Սինայի օրէնստուութիւնը	85
40	Ոսկէ հորթ	88
41	Լրտեսներ	90
42	Մովսէսի մահը	93

Բ. Յ Ե Ս Ո Ի

43	Յեսուն նուաճում է Քանանը	95
44	Յեսուի մահը	100

Գ. Մ Ի Ի Ս ԴԱՏԱԻՈՐՆԵՐԸ

45	Գեղէոնը որպէս իսրայէլի դատաւոր	101
46	Սամփսոն	104

47	Հռութ	108
48	Հեղի և Սամուէլ	110

Դ.

ԹԱԳԱՌՈՐՆԵՐԻ ԴԱՐ

Ա. Ս Ա Ռ Ո Ւ Ղ

49	Սաւուղը դառնում է թագաւոր	115
50	Յովնաթանի քաջագործութիւնը	119
51	Սամուէլը բաժանում է իւր պաշտօնից	121
52	Սաւուղի անհնազանդութիւնը	122

Բ. ՍԱՌՈՒՂ ԵՒ ԴԱՒԻԹ

53	Դաւթի թագաւոր ընտրուիլը	124
54	Դաւիթը գալիս է Սաւուղի արքունիքը	125
55	Դաւիթ և Գողիաթ	126
56	Սաւուղն առում է, իսկ Յովնաթանը սիրում է Դաւթին	129
57	Դաւթի մեծահոգութիւնը դէպի Սաւուղ	134
58	Սաւուղի մահը	138

Գ. Դ Ա Ռ Ո Ւ Թ

59	Դաւիթը որպէս թագաւոր	140
60	Դաւիթը մեղանջում է	143
61	Աբիսողոմ	145
62	Դաւթի մահը	149

Դ. Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

63	Սողոմոն թագաւորը	151
64	Սողոմոնի տաճարի շինութիւնը	154
65	Սողոմոնի փառքը, ընկնիլը և մահը	157

Ե. ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՒ ՎԵՐՋԸ

66	Ռորովամ և Յերորովամ	160
67	Եղիա	162
68	Աքաաբը մեղանջում է Նաբովթի դէմ և Եղիայի մահը	167
69	Իսրայէլի և Յուդայի թագաւոր. կործանումն	169
70	Բաբելոնի գերութիւնը և նորա վախճանը	174



Ա.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ

§ 1.

Աշխարհիս արարչագործութիւնը և մարդու ստեղծագործութիւնը:

Ա.

ա.

Աստուած սկզբում ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անպատրաստ էր և խաւարով ծածկուած: Աստուած ասաց. «Թող լոյս լինի» և իսկոյն լոյս եղաւ: Աստուած բաժանեց լոյսը խաւարից—լուսոյ անունը դրեց ցերեկ, իսկ խաւարինը՝ գիշեր: Այսպէս ցերեկից և գիշերից կազմեց առաջին օրը:

բ.

Աստուած ասաց. «Թող Հաստատութիւն լինի ջրերի մէջ, որպէսզի նոցա միմեանցից բաժանէ»: Աստուած ստեղծեց Հաստատութիւնը և բաժանեց նորա վերևի և ներքևի ջրերը միմեանցից: Հաստատութեան անունը դրեց երկինք: Այսպէս անցաւ էլի մի ցերեկ և մի գիշեր ու դառաւ մի օր՝ երկրորդ օր:

գ.

Աստուած ասաց. «Թող երկնքի տակի ջրերը մի

տեղ հաւաքուեն. թող ցամաքը բաժանուի ջրերից»։ Այսպէս էլ եղաւ։ Աստուած ցամաքի անունը դրաւ երկիր, իսկ ջրերինը՝ ծով։

Աստուած ասաց. «Թող երկրիս վերայ կանաչեն խոտեր, ծաղիկներ, պտղատու ծառեր և ամենքն էլ իրանց կերպով պտուղ տան։ Այսպէս էլ եղաւ։ Անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դառաւ մի օր՝ երրորդ օր։

Դ.

Աստուած ասաց. «Թող երկնքի վերայ լուսաւորներ երևան ու երկիրս լուսաւորեն»։ Այն ժամանակ Աստուած պատրաստեց մի մեծ լուսաւոր՝ ցերեկը և մի փոքր լուսաւոր՝ գիշերը կառավարելու համար. բացի դորանից ստեղծեց նաև շատ աստղեր։ Այսպէս անցաւ էլի մի ցերեկ և մի գիշեր ու դառաւ մի օր՝ չորրորդ օր։

Ե.

Աստուած ասաց. «Թող ջրերը լքցուին ձկներով, իսկ օդը՝ թռչուններով»։ Այն ժամանակ ջրերը լքցուեցան բազմաթիւ կենդանիներով, իսկ օդի մէջ թռչում էին ամեն տեսակ թռչուններ։ Այսպէս անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դառաւ մի օր՝ հինգերորդ օր։

Զ.

Աստուած ասաց. «Թող երկրիս վերայ լինին չորքուտանի կենդանիներ—զաղաններ և զեռուններ»։ Այսպէս էլ եղաւ։

Աստուած ասաց. «Եկէք մարդ էլ ստեղծենք» և ստեղծեց մարդուն։

Աստուած նայեց իւր բոլոր ստեղծուածների վե-

րայ ու տեսաւ որ ամենքն էլ բարի են։ Անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դառաւ մի օր՝ վեցերորդ օր։

«Զի նա ասաց՝ եւ եղեն, ինքն հրամայեաց՝ եւ հաստատեցան»։ Սադ. Լբ. 9.

Ինչպէս որ Աստուած ասաց, այնպէս էլ եղաւ, հրամայեց ու կատարուեց։

«Ո՛րպէսզի մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք»։ Սադ. ճգ. 24.

Ինչպէս մեծ են քո գործքերն, Աստուած, դու ամենայն բան իմաստութիւնով ստեղծեցիր ու երկիրը լքցուեց քո ստեղծուածներով։

Բ.

ա.

Աստուած ասաց. «Եկէք մարդ էլ ստեղծենք, որպէսզի նա իշխէ ծովի ձկներին, երկնքի թռչուններին, անասուններին և զեռուններին, որոնք սողում են ամբողջ երկրիս վերայ։

Բ.

Աստուած ստեղծեց մարդուն իւր պատկերի՝ իր նման—վեր առաւ երկրից. հող ու նրան կենդանի շունչ փչելով՝ տուեց անմահ հոգի և անունը դրեց Ադամ։

Գ.

Աստուած ասաց. «Լաւ չէ մարդու համար, որ նա միայնակ լինի, ստեղծենք Ադամի նման մէկը, որ նրան օգնական լինի»։ Այն ժամանակ Աստուած Ադամին քնացրեց, հանեց նորա կողքից մինը ու

նորա համար մի օգնական՝ կին ստեղծեց, անունը դրեց Եւա ու բերեց Ադամի մօտ: Աստուած օրհնեց նրանց և ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք և լքցրէ՛ք երկիրը ու տէր եղէ՛ք բոլոր անասուններին, թռչուններին և զեռուններին»:

Դ.

Այսպէս Աստուած երկինքն ու երկիրը իւր բոլոր պատկանելիքներով վեց օրում ստեղծեց, իսկ եօթներորդ օրում հանգստացաւ իւր բոլոր գործերից:

«Խոստովան եղէց քեզ, Տէր, զի ահեղ եւ սքանչելի ես. սքանչելի են գործք քո, եւ անձն իմ սիրեաց յոյժ»: Սաղ. ԶԼԲ. 14.

Խոստովանում եմ քեզ, Աստուած, որ դու մեծ ես և հրաշալի, զարմանալի են քո գործերն և ես սիրեցի քեզ շատ և շատ:

«Մեք սիրեսցուք զԱստուած, վասնզի նախ նա սիրեաց զմեզ»: Ի. Թ. Յովհ. Դ. 19.

Մենք պէտք է սիրենք Աստուծուն, որովհետեւ նա ինքն առաջ սիրեց մեզ:

§ 2.

Պրախտ:

Աստուած տնկեց Եդեմի մէջ մի գեղեցիկ պարտէզ՝ անունը դրախտ դրաւ և զարդարեց նորան ամեն տեսակ ծառերով: Ծառերը շատ գեղեցիկ էին և հիանալի պտուղներ ունէին: Աստուած բնակեցրեց Ադամին և Եւային այդ պարտիզի մէջ, որպէսզի մըշակեն նորան, պահեն—պահպանեն:

Երբ Աստուած ստեղծեց ամեն տեսակ կենդանիները և թռչունները, պատուիրեց Ադամին և Եւային, որ խնամք տանեն նրանց վերայ: Ադամը տեսնելով բոլոր կենդանիները, նրանց ամեն միսին, յարմարաւոր անուններ տուաւ:

Պարտիզի մէջ տեղում երկու ծառեր կային— «Ծառ կենաց» և «Ծառ գիտութեան բարւոյ և չարի» անուններով:

Աստուած պատուիրեց Ադամին ու Եւային և ասաց. «Պարտիզի միջի բոլոր ծառերի պտուղներից կարող էք ուտել, բացի այն մէկ ծառի պտղից, որի անունը ծառ գիտութեան բարւոյ և չարի է, հէնց որ նորանից ուտէք, իսկոյն կմեռնէք:

«Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»: Թ. Յովհ. Ե. 3.

Նորանով կարող ենք ցոյց տալ Աստուծուն, թէ իրան սիրում ենք, եթէ նորա պատուիրանները պահենք, իսկ նորա պատուիրանները ծանր բաներ չեն:

§ 3.

Պատուիրանազանցութիւն:

ա.

Օձը երկրիս վերայն բոլոր կենդանիներից իմաստունն էր. նա եկաւ Եւայի մօտ և ասաց. «Ուղիղ է որ Աստուած ասել է ձեզ, թէ պարտիզի միջի բոլոր ծառերի պտուղներից չուտէք»: Կինը պատասխանեց օձին. «Պարտիզի միջի բոլոր ծառերի պտուղներից

իրաւունք ունինք ուտելու, բացի այն ծառի պտղից, որը պարտիզի մէջ տեղումն է, եթէ նրանից ուտենք կմենենք»: Օձը նորից խօսեց կնոջ հետ և ասաց. «Գուք չէք մեռնիլ, ընդհակառակն, եթէ ուտէք, դուք էլ Աստուած կգառնաք և կիմանաք թէ որն է ըարին և որն է չարը:

բ.

Կինը հաւատաց օձին, կարծեց թէ այդ ծառի պտղից ուտելը լաւ է. երևի մի նշանաւոր ծառ պիտի լինի, որ նորա պտուղն ուտողը իմաստուն է դառնում, ուստի վեր առաւ պտուղը և կերաւ. կինը մարդուն ևս տուաւ այդ պտղից. նա էլ առաւ և կերաւ:

գ.

Այս բանից յետոյ իսկոյն լսեցին Աստուծոյ ոտի ձայնը պարտիզի միջից. վախեցան և ամաչում էին, դորա համար էլ թաք կացան: Երբ Աստուած այս բանը տեսաւ, ձայն տուաւ Ադամին և ասաց. «Ո՞րտեղ ես»: Ադամը պատասխանեց. «Վախենում եմ, դորա համար էլ թաքնուեցայ»: Աստուած ասաց. «Չինի՞ թէ այն ծառի պտղիցը կերար»: Ադամը պատասխանեց. «Այս կինը, որ դու ինձ տուիր, նա տուաւ ինձ և ես կերայ»: «Աստուած կնոջն ասաց. «Այդ ինչ ես արել»: Կինը պատասխանեց. «Օձը խաբեց ինձ ու ես էլ կերայ»:

դ.

Այն ժամանակ Աստուած ասաց օձին. «Անիծեալ լինիս բոլոր կենդանիների մէջ. փորիդ վերայ սողաս, և հող ուտես քո ամբողջ կեանքում»: Յետոյ դար-

ձաւ դէպի կինը և ասաց. «Քո վշտերը կշատացնեմ, ցաւով որդի կծնես», իսկ Ադամին դառնալով ասաց. «Որովհետեւ դու ինձ չլսեցիր, այդ պատճառով այն կտոր հացը, որ պիտի ուտես, երեսիդ քրտնքովը ձեռք բերես՝ մինչև որ նորից հող կգառնաս, որտեղից որ ստեղծուեցար»:

Սորանից յետոյ դուրս արաւ Աստուած Ադամին և Եւային դրախտից. նրանք սկսեցին հողագործութեամբ պարապել. իսկ դրախտի դրանը՝ հրեղէն աւերը ձեռին մի հրեշտակ պահապան կանգնացրեց:

«Ոչ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն, եւ ոչ բնակին առ քեզ չարք, մի անօրէնք բնակեցին առաջի աչաց քոց»: Սաղ. ե. 5.

Աստուած, դու անօրէնութիւն չես սիրում, դու չար բան չես մտածում, դու չես համբերում, որ անօրէնները քո աչքի առաջ լինին:

«Աստուած հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»: Թ. ա. հոմ. բ. 6.

Աստուած ամենքին էլ իրանց գործքի համեմատ է հատուցանում:

Վայէն և Աբէլ

ա.

Ադամ և Եւան երկու որդի ունեցան—առաջինի անունն էր Վայէն, իսկ երկրորդինը՝ Աբէլ: Աբէլը խաշնարած էր, իսկ Վայէնը՝ երկրագործ: Մի անգամ երկու եղբայրները Աստուծուն զոհ բերին—Վայէնը իւր մշակած դաշտի պտուղներից, իսկ Աբէլը իւր

խաշների միջի անդրանիկ գառներից: Աստուած Աբէլի մատաղը սիրով ընդունեց. իսկ Կայէնինը՝ ոչ: Այս բանի վերայ Կայէնը խիստ բարկացաւ. Աստուած ասաց Կայէնին. «Ի՞նչու ես այդպէս տրտմել, ի՞նչու է քո դէմքը փոխուել, եթէ դու բարի բան գործես, Աստուած կսիրէ, իսկ եթէ ոչ՝ յանցանքը դրան մօտն է»:

Բ.

Չնայելով Աստուծոյ այս խօսքերին, Կայէնը դարձեալ ուր սրտից չհանեց և մի անգամ՝ երբ դաշտումն էին, խփեց Աբէլին և սպանեց:

Այն ժամանակ Աստուած ասաց Կայէնին. «Ո՞ր է քո Աբէլ եղբայրը»: Կայէնը պատասխանեց. «Չգիտեմ, միթէ ես նորա պաշտպանն եմ»: Աստուած ասաց նորան. «Քո եղբոր արիւնի ձայնը զանգատովում է ինձ, երկրիս վերայ դու անիծեալ կլինիս. քո մշակած ագարակը ոչինչ պտուղ չի տայ. դու երկրիս վերայ երեւեալ և տատանեալ կլծափառիս»:

Դորանից յետոյ՝ Կայէնն իսկոյն հեռացաւ այնտեղից ու գնաց մի ուրիշ երկիր: Աստուած Ադամին և Եւային մի որդի ևս պարգևեց, որին անուանեցին Սէթ. սորա յաջորդները բարեպաշտ մարդիկ էին:

«Ամենայն որ ատեալ զեղբայր իւր՝ մարդասպան է»:
Ի. Թ. Յովհ. գ. 15:

Ով որ իւր եղբորն ատէ, նա մարդասպան է:

§ 5.

Ջրհեղեղ:

ա.

Փարդիկ երկրիս վերայ կամաց—կամաց բազմանում էին, ուստի և երկիրը նոցա բնակութեան համար հետզհետէ փոքրանում էր: Այս մարդիկը քանի գնում միշտ և միշտ վատանում էին—նրանք Աստուծուն բողբոլին մոռացան, նրա ասածներն այլ ևս չէին կատարում: Աստուած երկար ժամանակ համբերեց այս բաներին, բայց երբ նրանց չարութիւնը չափիցն անցաւ, Աստուած ասաց. «Ես այդ մարդկանց պէտք է ջնջեմ երկրիս երեսից»: Այդ միևնույն ժամանակում ապրում էր մի մարդ՝ Նոյ անուանով. որը Սէթի ցեղիցն էր. նա շատ բարեպաշտ էր և դորա համար էլ Աստուած սիրում էր նորան:

Բ.

Այն ժամանակ Աստուած Նոյին ասաց. «Ես կամենում եմ ջրհեղեղով կործանել այդ չար մարդկանց. դու քեզ համար մի տապան շինիր՝ բազմաթիւ սենեակներից բաղկացած, կպրով ծեփիր նորան թէ դրսից և թէ ներսից: Այդ տապանի մէջ կմտնես դու և քո որդեքը, բացի այդ կվերցնես ամեն տեսակ կենդանիներից մի մի զոյգ, նոյնպէս ամեն տեսակ կերակուր՝ թէ քեզ և թէ կենդանիների համար»: Նոյն էլ այնպէս արեց, ինչպէս որ Աստուած հրամայել էր:

Գ.

Երբ նաւը պատրաստ էր, Աստուած Նոյին ասաց.

«Մտի՛ր տապան դու և քո ամբողջ ընտանիքը»: Նոյն էլ մտաւ տապան իւր երեք որդիներով, կնոջով և հարսներով. ներս առաւ նմանապէս և ամեն տեսակ կենդանի:

Սորանից յետոյ սկսեց սաստիկ անձրև զալ. երկրիս վերայի բոլոր աղբիւրները բացվեցան և քառասուն օր ու քառասուն գիշեր շարունակ անձրև էր գալի: Ջուրը մեծացաւ և տապանը բարձրանալով, սկսեց լողալ նորա երեսին: Ջուրն այնքան բարձրացաւ որ ամենաբարձր լեռների գագաթներն անգամ ծածկուեցան. էլ ոչ մի կենդանի, ոչ մի մարդ չմնաց, որ չխեղդուէր:

Դ.

Հարիւր յիսուն օր ջուրն այսպէս ծով դառած՝ երկրիս երեսին կանգնած մնաց: Աստուած տեսնելով Նոյի վիճակը, հրամայեց քամիներին փչել. փակվեցան բոլոր աղբիւրների աչքերը, և անձրևները կամաց—կամաց դադարեցան. ջուրն էլ սկսեց ընկնել՝ ցածրանալ: Տապանը լողալով՝ Արարատ (Մասիս) լեռան վերայ հանգստացաւ: Նոյը բաց արաւ տապանի պատուհանը և մի ագռաւ բաց թողեց: Ագռաւը յետ չեկաւ: Գորանից յետոյ մի աղաւնի արձակեց, բայց որովհետև նա ոչ մի հանգստանալու տեղ չգտաւ, ուստի յետ դարձաւ, Նոյը մեկնեց իւր ձեռքը և ներս առաւ:

Եօթն օրից յետոյ, Նոյը կրկին անգամ մի աղաւնի բաց թողեց: Աղաւնին երեկոյեան դէմ վերադարձաւ՝ բերանին ձիթենու շիւղ բռնած: Նոյն էլի եօթն օր սպասեց և նորից աղաւնին արձակեց. այս

անգամ աղաւնին յետ չեկաւ: Նոյն իմացաւ, որ երկրիս երեսից ջուրը ցամաքել է:

Ե.

Նոյը դուրս եկաւ տապանից իւր ընտանիքի հետ. այնտեղ նա մի սեղան շինեց և զոհ բերեց:

Այս բանն Աստուծուն դուր եկաւ, ուստի և ասաց. «Այս օրուանից սկսած ես այլ ևս երկիրը չեմ անիծի մարդոց չարութեան համար: Քանի որ երկիրս կայ, թող ցանքն ու հունձը անպակաս լինի, նոյնպէս ցուրտն ու տաքութիւնը, ձմեռն ու ամառը, ցերեկն ու գիշերը թող շարունակուին:

Աստուած Նոյին օրհնեց և նորա հետ դաշն կապեց, որ այսուհետև էլ ջրհեղեղ չի լինիլ: «Այս աղեղը ես նշանակում եմ երկնքի վերայ, նա թող նշան լինի իմ և քո ուխտին և երբ ես ամպերը երկրիս վերայով կտանեմ, աղեղն իսկոյն կերևայ և ես կլիշեմ իմ ու քո ուխտը»:

Նոյն սկսեց երկրագործութիւնով պարսպել և այգի տնկեց: Նա երեք որդի ունէր—Սեմ, Քամ և Յաբել. դոցա որդիքը բազմացան և լքցրին երկիրը:

«Պահէ տէր զամենեւին, ոչք սիրեն զնա, եւ զամենայն մեղաւորս սատակէ տէր»: Սաղ. ճիւղ. 20.

Աստուած իրան սիրողներին պաշտպանում է, իսկ մեղաւորներին ջնջում է:

«Նուազեցուցանեն զագգս մեղք»: Առակք Սող. Ժդ. 34.

Յանցանքը մարդկանց կործանում է:

§ 6.

Քաբելոնի աշտարակաշինութիւնը:

ա.

Նոյի թոռները շատանալով՝ չուեցին դէպի արեւելք—Եփրատ ու Տիգրիս գետերի միջում հանդիպեցան մի ընդարձակ դաշտավայրի, որի անունն էր Սենաար: Այդ մարդիկն ամենքն էլ մի լեզուով էին խօսում. նրանք ասում էին միմեանց. «Եկէք աղիւս պատրաստենք, թրծենք, մեծ քաղաք ու մեծ աշտարակ շինենք, որի մի ծալը երկինք հասնի, իսկ միւսը երկրիս վերայ լինի. այդ շինութիւնը մեր անունը անմահ կպահէ»: Զինութիւնն սկսեցին: Աստուած վերելից նայում էր, թէ մարդիկ ինչ են անում. նա ասաց. «Այս բոլոր մարդիկը, որոնք շինութեան մասնակից են, մի լեզուով են խօսում իրար հետ, ես կխառնեմ նրանց լեզուն, այլ ևս մէկ մէկու չեն կարող հասկանալ»:

բ.

Այսպէս էլ եղաւ: Զինութիւնը դադարեց. մարդիկ սկսեցին Քաբելոնից հեռանալ ու ցրուել կրկին երկրիս զանազան կողմերը:

«Զի Աստուած ամբարտաւանից հակառակ կաց»:
I. թ. Պետ. ե. 5.

Աստուած ամբարտաւաններին հակառակ է:

Բ.

ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐ

Ա.

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

§ 7.

Աստուած կանչում է Աբրահամին:

ա.

Միջագետքի խառան քաղաքում մի մարդ էր ապրում՝ անունն Աբրահամ: Նորա հայրը կուռք էր պաշտում, իսկ ինքը՝ ճշմարիտ Աստուծուն: Աստուած ասաց Աբրահամին. «Թող քո հայրենիքը, քո բարեկամները, քո հօր տունը և գնան այն երկիրը, որը ես քեզ ցոյց կտամ. ես կամենում եմ քեզ մեծ ազդ դարձնել. քեզ կօրհնեմ. քո անունը ամէն տեղ կը տարածեմ. քո ձեռքով պէտք է օրհնուին երկրիս վերայի բոլոր ազգերը»:

բ.

Սորանից յետոյ Աբրահամը դուրս եկաւ իւր կին Սառայի հետ. հետն առաւ իւր եղբորորդի Աովտին, ունեցած—չունեցածը և հեռացաւ դէպի Քանանու երկիրը: Երբ Քանանացւոց երկիրը եկաւ ու Սիւքէմ կոչուած հովիտը հասաւ, Աստուած երևեցաւ Աբրահամին և ասաց. «Այս երկիրը տալիս եմ քեզ և քո որդւոց»: Աբրահամն այնտեղ սեղան շինեց և Աստուծոյ անունը փառաբանեց:

«Յայտեալ առաջի Տեառն զճանապարհս քո եւ յուսա ի նա»։ Սաղ. 14. 5.

Աստուծուն յանձնիր քո ճանապարհը եւ յոյսդ նորա վերայ դիր։

«Զի օրհնեսցես դու զարդարն Տէր»։ Սաղ. ե. 13.

Դու արդարներին օրհնում ես, Աստուած։

§ 8.

Աբրահամը եւ Ղովտը բաժանվում են իրարից։

Աբրահամը մի հարուստ մարդ էր, ունէր բազմաթիւ խաշներ, նոյնպէս շատ ոսկի եւ արծաթ։ Ղովտը եւս հարուստ էր, ունէր բազմաթիւ խաշներ եւ անդէաներ։ Նրանց բնակութեան երկիրը շատ փոքր էր, այնպէս որ խաշներին բաւականութիւն չէր տալի, դորա համար եւս միշտ կռիւ եւ անբաւականութիւն էր պատահում Ղովտի եւ Աբրահամի հովիւների մէջ։

Մի անգամ Աբրահամն ասաց Ղովտին. «Ի՞նչու պէտք է մեր հովիւների մէջ կռիւ պատահէ, չէ՞ որ մենք ազգականներ ենք. աւելի լաւ է բաժանուինք, եթէ դու ձախ կողմը կգնաս, ես աջ կերթամ, իսկ եթէ աջ կգնաս, ես ձախ կերթամ»։

Ղովտն ընտրեց իրան առաջ տարածուող Յորդանանի պաղաւտ հովիտը, որը հարուստ էր ջրերով եւ նման մի սիրուն պարտիզի։ Այսպէս երկուսն էլ բաժանուեցան միմեանցից—Աբրահամը բնակուեցաւ Քեբրոնի մօտ դտանուող Մամբրէի անտառում, իսկ

Ղովտը՝ Յորդանանի հովտում։ Նորա վրանները հասնում էին մինչեւ Սոդոմ քաղաքը։ Այդ քաղաքի բնակիչները շատ վատ մարդիկ էին—նրանք Աստուծոյ ճանապարհով չէին գնում։

«Երանի՜ խաղաղարարաց»։ Մատ. ե. 9.

Երանի՜ խաղաղութիւն սիրողներին։

§ 9.

Աբրահամն ազատում է Ղովտին։

Պատահեց որ չորս թագաւորներ աղի ձորի (Սիդգիմ) վերայ յարձակուեցան։ Սոդոմ եւ Գոմոր քաղաքների թագաւորները դուրս եկան նրանց դէմ պատերազմելու։ Երկու թագաւորները յաղթուեցան, ժողովուրդը փախաւ լեռները։ Թշնամին աւար առաւ Սոդոմ եւ Գոմոր քաղաքների հարստութիւնները։ Ղովտը եւս գերի ընկաւ իւր խաշներով։

Այդ պատերազմի միջից մէկը՝ մի կերպով ազատվեցաւ, եկաւ Աբրահամին իմաց տուեց, որ իւր եղբօր որդի Ղովտը գերի է ընկել։ Աբրահամը երբ այս բանն իմացաւ, հաւաքեց ծառաներին, թուով երեք հարիւր տասն եւ ութն, ընկաւ թշնամու հետեից եւ գիշեր ժամանակ յարձակուելով նոցա վերայ՝ ջարդեց թշնամուն եւ յետ առաւ բոլոր աւարը. դրանց հետ ազատեց Ղովտին, նորա կանանց եւ ամէնքին։

Երբ Աբրահամը պատերազմից վերադառնում էր, Սոդոմի թագաւորը նորա առաջը դուրս եկաւ ու ասաց. «Դերի առած մարդիկն ինձ, իսկ աւարը քեզ

լինի»: Աբրահամը պատասխանեց. «Երգվում եմ Աստուծոյ անսւնով, որ ես քո ունեցուածքի վերայ աչք չունիմ, մի տրեխի թել անդամ չեմ վերցնի քո հարստութիւնից»: Աբրահամը վերադարձաւ տուն:

«Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»: III. Մովս. Ժբ. 18.

Քո ընկերին պէտք է քեզ պէս սիրես:

§ 10.

Աստուծոյ խոստումն Աբրահամին:

ա.

Այս բանից յետոյ Աստուած երևաց Աբրահամին և ասաց. «Մի վախենար, Աբրահամ, ես քո պահապանն եմ, ես քեզ կվարձադրեմ»: Աբրահամը պատասխանեց. «Տէր, ինչ պիտի տաս ինձ, ես ծերացել եմ. մահս մօտ է. անորդի պէտք է մեռնեմ, իսկ իմ ծառայ Նղիազարի որդին ժառանգս կլինի»:

Աստուած ասաց. «Նղիազարի որդին քո ժառանգը չի լինի, այլ քո որդին պէտք է քեզ ժառանգ լինի»: Աստուած հրամայեց Աբրահամին դուրս գալ վրանից ու ասաց. «Նայիր, Աբրահամ, համարիր այդ աստղերը, եթէ համարել կարող ես. այսպէս էլ պէտք է քո զաւակները բազմացնեմ»: Աբրահամը հաւատաց Աստուծոյ ասածներին:

Աստուած ասաց. «Ես քո Աստուածն եմ, ես կամենում եմ քեզ հետ դաշն կապել և քո զաւակները բազմացնել. ես կամենում եմ դաշը կապել քո

ժառանգների հետ և Քանանացւոց աշխարհը, ուր որ դու իբրեւ օտարական ապրում ես, նրանց տալ»:

բ.

Մի անգամ՝ կէսօրուայ խիստ շոքի ժամանակ Աբրահամը նստած էր վրանի դրան առաջը, որը գտանվում էր Մամբրէի անտառում: Աբրահամը վեր նայեց և տեսաւ որ երեք անցուորականներ հեռուից դէպի ինքն են գալիս, իսկոյն վազեց նրանց առաջ, երկրպագութիւն տուեց և ասաց. «Տէր, եթէ քո ծառային յարգում ես, առանց նորա վրանը մտնելու մի՛ անցնիր. հանգստացիր փոքր ինչ այս ծառի տակ. ես ջուր կբերեմ և ձեր ոտները կը լուանամ. փոքր ինչ նախաճաշիկ կանէք, և յետոյ էլի ձեր ճանապարհը կշարունակէք»: Նրանք պատասխանեցին. «Թող այդպէս լինի»:

Աբրահամը շտապեց դէպի վրանը՝ Սառայի մօտ ու ասաց. «Ղուտ արա՛, մի քանի նկաններ թխիր շարմաղ ալիւրից»: Իսկ ինքը գնաց հանդը տաւարի մօտ, մի մատաղ երինջ բերեց, տուեց ծառաներին որ մորթեն և հիւրերի համար կերակուր պատրաստեն: Աբրահամը բերեց կարագ, կաթն և հորթի մսից պատրաստած կերակուր. դրեց հիւրերի առաջ ծառի տակ և նրանք էլ կերան:

Այն ժամանակ հիւրերն ասացին Աբրահամին. «Ո՛ւր է քո կին Սառան»: Նա պատասխանեց. «Վրանումն է»: Հիւրերից մինն ասաց. «Նկող տարի այս ժամանակ Սառան մի որդի կունենայ»: Սառան, որ վրանի դրան յետևում կանգնած էր, ծիծաղեց իրա մէջ այս խօսքերի վերայ: Այն ժամանակ Տէրը հարց-



րեց Աբրահամին. «Սառան ինչու է ծիծաղում, միթէ Աստուծոյ Համար անկարելի բան կայ»: Ստարականները վեր կացան և գնացին:

«Երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն»: Յովհ. ի. 29.

Երանի նրանց, որոնք չեն տեսել, բայց հաւատում են:

«Ուղիղ են պատգամք Տեառն, եւ ամենայն գործք նորա հաւատովք են»: Սաղ. լր. 4.

Աստուծոյ խօսքերը ճշմարիտ են, ինչ որ նա ասում է, կատարում է:

§ 11.

Աբրահամը բարեխօսում է Աստուծուն Սողոմ և Գոմոր քաղաքների համար:

Ստարականները գնացին դէպի Սողոմ. Աբրահամն էլ հետները գնաց նրանց ճանապարհ ձգելու: Աստուած ասաց. «Իմ միտքը ինչ ծածկեմ իմ ծառայ Աբրահամից—Սողոմ և Գոմոր քաղաքների մարդկանց անկարգութիւնը չափիցն անցել է, գնում եմ տեսնելու, արդեօք ուղիղ է այդ բոլորը, թէ ոչ»:

Երկու ճանապարհորդները գնացին դէպի Սողոմ, իսկ Աբրահամը Աստուծոյ առաջ կանգնեց ու ասաց. «Միթէ դու արդարներին մեղաւորների հետ միասին պիտի կործանես. եթէ քաղաքի մէջ 50 արդար լինի, միթէ չես ների և միւսներին էլ. քա՛ն լիցի, դու արդարներին մեղաւորների հետ միասին չես պատժի.

դու որ ամենի դատաւորն ես, այդպէս չես վարուի»: Աստուած պատասխանեց. «Եթէ քաղաքի մէջ 50 արդար գտնեմ, միւսներին էլ նրանց սիրոյ Համար կներեմ»:

Աբրահամը նորից խօսեց ու ասաց. «Ես այժմ Աստուծոյ հետ եմ խօսում. ես նորա ոտի հողն ու մոխիրն եմ, թերևս այնտեղ 40 արդար լինի: Աստուած պատասխանեց. «Քառասունի Համար էլ չեմ կործանի»: «Իսկ եթէ 30 հոգի գտանուին»: «Եթէ 30 հոգի գտանուին, դարձեալ ոչինչ չեմ անի»: Աբրահամը նորից ասաց. «Եթէ 20 հոգի գտանուին»: Աստուած պատասխանեց. «Քսանի Համար ևս չեմ պատժի»:

Աբրահամը կրկնեց. «Մի բարկանար, Տէր, եթէ մի անգամ էլ խօսեմ, իսկ եթէ 10 հոգի լինին»: Աստուած պատասխանեց. «Տասնի Համար ևս չեմ պատժի»:

Երբ այս խօսակցութիւնը վերջացաւ, Աստուած աներևոյթացաւ, հրեշտակները գնացին դէպի Սողոմ, իսկ Աբրահամը տուն դարձաւ:

«Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն՝ առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան»: I. Տիմոթ բ. 1—2.

Այժմ աղաչում եմ ամեն բանից առաջ աղօթք, խնդրուածք և աղաչանք անել ամենայն մարդու համար»:

«Բայց ոչ իմ կամք՝ այլ բոյդ լիցին»: Ղուկ. իբ. 42.

Ոչ թէ իմ կամքը, այլ բոնը թող լինի»:

«Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա»: Սաղ. ճիւղ. 18.

Աստուած մօտիկ է ամենքին, որոնք կանչում են նրան:

§ 12.

Սողոմ և Գոմոր քաղաքների կործանումն:

Երկու հրեշտակները երեկոյեան ժամանակ Սողոմ քաղաքը հասան. Ղովտը նստած էր քաղաքի դրան առաջ: Հենց որ նա ճանապարհորդներին տեսաւ, տեղից վեր կացաւ, առաջ գնաց. գլուխ տուեց ու խնդրեց որ գիշերը իրա մօտ կենան. նա նրանց ոտները կլուանայ, իսկ առաւօտը էլի իրանց ճանապարհը կարող են շարունակել: Նրանք պատասխանեցին. «Ոչ, մենք գիշերը փողոցում պէտք է անցկացնենք»: Ղովտը շատ խնդրեց նրանց. վերջապէս համաձայնեցան նորա տուն գնալու: Նա հիւրասիրեց նրանց և ընթրիք պատրաստեց նրանց համար:

Երեկոյեան ժամանակ՝ Սողոմ քաղաքի բնակիչները՝ ծեր և մանուկ Ղովտի տունը շրջապատեցին ու պահանջում էին նորանից օտարականներին՝ ասելով. «Տոյց տո՛ւր մեզ այն մարդկանցը, որոնք քեզ մօտ եկան, դուրս բեր և մեզ լանձնիր»: Ղովտը դուրս գնաց տանից. կողպեց բակի դուռը ու լորդորում էր քաղաքացիներին իրանց պահանջից ձեռք վերցնել: Իսկ նրանք պատասխանեցին. «Գու ինքդ այստեղ օտարական ես, հերիք չէ, ուզում ես մեզ վերայ դատաւոր և՛ս լինել. չէ, մենք քեզ էլ նրանց հետ կպատժենք»: Քաղաքացիներն իսկոյն

յարձակուեցան Ղովտի վերայ: Այդ ժամանակ հրեշտակները դուրս եկան տանից, Ղովտին ներս առան ու դուռը ներսից կողպեցին: Սողոմի բնակիչները կատաղութիւնից իրանք իրանց միմեք էին ուտում, բայց ոչ մի կերպով չկարողացան ներս մտնել:

Հրեշտակներն ասացին Ղովտին. «Ո՞վքեր ունիս դու քաղաքում, նրանց էլ իմաց տո՛ւր և ի միասին դուրս եկէ՛ք, որովհետեւ Աստուած ուղարկել է մեզ այս քաղաքը կործանելու»: Ղովտը շտապեց իւր փեսաների մօտ և խօսեց նրանց հետ. «Վեր կացէ՛ք, շտապեցէ՛ք, դուրս եկէ՛ք քաղաքից, որովհետեւ Աստուած վճռել է այս քաղաքը կործանել»: Նրանք ծիծաղեցին Ղովտի այս խօսքերի վերայ: Առաւօտը ծագելուն պէս՝ հրեշտակներն ստիպեցին Ղովտին շտապելու, նմանապէս նորա կնոջը և երկու դուստրներին: Այն ժամանակ հրեշտակներն ասացին Ղովտին. «Ղտապիր, ազատիր գլուխդ, յետ չնայես, փախիր դէպի լեռները, որպէսզի չկործանուիք»:

Նրանց հեռանալուց յետոյ Աստուած ծծումբ և կրակ թափեց երկնքից Սողոմ և Գոմոր քաղաքների վերայ, կործանեց, ջնջեց բոլոր մարդկերանց, նոյնպէս և շրջակայ երկիրները: Ղովտի կինը յետ նայեց և իսկոյն աղի արձան դարձաւ:

Աբրահամն առաւօտը վաղ վերկացաւ ու գնաց այն կողմը, ուր որ Տիրոջ հետ խօսում էր սորանից առաջ. նայեց Սողոմ և Գոմոր քաղաքներին և ի՛նչ տեսաւ—ամբողջ երկիրը ծխում էր, կարծես թէ հնոց լինէր:

«Ամբարիշտք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան կորեան վասն անօրէնութեան իւրեանց»: Սաղ. հ. 19.

Ամբարիշտները յանկարծակի կործանուեցան, պակասեցան, սատակեցան և կորան իրանց անօրէն գործքերի համար:

«Պահէ Տէր զամենեսեան ոչք սիրեն զնա, եւ զամենայն մեղաւորս սատակէ տէր»:

Աստուած իրան սիրողներին պաշտպանում է, իսկ մեղաւորներին կործանում:

§ 13.

Իսահակի ծնունդը և զոհվելը:

ա.

Որոշեալ ժամանակն անցնելուց յետոյ, ինչպէս որ Աստուած խոստացել էր, Սառան մի որդի ունեցաւ, որի անունը Իսահակ դրին: Աբրահամն արդէն հարիւր տարեկան էր, երբ Իսահակը ծնաւ: Մանուկն աճում էր, իսկ Աբրահամը ուրախանում:

բ.

Մի քանի տարուց յետոյ Աստուած ասաց Աբրահամին. «Աբրահամ»: Նա պատասխանեց. «Այստեղ եմ»: Աստուած ասաց. «Վեր առ քո միակ որդի Իսահակին, որին դու շատ սիրում ես և գնա Մորէայի երկիրը ու այնտեղ մի լերան վերայ, որը ես քեզ ցոյց կըտամ, զոհիր նորան»: Աբրահամն առսուտը վաղ վեր կացաւ, համեսեց էշը, փայտ պատրաստեց զոհի համար, հետը երկու ծառայ առաւ, նոյնպէս և Իսահակին ու գնաց այնտեղ, ուր որ Աստուած նո-

րան ասել էր: Երեք օրից յետոյ Աբրահամը բարձրացրեց իւր աչքերը և տեսաւ հեռուից նշանակեալ երկիրը. նա ասաց իւր ծառաներին. «Մնացէ՛ք այստեղ, իսկ ես Իսահակի հետ պէտք է գնամ այնտեղ աղօթելու»:

Իսահակը մատաղի փայտը շալակեց, իսկ Աբրահամը ձեռին բռնած ունէր զոհի կրակը և դանակը, երկուսն էլ միասին գնում էին: Իսահակը հարցրեց հօրը. «Հայր, կրակն ու փայտը այստեղ է, բայց ո՞ւր է մատաղացու ոչխարը»: Աբրահամը պատասխանեց. «Աստուած ինքը տեսնում է մատաղացուն»: Երբ որ նրանք լերան գագաթը հասան, Աբրահամը սեղան շինեց, փայտ դարսեց վրան, կապեց Իսահակի ոտներն ու ձեռները և դրեց սեղանի փայտերի վերայ. յետոյ ձեռքը մեկնեց, վեր առաւ դանակը, որպէսզի Իսահակին զոհէ:

Այն ժամանակ Աստուծոյ հրեշտակը ձայն տուեց երկնքից ու ասաց. «Աբրահամ, Աբրահամ, ձեռքդ յետ քաշիր, ես իմացայ, որ դու Աստուծուն յարգում ես. դու քո միակ որդին չխնայեցիր նորա համար», Աբրահամն աչքերը բարձրացրեց ու տեսաւ, որ ծառից մի խոյի գլուխ է կախ արած. նա գնաց, վեր առաւ խոյը և զոհեց նորան իւր որդի Իսահակի փոխարէն:

Աստուծոյ հրեշտակը կրկին ձայն տուեց Աբրահամին՝ Աստուծոյ հրամանով ու ասաց. «Որովհետեւ դու քո միակ որդին չխնայեցիր, սորա համար ես քեզ օրհնում եմ. քո զաւակները թող երկնքի աստղերի և ծովի ափի աւաղի չափ բազմա-

նան, քեզանով պէտք է օրհնուին երկրիս վերայի բոլոր ազգերը»:

Այս բանից յետոյ վերադարձաւ Աբրահամը իւր ծառաների մօտ և այնտեղից նրանց հետ միասին գնաց դէպի Բերսաբէ, ուր և բնակվում էր:

«Երանեալ է այր, որ Համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց»։ Թ. Յակ. ա. 12.

Երանելի է այն մարդը, որը փորձութեանը համբերում է, որովհետեւ եթէ փորձուելով ընտիր դուրս գալ, կենաց պսակին պէտք է արժանանայ, ինչպէս որ Աստուած իւր սիրելիներին խոստացել է:

«Տէր ետ եւ Տէր առ, եղիցի անուն Տեառն օրհնեալ»։ Յովբ. ա. 22.

Աստուած տուեց, Աստուած էլ առաւ, նորա անունը թող օրհնուի:

§ 14.

Սառայի մահը:

Սառան 127 տարեկան էր. նա մեռաւ Քեբեռոնում, Աբրահամն սկսեց լալ և սուգ անել: Երբ սգի օրերն անցան, վեր կացաւ դիակի վերայից ու ասաց այն երկրի բնակիչներին. «Միջնորդեցէք Նփրոնին, որ նա իմ ազարակի ծայրումը գտանուող կրկին այրն ինձ վաճառէ, ես կվճարեմ նորան, ինչ որ նա կը պահանջէ: Նփրոնն ինքը եկաւ և ասաց. «Ազարակն արժէ 400 սատեր, թաղիւր քո մեռեալին այնտեղ»։ Մարդկանց առաջին կշռեց Աբրահամը արծաթը և տուեց նորան. ազարակը կրկին այրի հետ միասին,

որ Մամբրէի մօտն էր գտանվում, դարձաւ Աբրահամի սեպհականութիւն: Սորանից յետոյ թաղեց Աբրահամը Սառային այնտեղ՝ Մամբրէի մօտ և այսպէս կրկին այրը դարձաւ նորա ժառանգական զերեզմանատունը:

«Եւ ի մեռելոց մի արգելուր գշնորհս»։ Սիրաբ. է. 37.

Մեռելներին էլ պէտք է պատուել:

§ 15.

Իսահակի ամուսնութիւնը:

Աբրահամը հասել էր խորին ծերութեան. նա Աստուածանից ամեն տեսակ օրհնութիւն ստացել էր: Աբրահամը կանչեց իւր աւագ ծառայ Եղիազարին, որը նորա բոլոր հարստութիւնը կառավարում էր ու ասաց նորան. «Երդուիւր ինձ երկնքի և երկրի Աստուծոյ անունով, որ դու իմ Իսահակ որդու համար քանանացի աղջիկ կին չես ընտրի. այլ կգնաս իմ հայրենի քաղաքը՝ Խառան և այնտեղից իմ որդու համար կին կընտրես. Տիրոջ հրեշտակը օգնական կլինի քեզ այդ բանում և քեզ կառաջնորդէ»։ Եղիազարը երդում կերաւ և խոստացաւ տիրոջ պահանջը կատարել. առաւ իւր հետ մի քանի ծառաներ, տասն ուղտ և շատ ընծաներ բառնալով նրանց վերայ՝ ճանապարհ ընկաւ դէպի Միջագետքի Խառան քաղաքը: Երբ որ Եղիազարը տեղ հասաւ, ուղտերին հանգիստ տուեց քաղաքից դուրս՝ մի ջրհորի մօտ:

Արև մտնելու ժամանակն էր, կանայք սովորա-

բար գալիս էին այդ ժամին ջուր հանելու: Եղիազարն սկսեց աղօթել և ասել. «Ո՛վ տէր, Աբրահամի Աստուած, ողորմիր ինձ և յաջողիր իմ գործը. այս քաղաքի աղջիկները կգան ահա ջուր հանելու այս տեղից. եթէ մի կոյս աղջիկ գայ և ես նորան ասեմ, կռացրո՞ւ սափորդ ու ինձ ջուր խմացրո՞ւ և նա էլ պատասխանէ, խմիր, ես քո ուղտաների համար ևս ջուր կհանեմ, նա կլինի Խաճակի կինը»:

Հազիւ թէ այս խօսքերը վերջացրել էր, ահա գալիս է Բաթուէլի դուստր Ռեբեկան՝ սափորն ուսին դրած: Նա մի գեղեցիկ աղջիկ էր: Իջաւ ջրհորը, սափորը լքցրեց և կրկին բարձրացաւ: Եղիազարը վազեց նորա առաջ և ասաց. «Թող տո՛ւր ինձ, որ փոքր ինչ ջուր խմեմ քո սափորից»։ Նա էլ պատասխանեց. «Խմի՛ր»։ Այս ասաց և շտապով սափորը կռան վերայ իջեցրեց ու նրան ջուր խմացրեց: Սորանից յետոյ աւելացրեց Ռեբեկան. «Ես քո բոլոր ուղտերի համար ևս ջուր կհանեմ»։ Յետոյ շտապեց գէպի դաշտը, որտեղից կենդանիները ջուր էին խմում ու այնտեղ թափեց իւր սափորի ջուրը. նա կրկին անգամ ջրհորից բոլոր ուղտաների համար ջուր հանեց: Եղիազարը լուռ և մունջ, զարմացած նայում էր նորա արարմունքի վերայ: Երբ ուղտաներին ևս ջուր խմացրեց, Ռեբեկային մի դուռ ոսկեայ գինտ և երկու ապարանջան ընծայեց ու հարցրեց. «Ո՞ւմ աղջիկն ես դու, արդե՞օք քո հօր տանը կարելի է այս գիշեր հիւր մնալ»։ Նա պատասխանեց նորան. «Ես Բաթուէլի դուստրն եմ, մենք շատ խոտ և դարման ունինք քո ուղտաների, այլև տեղ իջեցնելու համար»։

Եղիազարը դարձաւ և Աստուծուն շնորհակալութիւն էր անում՝ ասելով. «Օրհնեալ է Աբրահամի Աստուածը, նա ինձ յաջողութեամբ առաջնորդեց գէպի իմ տիրոջ եղբօր տունը»։

Ռեբեկան վազեց և պատմեց մօրն այս բոլորը: Նա մի եղբայր ունէր Լաբան անունով: Երբ սա տեսաւ քրոջ գինտը և ապարանջանները, վազեց գէպի ջրհորը և ասաց այնտեղ եղող օտարականին. «Ո՛վ Աստուծոյ օրհնեալ մարդ, ի՞նչու ես մնացել այստեղ դուրսը, եկ մեր տուն»։ Նա առաջնորդեց Եղիազարին տուն, վեր առաւ ուղտաների բեռները ու կերակրեց նրանց, իսկ Եղիազարին ու նորա հետ եղող մարդկերանց համար ջուր բերեց ոտները լուանալու և յետոյ կերակուր ևս բերեց: Բայց Եղիազարը պատասխանեց. «Ես հաց չեմ ուտի մինչև իմ միտքը չյայտնեմ»։ Նրանք էլ ասացին. «Ասիր, ի՞նչ է քո մտքիդ»։ Եղիազարը պատմեց նրանց իւր ո՛վ լինելը, պատմեց թէ ո՛վ է իւր տէրը, թէ նա ի՞նչ յանձնարարութիւն է արել իրան, թէ ի՞նչ է աղօթել ջրհորի մօտ և թէ ի՞նչ հետեւանք է ունեցել նորա աղօթքը:

Բաթուէլը և Լաբանը պատասխանեցին. «Այդ Աստուծոյ կամքն է, մենք դորա դէմ ոչինչ չենք կարող ասել, վեր ա՛ռ Ռեբեկային և տա՛ր, թո՛ղ նա կին լինի քո տիրոջ որդուն, ինչպէս որ Աստուած կամեցել է»։ Այս խօսքերը լսելուց յետոյ, Եղիազարը ծունկ չոքեց Աստուծոյ առաջ և աղօթեց: Սորանից յետոյ Եղիազարը հանեց արծաթեայ և ոսկեայ անօթներ, նմանապէս և հանդերձներ ու տուեց Ռե-

բեկային, Լաբանին, այլև մօրը: Այնուհետև կերան, խմեցին թէ ինքը և թէ իւր մարդիկը ու յետո՞քնեցին: Առաւօտը վեր կացաւ Եղիազարը և ասաց. «Թող տուէ՛ք ինձ, որ տիրոջս մօտ գնամ»: Բայց Ռեբեկայի մայրը և եղբայրը պատասխանեցին. «Թող աղջիկը մի քանի օր ևս մնայ մեզ մօտ, յետոյ կարողես գնալ»: Նա պատասխանեց. «Աստուած իմ գործը յաջողել է, ինձ մի՛ ուշացրէ՛ք, թողէ՛ք որ ես գնամ»: Ծնողներն ասացին. «Կանչենք աղջկան և հարցնենք նրան ևս, տեսնենք նա ինչ կասէ»: Կանչեցին Ռեբեկային և հարցրին. «Կերթա՞ս այս մարդու հետ»: «Նա պատասխանեց. «Այո՛, կգնամ»: Այսպէս հեռացաւ Ռեբեկան իւր նաժիշտների և Աբրահամի ծառաների հետ: Նրանք օրհնեցին Ռեբեկային ու ասացին. «Թող քո ժառանգները հազարաւոր լինին»: Ռեբեկան իւր նաժիշտների հետ ուղտերի վերայ նըստեց ու ճանապարհ ընկան:

Իսահակը երեկոյեան ժամանակ դաշտ էր դուրս եկել զբօսնելու և ահա այստեղ նկատեց նա հեռուից, որ տասն ուղտաներ են գալի. Ռեբեկան ևս հեռուից Իսահակին նկատեց, իսկոյն ուղտից վայր իջաւ և հարցրեց ծառային. «Ո՞վ է այն մարդը, որը դաշտի միջով դէպի մեզ է գալի»: Ծառան պատասխանեց. «Նա իմ տէրն է»: Ռեբեկան իսկոյն առաւ իւր քողը և ծածկուեց նորանով: Ծառան պատմեց Իսահակին այն ամենը, ինչ որ նա խօսեցել էր: Իսահակը Ռեբեկային իւր մօր վրանը տարաւ և դառաւ նորա կինը ու շատ սիրում էր նորան:

«Յոյց ինձ ճանապարհ չոր գնացից, զի առ քեզ, Տէր, Համբարձի գանձն իմ»: Սաղ. ճխբ. 9.

Յոյց տո՛ւր ինձ այն ճանապարհը, Աստուած, որով ես պիտի գնամ, որովհետև իմ անձը դէպի քեզ բարձրացրի:

§ 16.

Աբրահամի մահը.

Աբրահամը իւր բոլոր հարստութիւնը Իսահակին տուեց և մեռաւ խորին ծերութեան մէջ: Նա 175 տարեկան էր:

Իսահակը թաղեց նորան կրկին այլի մէջ՝ Մամբրէի կաղնու մօտ, ուր թաղուած էր և նորա կին Սառան: Աբրահամի մահուանից յետոյ Աստուած օրհնեց Իսահակին:

«Երանի մեռելոցն, որք ի տէր ննջեցին»: Յայտ. Յովհ. Ժգ. 13.

Երանի այն մեռելներին, որոնք տիրոջ յուսով նընջեցին:

Բ.

Ի Ս Ո Ւ Ն Կ

§ 17.

Եսաւ և Յակովբ:

Իսահակը երկու որդի ունեցաւ, մեծի անունը Եսաւ էր, իսկ փոքրինը՝ Յակովբ:

Եսաւը թաւոտ էր և պարսպում էր որսորդութիւնով ու հողագործութիւնով, իսկ Յակովբը հան-

դարտ բնաւորութեան տէր լինելով՝ մնում էր տանը
և մօրը օգնում ընտանեկան գործերի մէջ. նա սի-
րում էր և հովուական կեանքը: Իսահակը Եսաւին
էր սիրում և նորա բերած որսի միսը մեծ խորթա-
կով ուտում էր, իսկ Ռեբեկան՝ Յակովբին:

Մի անգամ Յակովբը ոսպէ թան էր եփել,
Եսաւը դաշտից դադրած տուն վերադարձաւ և ասաց
Յակովբին. «Թոյլ տո՛ւր ինձ, եղբայր, քո ոսպէ թա-
նից ուտել»: Յակովբը պատասխանեց. «Ծախիր ինձ
վերայ քո անդրանկութիւնը, այն ժամանակ կտա-
նաս ոսպէ թանը»: Եսաւն ասաց ինքն իրան. «Ես սո-
վից մեռնում եմ, էլ ինչիս է պէտք անդրանկու-
թիւնը»: Յակովբն ասաց. «Ուրեմն երգուիր ինձ այ-
սօր, որ դու քո անդրանկութիւնից ձեռք ես վերց-
նում»: Եսաւը երգուեց և այսպէս վաճառեց իւր անդ-
րանկութեան իրաւունքը: Այնժամանակ Յակովբը
տուեց նորան իւր ոսպէ թանը: Եսաւը կերաւ և խմեց.
վերկացաւ տեղից ու գնաց: Այսպէս ծախեց Եսաւը
Յակովբին իւր անդրանկութիւնը:

«Զի՛ բարի կամ զի՛ վայելուչ, զի բնակին եղբարք
ի միասին»: Սաղ. ճլբ. 1.

Ինչ գեղեցիկ, ինչ վայելուչ բան կլինի, եթէ եղ-
բայրները միաբանութիւնով ապրեն:

§ 18.

Յակովբի խաբեբայութիւնը:

Իսահակը ծերացել էր—137 տարեկան էր, նորա
աչքերը լաւ չէին տեսնում. նա կանչեց Եսաւին ու

ասաց. «Ո՛րդի»: Եսաւը պատասխանեց. «Այստեղ եմ»: Իսահակն ասաց. «Ես արդէն ծերացել եմ, մեռնելուս
օրերը չգիտեմ, այսօր կամ վաղը գուցէ մահս մօտե-
նայ, ա՛ռ քո աղեղը և կապարճը, գնա՛ դաշտ, որսի
միս բեր ինձ համար ու խորտիկ պատրաստիր, որ
ուտեմ և օրհնեմ քեզ»: Ռեբեկան լսեց այս խօսքերը:
Եսաւը դաշտ գնաց, որսաց և տուն դարձաւ:

Ռեբեկան կանչեց Յակովբին իւր մօտ և ասաց.
«Ես լսեցի այն բոլորը, ինչ որ հայրդ Եսաւին պա-
տուիրեց. նա ասաց Եսաւին, գնա՛ դաշտ, որսի միս
բեր ուտեմ և քեզ օրհնեմ՝ քանի որ չեմ մեռել: Ու-
րեմն լիիր ինձ, շտապիր խաշների մօտ և երկու մա-
տաղ ուլ բեր, որպէսզի հօրդ համար նորա սիրական
խորտիկը պատրաստեմ: Այս կերակուրը կտանես նորա
մօտ, կուտէ և կօրհնէ քեզ մեռնելուց առաջ»: Յա-
կովբը պատասխանեց. «Իմ եղբայր Եսաւը թաւամաղ
է, իսկ ես լերկ, գուցէ հայրս ինձ շօշափէ, այնժա-
մանակ ես խաբեբայ կդուրս գամ նորա առաջ»: Մայրը
պատասխանեց. «Գնա՛ և այնպէս արա՛, ինչ-
պէս որ քեզ ասացի»:

Յակովբը դուրս գնաց, ուլերը բերեց ու մօրը
տուեց: Նա էլ նրանից կերակուր պատրաստեց, վեր
առաւ Եսաւի թանկագին շորերը, հագցրեց Յակով-
բին, ուլի մորթին էլ թւերին ու պարանոցին փա-
թաթեց, ուր որ լերկ էր և կերակուրն էլ ձեռին
տուեց: Յակովբը գնաց հօր մօտ և ասաց. «Հօ՛ւր»:
Նա պատասխանեց. «Այստեղ եմ. ո՞վ ես դու, որդեակ»:
Յակովբը պատասխանեց, «Քո անդրանիկ որդի Եսաւն
եմ, պատուէրդ կատարեցի, վեր կաց, նստիր, իմ բե-

րած խորտիկը կեր ու օրհնէր ինձ»։ Իսահակը հարցրեց. «Բայց այդ ինչպէս շուտ դտար որսը»։ Նա պատասխանեց. «Աստուած ինքն էր պատրաստել այդ»։

Այն ժամանակ Իսահակին ասաց նորան. «Մօտ արի՛, որդեանկ, որ քեզ շօշափեմ, տեսնեմ իմ որդի Եսաւն ես թէ ոչ»։ Յակովբը մօտեցաւ հօրը, շօշափեց նորան և ասաց. «Ձայնդ Յակովբի ձայնին է նման, իսկ ձեռքերդ Եսաւինն է»։ Հայրը չճանաչեց, որովհետեւ նորա ձեռները նոյնպէս թաւամաղ էին, ինչպէս Եսաւինը։ Բայց նա կասկածեց, ուստի մի անգամ էլ հարցրեց նորան. «Գու իմ որդի Եսաւն ես»։ Նա պատասխանեց. «Այո, ես եմ»։ Իսահակն ասաց. «Ուրեմն մօտ բեր քո պատրաստած խորտիկը»։ Յակովբը մօտեցրեց նորան կերակուրը, գինի ևս տուեց. նա կերաւ և խմեց։ Սորանից լեռոյ ասաց Իսահակը. «Մօտ եկ և համբուրէր ինձ, որդեանկ»։ Նա էլ մօտեցաւ և համբուրեց նորան։ Իսահակը հոտ առաւ նորա շորերից, օրհնեց և ասաց. «Իմ որդւոյ հօտը նման է Աստուծոյ օրհնած դաշտի հոտին, Աստուած թող քեզ երկնքից առատ ցող տայ, իսկ երկրիս վերայ քո արտերը գինիով և ցորենով առատանան. թող ազգերը քեզ ծառայեն, եղբայրներդ վերայ տէր եղին»։

Իսահակը Յակովբին օրհնեց, վերջացրեց. Յակովբը դեռ նոր էր հեռացել, որ Եսաւը որսից վերադարձաւ. նա նոյնպէս խորտիկ պատրաստեց և հօրը բերեց ասելով. «Հայր, վեր կաց և կեր քո որդու բերած խորտիկը և օրհնէր նորան»։ Իսահակը հարցրեց

նորան. «Ո՞վ ես դու»։ Նա պատասխանեց. «Քո անդրանիկ որդի Եսաւն եմ»։ Իսահակը շատ զարմացաւ այս բանի վերայ և ասաց. «Հապա ո՞վ էր այն որսորդը, որ մի փոքր առաջ ինձ համար խորտիկ բերեց, ես էլ կերայ ու օրհնեցի նորան»։

Երբ Եսաւը հօր այս խօսքերը լսեց, բարձր ձայնով աղաղակեց և դառնացած սրտով ասաց. «Հայր, ինձ ևս օրհնէր», իսկ Իսահակը պատասխանեց նորան. «Քո եղբայրը խորամանկ կերպով ինձ մօտ եկաւ և այն օրհնութիւնը, որը քեզ պիտի տայի, նա ստացաւ»։ Եսաւը պատասխանեց. «Մի՞թէ դու մի օրհնութիւն ունիս, Հայր, ինձ ևս օրհնէր»։ Նա բարձր ձայնով լաց էր լինում։ Իսահակը պատասխանեց և ասաց. «Թող քո բնական երկիրը ևս պտղաւետ լինի, միայն քո եղբոր իշխանութեան տակը կլինես»։

«Չար բիժ ի մարդ ստութիւն»։ Սիրաք ի. 26.

Սուտ խօսելը մարդու մէջ մի չար բիժ է։

Գ.

Յ Ա Կ Ո Վ Բ

§ 19.

Յակովբի փախուստը։

Եսաւը խիստ էր ատում Յակովբին, որովհետեւ նա խորամանկութեամբ իրան հասանելի հօր օրհնութիւնը ստացաւ. նա ասում էր. «Հայրս ծերացել է, մահուան օրերը մօտեցել են, երբ կմեռնի, ես կսպանեմ Յակովբին»։

Այս խօսքերն Ռեբեկայի ականջն ընկան, ուստի Յակովբին իւր մօտ կանչեց և ասաց. «Քո եղբայր Եսաւը մտածում է քեզ սպանել, փախիր, գնա Խառան իմ եղբայր Լաբանի մօտ, մինչև որ եղբորդ բարկութիւնը կանցնի, յետոյ ես մարդ կուղարկեմ քեզ իմաց անելու»: Ռեբեկան խօսեց այդ մասին Խառակի հետ. նա էլ Յակովբին կանչեց, որն արդէն 77 տարեկան էր՝ դեռ չամուսնացած ու ասաց. «Գնա Միջագետք Բաթուելի տունը և ամուսնացիր Լաբանի աղջիկներից մէկի հետ, որպէսզի դու էլ իմ սրտին ցաւ չպատճառես, ինչպէս Եսաւը, որը քանանացւոյ աղջիկներից իրան համար կին ընտրեց. թող ամենակարող Աստուածը օրհնէ քեզ, բազմացնէ քո ժառանգները և Աբրահամի օրհնութիւնը քեզ վերայ թափէ»: Յակովբը լսեց իւր հօր և մօր խօսքին և հեռացաւ այնտեղից դէպի Միջագետք:

«Իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հատուցից՝ ասէ Տէր»: Թ. ա. Հովմ. բժ. 19.

Վրէժխնդրութեան իրաւունքը իմնէ, ես պէտք է հատուցանեմ, ասում է Աստուած:

«Զի արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է»: Ի. Տիմոթ. գ. 10.

Քոյր չարութիւնների պատճառը արծաթսիրութիւնն է:

«Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»: Թ. Յակ. ա. 20.

Բարկացած մարդը Աստուծոյ նման արդար բան չի գործի:

§ 20.

Յակովբի տեսիլքը:

Յակովբը դուրս եկաւ Բերսաբէից և գնաց Խառան. արևը մտնելու ժամանակն էր, որ մի քար վեր առաւ, դրեց գլխի տակը և հանգստացաւ:

Նա այստեղ տեսիլքում տեսաւ մի սանդուղտ, որի մի ծայրը երկնքումն էր, իսկ միւսը՝ երկրիս վերայ և որի վերայով Աստուծոյ հրեշտակները բարձրանում և իջնում էին: Ինքն Աստուած այդ սանդուղտի վերևում կանգնած՝ ասում է. «Ես եմ Աբրահամի և Խառակի Աստուածը, այս երկիրը, ուր որ դու գտանվում ես, քեզ և քո ժառանգներին եմ տալի. քո ժառանգները ծովի աւազի նման կբազմանան և կտարածուին դէպի արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս. քեզանով կօրհնուին բոլոր ազգերը երկրիս վերայ: Ես քեզ հետ կլինեմ և քեզ կպաշտպանեմ, ուր որ էլ դու գնալու լինիս. ես քեզ նորից այս երկիրը յետ կբերեմ»:

Երբ Յակովբը քնից զարթեց, ասաց. «Անկասկած Աստուած այստեղ է և ես այդ չգիտէի»: Նա վախեցաւ և ասաց. «Այս տեղը սուրբ է, այստեղ Աստուծոյ տունն է, այստեղը երկնքի դուռն է»: Յակովբը վեր առաւ այն քարը, որի վերայ քնել էր և արձան կանգնացրեց, իւղ ածեց նորա վերայ և այն տեղը տուն Աստուծոյ անուանեց:

Յակովբը ուխտեց այստեղ և ասաց. «Աստուած ինձ հետ կլինի. նա կպաշտպանէ ինձ և ճանապարհները կցոյց տայ, ուր որ ես գնալու լինեմ. նա ինձ

ուտելու հաց կտայ և հագնելու շոր. նա ինձ յաջողութեամբ և ողջ հայրենիք կվերադարձնէ, դորա համար էլ տէրն է իմ Աստուածը. այն քարը, որ ես արձան կանգնացրի, Աստուծոյ տուն կկոչուի:

«Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազում ողորմ»: Սաղ. ճբ. 8.

Գթած, համբերող և ողորմած է Աստուած:

«Թէպէտ եւ գնացից ես իմէջ ստուերաց մահու, ոչ երկեաց իչարէ՛ գի դու, Տէր, ընդիս ես: Յուպքո եւ գաւազան, նոքա մխիթարեացեն գիս»: Սաղ. իբ. 8.

Եթէ մութը հովիտների միջով էլ գնալու լինեմ, էլի չեմ վախենալ չարից, որովհետեւ դու իմ հետն ես, Աստուած, քո գաւազանը ինձ կպաշտպանէ:

§ 21.

Յակովբը Լաբանի մօտ:

ա.

Յակովբը վերկացաւ տեղից և գնաց գէպի արևելք՝ իւր մօրեղբայր Լաբանի մօտ: Դաշտի մէջ մի ջրհոր տեսաւ, որի շուրջը երեք ոչխարի հօտեր մակաղած էին ու մի մեծ քար էլ նորա բերանին ձգած: Յակովբն ասաց հովիւներին. «Ո՛րտեղացի էք, եղբայրներ»: Նրանք պատասխանեցին. «Խառանիցն ենք»: Յակովբը հարցրեց. «Ճանաչում էք Բաթուելի որդի Լաբանին»: Նրանք պատասխանեցին. «Այո, մենք նորան լաւ ենք ճանաչում, ահա նորա աղջիկ Հռաքէլն էլ գալիս է իւր ոչխարների հետ»: Յակովբը Հռաքէլին տեսնելուն պէս, իսկույն մօտեցաւ, վեր-

առաւ ջրհորի վերայի քարը և ոչխարներին ջուր խմացրեց: Յակովբը համբուրեց Հռաքէլին, բարձր ձայնով լաց եղաւ ու յայտնեց նորան, որ ինքը Ռեբեկայի որդին է: Հռաքէլը տուն վազեց՝ այս լուրը հօրը հաղորդելու համար: Երբ Լաբանն իմացաւ իւր քեռորդի Յակովբի գալուստը, շտապեց գէպի նա, գրկեց նորան, համբուրեց ու տարաւ իւր տուն: Յակովբը պատմեց Լաբանին ինչ որ իւր գլխովն անցել էր:

բ.

Մի ամիս անցնելուց յետոյ՝ Լաբանն առաց Յակովբին. «Թէեւ դու իմ ազգականն ես, բայց և այնպէս չէի կամենայ, որ ինձ ձրի ծառայես. ասա, ինչ է քո աշխատանաց վարձը»: Լաբանը երկու աղջիկ ունէր—մեծի անունը Լիա, իսկ փոքրինը՝ Հռաքէլ: Լիան տգեղ էր, իսկ Հռաքէլը գեղեցիկ. Յակովբը Հռաքէլին հաւանում էր, դորա համար էլ ասաց Լաբանին. «Ես քեզ եօթը տարի կծառայեմ, եթէ Հռաքէլին ինձ կտաս»: Լաբանը պատասխանեց. «Զատ բարի, աւելի լաւ է քեզ տամ, քան թէ մի ուրիշին. կ'աց ինձ մօտ»: Յակովբը եօթը տարի ծառայեց Լաբանին: Այս երկար ժամանակն այնպէս շուտ անցաւ, կարծես թէ մի օր լինէր, որովհետեւ նա սիրում էր Հռաքէլին:

Երբ եօթը տարին անցաւ, Լաբանը կանչեց իւր մօտ բոլոր գիւղացիներին ու հարսանիք արաւ, բայց փոխանակ Հռաքէլին՝ Լիային տուեց որպէս կին: Այն ժամանակ Յակովբն ասաց Լաբանին. «Ի՞նչու խաբեցիր ինձ, ես քեզ Հռաքէլի համար եօթը տարի ծառայեցի և ոչ թէ Լիայի»: Լաբանը պատաս-

խանեց. «Մեր երկրում սովորութիւն չկայ, որ փոքր քոյրը մեծից վաղ մարդու գնայ, եթէ դու ինձ նորից եօթը տարի կճառայես, Հռաքելին էլ կտամ»: Յակովբը եօթը տարի ևս ծառայեց ու Հռաքելին էլ կին առաւ:

Յակովբը շատ որդիք ունեցաւ: Նա Լաբանին վեց տարի ևս ծառայեց ու ստացաւ նորանից շատ ոչխարներ. ունէր նաև բազմաթիւ ծառաներ, աղախիններ, ոչխարներ, ուղտաներ և իշաներ:

«Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ»: Թ. ա. եբր. Ժբ. 6.
Աստուած ումը որ սիրում է, խրատում է (պատ-
ժում է) նորան:

§ 22.

Յակովբը փախչում է Լաբանի մօտից:

Լաբանի որդիները տրտնջում էին Յակովբից— նրանք ատում էին. «Մեր հօր կայքը Յակովբն իրան սեպհականեց, մեր հօր կայքով նա այդպէս հարստացաւ»: Յակովբն ինքը ևս նկատում էր այդ ներքին տրտնջը: Բացի այդ՝ Լաբանն ինքն էլ այնպէս չէր վարվում նորա հետ, ինչպէս առաջ, դորա համար Աստուած ասաց Յակովբին. «Պարձիր քո հօր երկիրը, ես քեզ հետ կլինեմ, ես քեզ կպաշտպանեմ»: Յակովբը պատմեց այս բանը Լիային և Հռաքելին. նրանք էլ ասացին. «Արա՛, ինչպէս որ Աստուած հրամայել է»: Այսպէս Յակովբը վեր առաւ իւր երեխաներն ու կանայքը, նստացրեց ուղտաների վերայ, առաւ խաշ-

ներն ու բոլոր հարստութիւնը և ճանապարհ ընկաւ դէպի իւր հօր երկիրը՝ Քանան:

Այդ ժամանակ Լաբանը գնացել էր ոչխարները խուզելու, երբ Յակովբը ծածուկ, առանց նորան իմաց տալու, առաւ իւր ունեցած-չունեցածը, գետն անցաւ և գնաց դէպի Քաղաատու լեռուն:

Երրորդ օրը Լաբանն իմացաւ, որ Յակովբը փախել է, ուստի առաւ իւր եղբայրներին և սկսեց նորա յետևիցն ընկնել: «Եօթն օրից յետոյ հասաւ նորան Քաղաատու լեռների մօտ: Աստուած երազի մէջ զգուշացրեց Լաբանին ու ասաց. «Զգո՛յշ կաց, Յակովբի հետ սիրով վարվիր»: Լաբանը մօտեցաւ Յակովբին ու հարցրեց. «Ի՞նչու համար դու այդպէս ծածուկ հեռացար ու ինձ ոչինչ չասացիր. ես քեզ երգով, թմբուկով և քնարով ճանապարհ կձգէի. ի՞նչու համար իմ աղջիկները և թուռները առանց հրաժարական համբոյրի հեռացրիր: Քո արածը լաւ բան չէ. ես եթէ կամենայի, կարող էի քեզ վնասել, բայց Աստուած զգուշացրեց ինձ ասելով. «Զգո՛յշ կաց, Յակովբի հետ սիրով վարվիր»:

Յակովբը խիստ բարկացաւ Լաբանի յանդիմանական խօսքերի վերայ ու ասաց. «Ի՞նչ եմ արել քեզ, որ այդպէս բարկացած յետևիցս ես ընկել. քսան տարի քեզ ծառայեցի, այդքան այժ և ոչխար որ դու ունիս, բոլորն էլ իմ քրտնքի պտուղներն են. ինչ որ գազանները յափշտակում, պատառում էին, այն էլ ինձնից էիր պահանջում. ցերեկները արևակէզ էի լինում, իսկ գիշերները ցրտից չորանում, աչքս երբեք քուն չէ մտել: Այս ձևով ես քսան տարի քո

տանը ծառայել եմ—տասն և չորս տարի քո աղջիկներին, իսկ վեց տարի քո խաշներին համար: Այդ ժամանակամիջոցում դու իմ վարձի պայմանները տասն անգամ փոխեցիր: Եթէ Աբրահամի և Իսահակի Աստուածը ինձ հետ չէր եղել, ինձ դատարկ ճանապարհ կղնէիր: Աստուած իմ քաջած չարչարանքներն ու նեղութիւնները տեսել է ու դուրս համար էլ քեզ զգուշացրել:

Լաբանը պատասխանեց. «Աղջիկները իմ աղջիկներն են, թոռները իմ թոռներն են և խաշները իմ խաշներն են. այդ ամենը ինչ որ դու ունիս, իմն է: Ես ինչ կարող եմ աղջիկներին և իմ թոռներին անել. ամենից լաւն այն է որ մենք դաշը կապենք»: Յակովբը ու Լաբանը Աստուծոյ առաջ երդում կերան և դաշը կապեցին, որ այդ տեղից դէնը ոչ մէկն իրաւունք չունենայ անցնել: Գաղատա լեռը սահման եղաւ. պայմաններից մէկն էլ այն էր, որ Յակովբը Լաբանի աղջիկներին չպէտք է նեղացնէր: Յակովբը լեռան վերայ զոհ արեց և իւր եղբայրներին հացի հրաւիրեց: Ամէնքն էլ գիշերն այնտեղ մնացին: Առաւօտը Լաբանը վեր կացաւ, համբուրեց աղջիկներին և թոռներին, օրհնեց նրանց և յետ դարձաւ տուն: Յակովբը շարունակեց իւր ճանապարհը:

«Զի արմատ ամենայն չարեաց՝ արձաթսիրութիւն է»: Ի. Տիմոթ. գ. 10.

«Զի տեսանես զշիւղ յական եղբօր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսանես»: Մատ. է. 3.

Ի՞նչու քո եղբօր աչքի շիւղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ:

«Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Մատ. գ. 12.

Մեր սխալանքը ներքի, որպէսզի մենք էլ մեզ դէմ մեղանշողներին ներենք:

§ 23.

Եսաւի և Յակովբի հաշտութիւնը:

Յակովբը դեսպաններ ուղարկեց Եդոմ (Սէիր) երկիրը՝ Եսաւի մօտ: Նա պատուիրեց նրանց այսպէս ասելու. «Քո ծառայ Յակովբը այսքան ժամանակ Լաբանի մօտն էր. նա մեզ քեզ մօտ է ուղարկել և քեզանից շնորհ է խնդրում»: Դեսպանները դարձան և ասացին. «Մենք զնացինք քո եղբայր Եսաւի մօտ. նա չորս հարիւր մարդով գալիս է քեզ գիմաւորելու»: Յակովբը շատ վախեցաւ այս բանից, թէ իւր ծառաներին և թէ խաշները երկու մասնի բաժանեց՝ այն մտքով որ եթէ եղբայրը մի մասնի վերայ յարձակուի, միւսը կարողանայ ազատել:

Յետոյ Յակովբն աղօթեց և այսպէս ասաց. «Ով Աբրահամի և Իսահակի Աստուած, դու ինձ հրամայեցիր հայրենի երկիրս վերադառնալ. խոստացար ինձ պաշտպանել. քո ծառան, որին այսքան բարութիւն ես արել, արժանի չէ այդ շնորհին. մի գաւազան ունէի ձեռիս, երբ, սորանից քսան տարի առաջ, Յորդանանն անցայ, իսկ այժմ երկու աճրողջ հօտի տէր եմ: Ազատիր ինձ, ով Աստուած, իմ եղբայր Եսաւի ձեռքից, նորանից վախենում եմ ես, մի գուցէ նա ինձ սպանէ, նոյնպէս կանանցս և որդւոցս:

Յակովբը ընծաներ որոշեց իւր եղբօր համար—

ջոկեց բաւականին այծեր, ոչխարներ, ուղտաներ, կովեր, յանձնեց ծառաներին ու ասաց. «Գուք իմ առաջովս գնացէ՛ք, մի հօտը միւսի հետ մի խառնէ՛ք, միմեանցից փոքր ինչ հեռու քշեցէ՛ք»։ Յակովբը առաջևից գնացող ծառաներին պատուիրեց ու ասաց. «Եթէ Եսաւ եղբայրս քեզ հանդիպէ ու հարցնէ, ո՞վ ես դու, ո՞ր ես գնում կամ ո՞ւմ եմ պատկանում այդ կենդանիները, որ դու քշում ես, այսպէս կասես, թէ այդ բոլորը քո ծառայ Յակովբին է պատկանում, նա ընծայ է ուղարկում այս բոլորը իւր տէր Եսաւին ու ինքն էլ յետևից գալիս է»։ Այսպէս էլ պատուիրեց միւսին, երրորդին և բոլորին, որոնք հօտի յետևից գնում էին։ Յակովբն այսպէս էր մտածում, եթէ ես նախապէս ընծաներով նորա սիրտը շահեմ, յետոյ՝ երբ կտեսնուինք, թերևս չմերժի իւր տեսակցութիւնը։

Յակովբն առաւօտը վաղ վեր կացաւ, առաւ իւր կանանց ու որդւոց և գնաց Եսաւի առաջ։ Յակովբը վեր նայեց և տեսաւ, որ եղբայրը չորս հարիւր մարդկանցով իւր առաջն է գալի։ Իսկոյն որդիքը մայրերին յանձնեց, ինքն առաջ գնաց և մինչև Եսաւին հասնիլը եօթն անգամ ծնկաչոք գլուխ տուեց։ Եսաւն այս տեսնելուն պէս՝ յառաջ վազեց, գրկեց Յակովբին, վզովն ընկաւ ու համբուրեց նրան—երկուսն էլ լալիս էին։ Եսաւը վեր նայեց, տեսաւ կանանցը և որդւոց ու հարցրեց. «Ո՞վքեր են սրանք»։ Յակովբը պատասխանեց. «Իմ որդիքն են, որոնք Աստուած ինձ ընծայել է»։ Այնժամանակ ամենքն էլ մօտեցան և գլուխ տուին Եսաւին։ Եսաւը հարցրեց, «Ի՞նչու հա-

մար էին այդ խաշները, որ առաջովս անցան»։ Յակովբը պատասխանեց. «Որպէսզի քո ծառայ Յակովբը կարողանայ շնորհ գտնել քո առաջ»։ Եսաւն ասաց. «Ես իմ ունեցածովս գոհ եմ, կարիք չունիմ, քեզ լինի քո ունեցուածքը»։ Բայց Յակովբն այնքան ստիպեց Եսաւին, մինչև որ ընդունեց։

Եսաւն ասաց. «Հտապենք միասին հեռանալ այստեղից, ես քեզ հետ կամենում եմ գնալ»։ Յակովբը պատասխանեց. «Ծծկեր մանուկներ ունիմ, ոչխարները և արջառները ևս նոր են ծնել, եթէ ստիպեմ աւելի ճանապարհ կտրելու, բոլորն էլ կկոտորուին. լաւ կլինի որ դու առաջ գնաս, իսկ ես կամաց-կամաց յետևիցդ կգամ մինչև Եդոմ»։ Եսաւն ասաց. «Եթէ այդպէս է, իմ մարդկանցից մի քանիսը քեզ մօտ կ[թողնեմ]»։ Յակովբը պատասխանեց. «Ի՞նչու ես այդքան նեղութիւն կրում. քո շնորհ բերելն էլ ինձ բաւական է»։ Այսպէս Եսաւը կրկին Եդոմ դարձաւ։ Յակովբը չուեց դէպի Սիւքէմ, այնտեղից անցաւ Բեթէլ և Տիրոջ համար սեղան պատրաստեց։ Նրանք մի փոքր ևս յառաջ գնացին. այստեղ Հռաքէլը մեռաւ. Յակովբը թաղեց նորան և վերան մի արձան կանգնացրեց։ Յակովբը եկաւ իւր հայր Իսահակի մօտ, որը բնակվում էր Մամբրէեում, ոչ հեռի Քեբրոնից։ Իսահակը ծերացել էր—նա մեռաւ հարիւր և ութսուն տարեկան հասակում. նորա որդիները՝ Եսաւն ու Յակովբը թաղեցին Իսահակին Աբրահամի գնած կրկին այրի մէջ։ Եսաւը բնակվում էր Եդովմի լեռների վերայ, իսկ Յակովբը՝ Քանանում՝ իւր հօր երկրում։

«Եւ թող մեզ զգարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Մատ. գ. 12.

«Կարդացես առիս յառուր նեղութեան քո. ես փրկեցից զքեզ, եւ դու փառաւոր արասցես զիս»: Սաղ. խթ. 15.

Նեղն ընկած ժամանակդ եթէ ինձ օգնութեան կանչես, ես քեզ կազատեմ և դու իմ անունը կփառաւորես:

Գ.

Յ Ո Վ Ս Է Փ.

Յովսէփը և իւր եղբայրները:

ա.

Յակովբը տասն և երկու որդի ունէր: Նոցանից վերջին երկուսի անուններն էին Յովսէփ և Բենիամին: Որոնք Հռաքելիցն էին ծնած: Յովսէփը տասն և եօթը տարեկան էր, երբ եղբայրների հետ ոչխարներ էր արածացնում: Նա պատմում էր հօրը այն բոլոր սխալ բաները, որոնք եղբայրները գործում էին: Յակովբը Յովսէփին բոլոր որդկերանցից աւելի էր սիրում—նորա համար ծաղկեայ պատմութեան կարել տուեց: Եղբայրները, երբ նկատեցին, որ հայրը Յովսէփին իրանցից աւելի է սիրում. սկսեցին նախանձել նորա վերայ և սիրով չէին խօսում նորա հետ:

Յովսէփը մի անգամ երազ տեսաւ ու պատմեց եղբայրներին: Նա ասում էր. «Մենք դաշտում որաներ էինք կապում. իմ կապած որաները ուղիղ կանգնեցին, իսկ ձեր որաները իմերին երկրպագութիւն էին տալիս»: Եղբայրները պատասխանեցին. «Մի՞թէ

կամենում ես թագաւոր լինել մեզ վերայ»: Այս բանի համար եղբայրները աւելի սկսեցին ատել Յովսէփին: Նա մի ուրիշ երազ ևս տեսաւ ու նմանապէս պատմեց եղբայրներին. «Ես տեսայ երազումս, որ արևը, լուսինը և տասն ու մի աստղեր ինձ երկրպագութիւն էին տալիս»: Երբ այս բանը նորա հայրն իմացաւ, բարկացաւ և ասաց. «Այդ ինչ երազ է, մի՞թէ ես, մայրդ, եղբայրներդ պէտք է գանք և քեզ երկրպագութիւն տանք»: Եղբայրների ատելութիւնը աւելի և աւելի զօրացաւ. իսկ հայրն այդ բոլորը դէտում էր և ծածուկ իւր մէջ պահում:

բ.

Յովսէփի եղբայրները մի անգամ Սիւքէմ գնացին իրանց հօր խաշները արածացնելու համար: Սուրանից լետոյ Յակովբն ասաց Յովսէփին. «Գնա՛ եղբայրներիդ մօտ և իմացի՛ր. թէ ինչպէս է նրանց առողջութիւնը, ինչպէս են ոչխարները ու ինձ անձամբ համբաւ բեր»: Յովսէփը գնաց: Երբ եղբայրները հեռուից տեսան նորան, սկսեցին միմեանց հետ փրսփրսալ ու ատել. «Ահա՛ երազատեսը գալիս է, եկէ՛ք նորան սպանենք, ձգենք մի փոսի մէջ և ասենք մեր հօրը, թէ չար գաղանները նորան պատառել են, տեսնենք ինչ կլինին նորա երազները»: Ռուբէնը, որ մեծ եղբայրն էր, երբ այս բանը լսեց, ասաց. «Մի՛ սպանէք գորան, արիւն մի՛ թափէք, այլ ձգեցէ՛ք այս անսպառի փոսերից մինի մէջ»: Նորա միտքն այն էր, որ Յովսէփին ազատէ դրանց ձեռներից ու հօրը տանէ: Երբ երազատեսը եղբայրների մօտ եկաւ,

Հանեցին նորա ծաղկեալ պատմութեանը և ձգեցին մի անջուր փոսի մէջ, յետոյ Հացի նստեցին:

Այդ միջոցին տեսան որ մի խումբ իսմայէլացի վաճառականներ գալիս են իրանց ուղտաներով խունկ, ստաշխն և ռետին էին տանում Եգիպտոս: Յուդան խօսեց եղբայրների հետ ու ասաց. «Ի՞նչ շահ մեզ մեր եղբոր սպանելուց, եկէ՛ք ծախենք նորան իսմայէլացի վաճառականներին. մեր ձեռքը թող նորան չդիպչի»: Այս մտքին ամենքն էլ հաւանեցան—Յովսէփին դուրս հանեցին փոսից և քսան դահեկանով նոցա վերաջ ծախեցին: Ռուբէնն այդտեղ չէր: Երբ փոսի մօտ եկաւ ու Յովսէփին այնտեղ չգտաւ. պատառեց իւր շորերը, եկաւ եղբայրների մօտ և ասաց. «Պատանին փոսի մէջ չէ, ո՞ւր գնամ, ո՞ւր փնտռեմ նորան»:

Յետոյ եղբայրները մի ուլ մորթեցին, Յովսէփի շորերը նորա արեան մէջ թաթախեցին ու հօրն ուղարկեցին ասելով. «Այս միայն գտանք. տես, սա է քո որդու պատմութեանը, թէ ոչ: Հայրն իսկույն ճանաչեց և ասաց. «Սա իմ որդու պատմութեանն է, չար գազանը նորան պատառել է. չար գազանը նորան յափշտակել է»:

Յակովբը պատառեց իւր շորերը և սև հագաւ ու երկար ժամանակ սգում էր իւր որդու մահը: Նորա բոլոր որդիքը գալիս էին նորան մխիթարելու, բայց նա չէր կարողանում մխիթարուիլ ու ասում էր. «Այս ցաւովն էլ ես պէտք է գերեզման իջնեմ իմ որդու մօտ»: Այսպէս էր ողբում նորան իւր հայրը:

«Ամենայն որ ատեալ գեղբայր իւր՝ մարդասպան է»: I. Յովհ. գ. 13.

§ 25.

Յովսէփը Պետափրէսի տանը:

Վաճառականները Յովսէփին Եգիպտոս տարան. Պետափրէս անունով մինը, որը Փարաւոնի մօտ դահապետի պաշտօն էր վարում, գնեց իսմայէլացիներէց—Աստուած Յովսէփի հետն էր. ինչ որ նա անում էր, յաջողում էր նորան, այնպէս որ շուտով Պետափրէսի սիրելին դարձաւ: Նա իւր տան բոլոր կառավարութիւնը նորան յանձնեց. «Աստուած օրհնեց եգիպտացու տունը Յովսէփի պատճառով:

Մի քանի ժամանակից յետոյ Յովսէփի և Պետափրէսի կնոջ մէջ անհամաձայնութիւն պատահեց. կինը մարդուն դանգատուեց երբայցեցի ծառայից ու նա էլ հրամայեց նորան բանտ նստացնել:

«Զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ ոչ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր»: Եսայի ծէ. 8.

Իմ մտածմունքները ձեր մտածմունքների նման չեն և ոչ իմ ճանապարհները ձեր ճանապարհների նման:

«Եւ յիշեան դու զՏէր Աստուած քո զամենայն աւուրս կենաց քոց, եւ մի մեղանչիցես դու եւ կամ անցանիցես պատուիրանօք նորա»: Տովբ. դ. 6.

Քո ամբողջ կեանքիդ ընթացքում Աստուծուն աչքիդ առաջ և սրտիդ մէջ ունեցիր. հսկիր քեզ, որ յանցանք չգործես և Աստուծոյ պատուիրանքից չանցնես:

§ 26.

Յովսէփի բարձրանալը:

ա.

Աստուած Յովսէփին պաշտպանում էր, բանտապետի աչքը քաղցրացրեց նորա վերայ: Սա բոլոր յանցաւորներին և բանտը Յովսէփին էր յանձնել. Յովսէփին էր այնտեղ ամենայն բան կարգադրողը և ինչ որ կարգադրում էր, Աստուած էլ նորան յաջողում էր:

Մի քանի ժամանակից յետոյ պատահեց որ թագաւորի տակառապետը և մատակարարը յանցանք գործեցին իրանց տիրոջ դէմ: Թագաւորը երկուսի վերայ ևս խիստ բարկացաւ և հրամայեց նրանց բանտն ուղարկել. այդ գիշեր նրանք երկուսն էլ երազ տեսան: Հետեւեալ օրն առաւօտը Յովսէփը նրանց մօտ եկաւ և շատ տխուր տեսնելով, հարցրեց. «Ի՞նչ է պատճառը, որ այդպէս տխուր էք»: Նրանք պատասխանեցին. «Երազ ենք տեսել. ոչ ոք չկայ որ մեկնել կարողանայ»: Յովսէփին ասաց. «Երազի մեկնութիւնը Աստուծոյ գործն է, բայց և այնպէս պատմեցէք ինձ»:

Տակառապետը առաջինն սկսեց պատմել իւր երազը. «Ես տեսայ երազումս մի որթ. նորա վերայ երեք հասած ողկոյղներ կային. Փարաւոնի բաժակը ձեռիս էր. ողկոյղի հատիկները ճմլում էի բաժակիս մէջ, և Փարաւոնին էի մատուցանում»: Յովսէփը պատասխանեց նորան. «Քո երազի մեկնութիւնն այս է—երեք ողկոյղները երեք օր են նշանակում, որից յետոյ թագաւորը կրկին կցանձնէ քեզ քո պաշտօնը:

Միայն երբ քո գործքը յաջող անցնի, չմոռանաս ինձ—թագաւորին միջնորդիր որ ինձ բանտից ազատէ:

Ես յանցանք չունիմ. ես երբայեցող երկրիցն եմ. ինձ գողացան Եգիպտոս բերին. այստեղ էլ ոչինչ յանցանք չեմ գործել. ինձ իզուր տեղը բանտ նըստացրին»:

Մատակարարը երբ տեսաւ որ Յովսէփը իւր ընկերի երազին գեղեցիկ մեկնութիւն տուեց, սկսեց ինքն էլ պատմել. «Ես էլ տեսայ երազումս երեք խան գլխիս դրած. վերին խանի մէջ հացագործի պատրաստած թագաւորի սիրած ամեն տեսակ կերակուրներն էին. այս վերին խանի կերակուրներից գալիս և ուտում էին թռչունները»: «Քո երազի մեկնութիւնն էլ այս է—երեք խաները երեք օր են նշանակում, երեք օրից յետոյ Փարաւոնը գլուխդ կտրել կտայ, քեզ փայտից կկախեն, թռչունները կգան և քո մարմինը կուտեն»:

Իսկ երեք օր այդ բանից յետոյ թագաւորի ծրնրնդեան տօնն էր. մեծ խնջոյք պատրաստել տուեց ծառաների համար: Թագաւորն ուրախութեան մէջ յիշեց տակառապետին և մատակարարին ևս—առաջինին իւր նախկին պաշտօնը շնորհեց, իսկ երկրորդին՝ փայտից կախել տուեց, ինչպէս որ Յովսէփին էր ասել. սակայն տակառապետը չյիշեց Յովսէփին—մուացաւ նորան:

բ.

Երկու տարուց յետոյ Փարաւոնը մի երազ տեսաւ, որպէս թէ գետի ափում կանգնած է. գետի միջից դուրս եկան եօթն գեղեցիկ և գեր երինջներ

ու սկսեցին մարգագետնի վերայ արածել: Սորանից յետոյ տեսաւ եօթն ուրիշ տղեղ և վտիտ՝ լղար երինջներ, որոնք դուրս եկան և կուլ տուին այն եօթն գեղեցիկ և գեր երինջներին: Փարաւոնը զարթեց ու նորից քնեց:

Երկրորդ անգամ երազ տեսաւ, որպէս թէ մի փնջից եօթն գեղեցիկ ու ընտիր հասկեր դուրս եկան:

Պորանից յետոյ տեսաւ եօթն ուրիշ ազագուն, խորշակահար հասկեր էլ դուրս եկան և նախկին եօթն գեղեցիկ և ընտիր հասկերին կուլ տուին: Փարաւոնը երբ զարթեց, շփոթուեց: Իսկոյն կանչել տուեց Նգիպտոսի երազահաններին և իմաստուն մարդկանց ու պատմեց նրանց իրա տեսած երազները, բայց ոչ ոք չկարողացաւ մեկնել:

Այն ժամանակ թագաւորի տակառապետն ասաց. «Այսօր ես իմ յանցանքը յիշեցի—երբ թագաւորը ինձ և մատակարարին բանտարկել տուեց, գիշերը երկուսս էլ երազ տեսանք: Մեզ մօտ մի երբայեցի տղայ եկաւ, մեր երազը մեկնեց և ինչպէս որ մեկնեց, այնպէս էլ կատարուեց—ես կրկին իմ պաշտօնն ստացայ, իսկ մատակարարը փայտից կախուեց»:

Թագաւորն իսկոյն կանչել տուեց Յովսէփին. նորան բանտից դուրս բերին. ածիլուեցաւ. ճոր շորեր հագաւ, և Փարաւոնին ներկայացաւ: Թագաւորն ասաց նորան. «Ես երազ եմ տեսել. ոչ ոք չէ կարողանում մեկնել, ինձ պատմեցին որ եթէ դու երազս լսես, կարող ես մեկնել»: Յովսէփը պատասխանեց. «Ես ինքս, տէր արքայ, ոչինչ չեմ կարող անել, այդ Աստուծոյ գործն է»:

Փարաւոնը պատմեց Յովսէփին իւր երազը: Յովսէփը պատասխանեց. «Երկու երազներն էլ միեւնոյն նշանակութիւնն ունին—Աստուած դորանով իւր անելիքը յայտնում է Փարաւոնին. եօթն տարի Նգիպտոսում լիութիւն և առատութիւն կլինի, իսկ դորան կհետեւին եօթն սովի տարիները. առատութեան տարիները կմոռացուին, սովը կսպառէ ամբողջ երկիրը: Ինչ որ վերաբերում է նորան, որ թագաւորը միեւնոյնը երկրորդ անգամն է տեսել, նշանակում է Աստուած կամենում է յայտնել, որ այդ իրողութիւնը անշուշտ կը կատարուի և շուտով: Ուրեմն, թագաւոր, պէտք է մի խելօք մարդ գտնել և Նգիպտոսի կառավարիչ նշանակել, որպէս զի առատութեան եօթն տարիներում կերակրի պաշար հաւաքէ՝ եօթն սովի տարիների համար և երկիրը սովի ձեռից ազատել կարողանայ»:

Այս բանին թէ թագաւորը և թէ նորա բոլոր ծառայողները խիստ հաւանեցան: Յետոյ Փարաւոնն ասաց Յովսէփին. «Էլ ո՞վ պէտք է լինի քեզանից խելօքը և իմաստունը. ամբողջ Նգիպտոսը քեզ եմ յանձնում—իմ բոլոր հպատակները քեզ կլսեն՝ այն զանազանութեամբ, որ ես քեզանից մեծ կլիշուիմ»:

Սորանից յետոյ Փարաւոնը հանեց մատանին իւր մատից և Յովսէփի մատը դրեց. նորան բեհեզեայ շորեր հագցնել տուաւ և ոսկեայ մանեակն էլ վզից կախեց: Իւր կառքի մէջ նստացնել տուաւ և մունետիկների բերանով բարձրաձայն հրատարակեց ասելով. «Ծուռնկ չոքեցէք»: Փարաւոնը Յովսէփին եգիպտական անուն տուեց՝ Փսոմփթիմբանէ՝ այսինքն աշ-

խարհի ազատիչ. քուրմերի աղջիկներից մէկի հետ էլ պսակեց: Յովսէփը երկու որդի ունեցաւ, մինի անունը Յփրեմ, իսկ միւսինը Մանասէ գրեց:

Յովսէփը երեսուն տարեկան էր որ այդ պաշտօնն ստացաւ: Լիւթեան այդ եօթը տարիներում երկիրը լքցուեց ամեն տեսակ բարիքներով: Յովսէփը ժողովել տուեց եօթն տարիների բերքերը ամբողջ երկրի մէջ և նշանակեց մարդիկ, որոնք հսկում և ժողովում էին ցորենը Փարաւոնի շտեմարանների մէջ. այդ ժողոված ցորենը չափից վուրս շատ էր. նա նման էր ծովի աւաղին, որը անկարելի էր չափել:

Անցան եօթն լիւթեան տարիները և եկան եօթն սովի տարիները, ամբողջ երկրի մէջ սով ընկաւ: Սովը նեղացնում էր ամենքին. ժողովուրդն աղաղակում և հաց էր խնդրում թագաւորից: Փարաւոնը պատասխանեց Նգիպտացւոյ. «Գնացէ՛ք Յովսէփի մօտ և ինչ որ ձեզ կասէ, այն էլ արէ՛ք»: Յովսէփն իսկոյն բաց անել տուեց շտեմարանների բերանները ամենայն տեղ և ցորեն էր ծախում բոլոր եգիպտացիներին: Հեռաւոր երկիրներէն ևս Նգիպտոս էին գալիս ցորեն գնելու, որովհետեւ ամեն տեղ էլ սով էր:

«Աստուծոյ խորհուրդը սքանչելի է, ու նրա իմաստութիւնը գերազանց»: Նսալի իր. 29.

«Ջի ո՛չ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ ո՛չ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր՝ ասէ Տէր: Այլ որպէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք իմ ի ճանապարհաց ձերոց»: Նսալի ծե. 8. 9.

Իմ մտածմունքները ձեր մտածմունքների նման չեն և ո՛չ իմ ճանապարհները ձեր ճանապարհների նման, ասում է Աստուած, այլ ինչպէս որ երկինքը երկրիցս հեռի է, այնպէս էլ իմ ճանապարհները ձեր ճանապարհներից:

§ 27.

Յովսէփի եղբայրները գալիս են Նգիպտոս:

ա.

Քանանացւոց երկրում ևս սով էր ընկել: Երբ Յակովբը լսեց, որ Նգիպտոսում շատ ցորեն կայ, կանչեց իւր որդւոց և ասաց. «Ձտապեցէ՛ք, գնացէ՛ք Նգիպտոս ցորեն գնելու, որպէսզի սովից չմեռնենք»: Այսպէս Յովսէփի տան եղբայրները Նգիպտոս եկան ցորեն գնելու համար: Յակովբը իւր կրտսեր որդի Քենիամինին չարձակեց միւսների հետ, որովհետեւ վախենում էր, թէ մի գուցէ վտանգ սպառնայ նորան:

Յովսէփի եղբայրները Նգիպտոս եկան և կամենում էին ցորեն գնել: Նրանք Յովսէփին չճանաչեցին, երկրպագութիւն տուին և գլուխները քաշ նրա առաջ կանգնած էին. բայց Յովսէփն իսկոյն ճանաչեց և յիշեց այն երազը, որը նա մի անգամ տեսել էր իւր եղբայրների վերայ: Նա իբրեւ օտարական ներկայացաւ նրանց, խիստ լեզուով խօսեց նրանց հետ և հարցրեց. «Ո՞րտեղից էք գալիս»: Նրանք պատասխանեցին. «Քանանացւոց երկրից, որպէսզի ցորեն գնենք»: Յովսէփն ասաց. «Գուք լրտեսներ էք, եկել էք իմանալու, թէ մեր երկիրը ինչ վիճակի մէջ է»:

Նրանք պատասխանեցին և ասացին. «Ո՛չ, տէր, քո ծառաները եկել են ցորեն գնելու, լրտեսներ չենք. մենք տասններկու եղբայր ենք, մի հօր որդի, մեր հայրը կենում է Քանանացւոց երկրում. կրտսեր եղբայրներս տանն է՝ հօր մօտ. իսկ միւսը՝ այլ ևս չկայ»: Յովսէփը պատասխանեց. «Դուք լրտեսներ էք» ու երեք օր նրանց բանտը դրեց:

Վրայ երրորդ օրը Յովսէփն ասաց նորանց. «Ձեզանից մինը պէտք է բանտում կապուած մնայ, իսկ դուք ձեր գնած ցորենը տուն տարէք, որ սովը չնեղացնէ, վերադարձին ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ բերէք, այն ժամանակ ես կհաւատամ ձեր խօսքերին»: Եղբայրներն սկսեցին միմեանց երեսին նայել և ասել. «Այս բոլորը, որ մեր գլխին դալիս է, Յովսէփի պատճառովն է. մենք նորա պաղատանքին չլսեցինք, երբ նա մեզ աղաչում էր, դորա համար էլ Աստուած վրէժխնդիր է լինում մեզ»: Այդ միջոցին Ռուբէնը խօսեց. «Աս ձեզ չէի ասում, թէ այդ մանկան դէմ չպիտի մեղանչել, դուք ինձ չլսեցիք, դորա համար էլ այս պատիժը մեր գլխին է դալիս»:

Նրանք էնպէս էին կարծում, թէ Յովսէփը իրանց խոստովանութիւնը չէ հասկանում, որովհետեւ թարգմանի բերանով էր խօսում: Յովսէփը երեսը շուռ տուեց և սկսեց լալ: Նա յետոյ շուռ եկաւ և նրանց աչքի առաջ ձմաւոնին կապել տուեց, հրամայեց նոցա տապալակները ցորենով լեցնեն ու իւրաքանչիւրի ցորենի գինն էլ պարկի մէջ դնեն. բացի այդ հրամայեց ճանապարհի պաշար ևս տալ: Այդպէս էլ ամենայն բան նորա հրամանի համաձայն կատարվեցաւ:

Բ.

Եղբայրները ցորենը բեռնեցին իշաներին և սկսեցին հեռանալ Եգիպտոսից: Ճանապարհին եղբայրներից մինը բաց արեց պարկի բերանը իշին կերակուր տալու և տեսաւ որ իւր ցորենի գինը պարկի մէջնէ դրած: Իսկոյն իմաց տուեց եղբայրներին ու ասաց. «Իմ ցորենի փողը պարկիս մէջն է դրած»: Ամենքը զարհուրեցան երկիւղից ու ասում էին միմեանց. «Այս ի՛նչ փորձանք է, որ Աստուած մեր գլխին բերում է»:

Երբ տուն հասան՝ Քանանացւոց երկիրը, պատմեցին այս անցքը իրանց հօրն ու ասացին. «Այն երկրի տէրը մեզ հետ խիստ լեզուով խօսեց. նա մեզ լրտեսների տեղ ընդունեց, իսկ մենք նրան պատասխանեցինք, թէ արդարախօս մարդիկ ենք, մեզանից մինը այլևս չկայ, իսկ կրտսերն էլ հայրերնիս մօտն է: Երկրի իշխանը ասաց մեզ. «Թողէք ձեր եղբայրներից մինին ինձ մօտ, յետ դարձէք և ձեր կրտսեր եղբօրն ինձի բերէք, թէ չէ՝ ձեր խօսքին չեմ հաւատայ. այն ժամանակ կիմանամ որ դուք լրտեսներ չէք, այլ՝ արդարախօս ու ձեր եղբօրն էլ յետ կտամ»:

Երբ իրանց պարկերի ցորենները թափում էին, իւրաքանչիւրը ցորենի գինը իւր տոպրակի մէջ դտաւ. ամէնքն էլ զարհուրանքի մէջ էին Յակովբե հետ: Հայրն ասաց նրանց. «Դուք ինձ անորդի արեք. Յովսէփը չկայ այլևս. ձմաւոնը նմանապէս. հիմայ էլ Բենիամինին էք ուղում տանել, այս բոլոր անբաղտութիւնը իմ գլխին է դալիս»: Ռուբէնը պատասխանեց հօրն ու ասաց. «Բենիամինին ինձ յանձնիր, ես յետ կբերեմ նորան»:

Բայց Յակովբը պատասխանեց նորան. «Իմ որդուն չեմ թող տալ, որ ձեզ հետ Եգիպտոս գնայ, որովհետև նրա եղբայրը չկայ, նա միայն է մնացել Հռաքելից. եթէ ճանապարհին նրան մի վտանգ պատահի, ինձ ծերութեանս օրերում տրտմութեամբ և անմխիթար գերեզման կիջեցնէք»:

Գ.

Սովն աւելի և աւելի սաստկանում էր երկրի մէջ: Երբ Եգիպտոսից բերած ցորենը սպառուեց, Յակովբն ասաց իւր որդւոց. «Իշի գնացէ՛ք այն երկիրը ու կերակուր գնեցէ՛ք». Յուդան պատասխանեց. «Այն երկրի իշխանը մեզ ասաց, եթէ ձեր եղբօրը հետներդ չէ՛ք բերի, իմ երեսը չտեսնէ՛ք, թող տո՛ւր Բենիամինին, որ նա էլ մեզ հետ գայ, ոչինչ վտանգ չի պատահի նորան: Ես երաշխաւոր եմ լինում, ինձանից պահանջիր. եթէ նորան մի բան պատահի, եթէ ես նորան չբերեմ և քո առաջ չկանգնացնեմ, թող իմ ամբողջ կեանքի մէջ յանցաւոր մնամ»:

Յակովբը պատասխանեց. «Ուրեմն այնպէս արէ՛ք, ինչպէս որ ուզում է՛ք—վեր առէ՛ք հետներդ մեր երկրի ընտիր բերքերից. իշխանին ընծայ տարէ՛ք մեղր, խուսկ, ստաշխն, բւեկն և ընկոյզ: Չմոռանա՛ք ձեր պարկում դտանուած փողը յետ տանել, թերևս մի սխալանք է այդ, որ պատահել է. ուրիշ փող ևս առէ՛ք հետներդ: Թող գթասիրտ Աստուածը քաղցրացնէ իշխանի աչքը ձեզ վերայ, որպէսզի միւս եղբայրներիդ և Չմաւոնին արձակէ»: Եղբայրները վեր առան ընծաները, փողը և Բենիամինի հետ ճա-

նապարհ ընկան դէպի Եգիպտացւոց աշխարհը:

Դ.

Երբ Յովսէփը իւր եղբայրներին և Բենիամինին տեսաւ, ասաց հազարապետին. «Տուն տա՛ր այս մարդկանցը և հացի պատրաստութիւն տես, որովհետև սրանք ինձ մօտ պէտք է ճաշեն: Այն մարդը նրանց Յովսէփի տունը տարաւ: Եղբայրները երկիւղից սկսեցին խօսել և ասել. «Առաջին անգամ մեր պարկերումը փող դտնվելու համար են մեզ այստեղ բերում. նա ուզում է մեզ յանցաւոր դուրս բերել և և ծառաներ դարձնել»: Սորա համար էլ եղբայրները մօտեցան հազարապետին և ասացին. «Ո՛հ, տէր, մենք սորանից առաջ եկել էինք այստեղ կերակուր գնելու, երբ տուն դարձանք և մեր պարկերի բերանները բաց արինք, մեզանից իւրաքանչիւրը իւր վճարած փողը պարկի մէջ գտաւ: Մենք այդ փողը յետ ենք բերել և բացի այդ էլի ուրիշ փող՝ կերակուր գնելու համար, մենք չգիտենք թէ այդ փողը ո՞վ է դրել մեր պարկերում»:

Բայց հազարապետը պատասխանեց նորանց, «Մի վախենա՛ք, այդ փողն Աստուած է դրել ձեր պարկերի մէջ. ես մեր փողն ստացել, վերջացրել եմ: Չմաւոնին էլ դուրս հանեց և միասին Յովսէփի տունը տարաւ, ջուր տուեց որ ոտները լուանան, իշաներին էլ կերակուր: Եղբայրները բերած ընծաները պատրաստ պահեցին, որովհետև լսել էին, թէ Յովսէփն իրանց հետ պիտի ճաշէր:

Երբ Յովսէփը տուն եկաւ, եղբայրները ընծաներն առան և երեսների վերայ ընկան: Նա սիրով

ողջունեց նրանց և ասաց. «Ի՞նչպէս է ձեր ծերունի հայրը, որի մասին ինձ առաջին անգամ պատմեցիք»: Նրանք պատասխանեցին. «Մեր հայրը՝ քո ծառան կենդանի է դեռ և առողջ», ու գլուխ տուին նրան: Յովսէփը նայեց տեսաւ Բենիամինին և ասաց. «Կարծեմ սմ պէտք է լինի ձեր կրտսեր եղբայրը, որի մասին ինձ պատմեցիք», յետոյ աւելացրեց. «Ատտուած թող որորմի՛ քեզ, որդեակ»: Յովսէփը հեռացաւ իւր սենեակը և սկսեց լաց լինել: Յետոյ երեսը լուաց. սիրտը պնդացրեց. դուրս եկաւ և պատուիրեց, որ հաց բերեն: Ամեն մինի համար առանձին—առանձին ճաշ բերին, Յովսէփին առանձին, եղբայրներին առանձին—առանձին, նոյնպէս և այնտեղ եղող եղիպտացիներին. եղիպտացիք իրաւունք չունէին խորայէլացիների հետ ճաշելու, որովհետեւ նրանց պիղծ էին համարում:

Յովսէփի եղբայրներին իրանց հասակի համաձայն նստացրին—առաջ մեծերին, յետոյ կարգով փոքրերին և սկսեցին կերակուր բաժանել: Բենիամինի բաժինը հինգ անգամ աւելի էր լքցրած՝ քան թէ միւսներին: Այս բանի վերայ եղբայրները խիստ զարմացան:

«Զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ»:

Թ. ա. Գաղ. գ. 7.

Ինչ կցանես, այն կհնձես»:

§ 28.

Յովսէփը յայտնվում է եղբայրներին:

ա,

Յովսէփը հրամայեց հազարապետին և ասաց. «Դոցա պարկերը մինչև բերանները լքցնել տուր ցորենով և իւրաքանչիւրի փողը իրա պարկի մէջ դիր, իսկ իմ սկիհը՝ կրտսեր եղբօր պարկի մէջ»: Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը: Հետեւալ օրը եղբայրները ճանապարհ ընկան դէպի տուն իրանց իշաներով: Դեռ քաղաքից նոր էին դուրս եկել, որ Յովսէփին իւր հազարապետին իրա մօտ կանչեց ու ասաց. «Ղտապիր այն մարդկանց յետևից, հասիր նրանց և ասա, ի՞նչու համար դուք բարութեան փոխարէն չարութիւն արիք. ինչո՞ւ համար իմ տիրոջ սկիհը, որով նա միշտ խմում էր, գողացաք. այդ ի՞նչ չարութիւն է ձեր արարմունքը»:

Հազարապետը օտարականներին հասաւ և այսպէս էլ ասաց նրանց: Իսկ օտարականները պատասխանեցին և ասացին. «Այդ ի՞նչ խօսք է. որ դու ասում ես. «Ատտուած մի՛ արասցէ, որ մենք այդպիսի բան արած լինենք, այն փողը, որը մենք մեր պարկերի մէջ գտանք, էլի քեզ յետ բերեցինք, ինչպէս կարելի է որ մենք քո տիրոջ տանից արծաթ կամ ոսկի գողանայինք: Ում մօտ սկիհը գտնէք, թող նա մեռնի, իսկ միւսները, քո տիրոջ ծառաները լինին»: Նա պատասխանեց. «Ում մօտ սկիհը գտնուի, թող նա լինի իմ ծառան, իսկ միւսներդ ազատ էք»:

Ղտապով վեր բերեցին պարկերը ու սկսեցին բե-

րանները բացանել: Հազարապետը նայեց մեծից մինչև փոքրը ու վերջը Բենիամինի պարկի մէջ գտաւ սկիհը: Եղբայրներն սկսեցին իրանց շորերը պատառել, ամեն մէկը իւր էշը բեռնեց ու նորից քաղաք վերադարձան:

Բ.

Յուդան իւր եղբայրների հետ դարձաւ Յովսէփի տուն և երեսների վերայ գետին ընկան: Յովսէփն առաց նրանց. «Այդ ի՞նչ արիք»: Յուդան պատասխանեց. «Ի՞նչ պատասխանենք և կամ ի՞նչպէս արդարանանք, ահա այստեղ ենք ամենքս և նա, որի մօտ սկիհը գտնուեց, ամենքս էլ քո ծառաներն ենք»:

Իսկ Յովսէփը պատասխանեց. «Այդպիսի բան ես չեմ անի, նա, որի մօտ սկիհը գտնուել է, նա կլինի միայն իմ ծառան, իսկ միւսներդ ազատ էք, զնացէք խաղաղութեամբ ձեր հօր մօտ»:

Այն ժամանակ մօտեցաւ նորան Յուդան ու առաց. «Տէր, թող տուր ծառայիդ քո առաջ մի խօսք ասելու, մի բարկանար նորա համարձակութեան վերայ, որովհետև Փարաւոնից յետոյ առաջին մարդն ես: Մենք առաջ քեզ առացինք, որ տանը ծերունի հայր և կրտսեր եղբայր ունենք և թէ մեր հայրը նորան շատ սիրում է: Պու մեզ պատասխանեցիր, եթէ ձեր կրտսեր եղբորը ինձ մօտ չէք բերի, իմ երեսը չտեսնէք: Մենք մեր հօրը հարցրինք և կամենում էինք մեր կրտսեր եղբորը քեզ մօտ բերել: Նա առաց մեզ. «Պուք գիտէք որ Հռաքէլը երկու որդի ծնաւ, մինից զրկուեցի, նրան էլ չեմ տեսել մինչև օրս, հիմա

էլ սրան էք ուզում տանել, եթէ ճանապարհին հիւանդութիւն կամ մի անբաղաժիւն պատահի, այն ժամանակ ինձ ծեր-ծեր տրտմութիւնով գերեզման կիջեցնէք: Ես՝ քո ծառան երաշխաւոր եղայ հօրս ու ասացի, որ եթէ յետ չբերեմ, իմ ամբողջ կեանքի մէջ պատասխանատու մնամ նորա առաջ: Դորա համար ինձ ընդունիր մանկան փոխարէն որպէս ծառայ, իսկ նա թող եղբայրների հետ իւր հօրը դառնայ. որովհետև առանց մանկան ի՞նչպէս կարող եմ ես հօրս աչքին երևալ, ի՞նչպէս տեսնեմ ես այն սրտնեղութիւնը, որը ծերունի հայրս պիտի կրէ, երբ Բենիամինին մեզ հետ չտեսնէ»:

Յովսէփն էլ երկար չկարողացաւ իրան պահել, հրամայեց բոլոր եգիպտացիներին դուրս գնալ ու սկսեց ինքը բարձր ձայնով այնպէս լաց լինել, որ եգիպտացիները և Փարաւոնի ծառաները դրոժմ նորա ձայնը լսեցին. նա առաց վերջապէս եղբայրներին. «Ես Յովսէփն եմ»: Նորա եղբայրները վախից չզիտէին թէ ինչ պատասխանեն նրան, իսկ Յովսէփը շարունակեց. «Մօտ եկէք». նրանք էլ մօտեցան: Նա աւելացրեց. «Ես Յովսէփն եմ՝ ձեր եղբայրը, որին Եգիպտոս վաճառեցիք: Մի վախէք, չմտածէք ամենեւին, թէ ես դորա համար կնեղանամ ձեզանից. ձեր բաղաժալակութեան համար Աստուած ինձ այստեղ է ուղարկել: Զտապեցէք ուրեմն տուն և առացէք հօրս, որ Աստուած ինձ ամբողջ Եգիպտոսի տէր է դարձրել, շտապիր, արի շուտով ինձ մօտ: Նա Դեսեմ երկրում կբնակի և ինձ մօտիկ կլինի, այստեղ կբնակեն նմանապէս իւր որդիքը, թոռները, ոչխար-

ները և տաւարները և ինչ որ ունի, թող բոլորն էլ հետը բերի: Ես նորա բոլոր պակասութիւնքը կհոգամ, որովհետեւ սովը էլի հինգ տարի դեռ կշարունակուի. ես չեմ թոյլ տայ, որ նրա տունը կորչի: Պատմեցէք հօրս թէ ինչպիսի փառք ու պատիւ ունիմ այստեղ՝ Եգիպտոսում, պատմեցէք ինչ որ տեսաք».

Նա ընկաւ իւր եղբայր Բենիամինի վզովը ու լաց եղաւ. Բենիամինն էլ նրա վզովն ընկաւ ու լաց եղաւ: Յովսէփը համբուրեց բոլոր եղբայրներին և շարունակ լաց էր լինում: Սորանից յետոյ եղբայրներն սկսեցին նորա հետ խօսել:

Դ.

Երբ այս ձայնը Փարաւոնին հասաւ, թէ Յովսէփի եղբայրները եկել են, շատ ուրախացաւ թէ ինքը և թէ իւր բոլոր ծառայողները: Նա Յովսէփի բերանով յայտնեց եղբայրներին, որ նրանք իրանց իշաները բառնան, Քանանացւոց երկիրն շտապեն և իրանց հօրը տնով տեղով Եգիպտոս բերեն. նա խոստացաւ նրանց շատ բարութիւն անելու:

Յովսէփը նրանց կառքեր տուեց. նմանապէս ճանապարհի պաշար և ամեն մինին երկու ձեռք շոր. իսկ Բենիամինին երեք հարիւր դահեկան և հինգ ձեռք շոր: Բացի այդ հօր համար տասն էշ ուղարկեց՝ բարձած Եգիպտոսի բարիքներով, այլև տասն ջորի ցորենով և հացով բարձած, որպէսզի հայրը ճանապարհին նեղութիւն չկրէ: Յովսէփը իւր եղբայրներին այսպէս ճանապարհ դրեց:

Նրանք հեռացան Եգիպտոսից և եկան Քանանացւոց երկիրը՝ իրանց հօր մօտ ու պատմեցին այս

բոլորը, թէ Յովսէփը կենդանի է դեռ և ամբողջ Եգիպտոսը նորա իշխանութեան տակն է: Յակովբը զարմացաւ այս բանի վերայ և չէր հաւատում: Այնուհետեւ պատմեցին եղբայրները ինչ որ իրանց գլխովն անցել էր: Երբ Յակովբը կորած որդու ուղարկած կառքերը տեսաւ, սթափեցաւ և ասաց. «Մի՞թէ իմ որդի Յովսէփը կենդանի է, շտապեմ նորան տեսնել. քանի որ չեմ մեռել»:

«Որ ծածկէ զամբարշտութիւն իւր՝ ոչ յաջողեսցի՝ իսկ որ պատմէ եւ յանդիմանէ, սիրելի եղիցի»: Գիրք Առակաց իր. 13.

Ով որ իւր յանցանքը կուրանայ, միշտ կյայտնուի, իսկ ով կխոստովանէ, նորա գործը լաւ կլինի:

«Զբարեբարութիւն և զհաղորդութիւն մի մոռանայք, զի ընդ այնպիսի պատաքագս հաճի Աստուած»: Թ. Պող. ա. եբր. Ժգ. 16.

Բարի առնելը և տեղեկութիւն հաղորդելը մի մոռանայք, որովհետեւ այսպիսի զոհաբերութիւնը սիրում է Աստուած:

«Աստուծոյ խորհուրդը սքանչելի է ու նորա իմաստութիւնը գերազանց»:

§ 29.

Յակովբը Եգիպտոսում:

ա.

Յակովբը չուեց գէպի Եգիպտոս իւր բոլոր ստացուածքով: Երբ Բերսաբէ հասաւ, Աստուած ասաց նորան տեսիլքում. «Ես քո հօր ամենակարող Աստուածն եմ, մի վախեցիր, զնա Եգիպտոս. այնտեղ

քեզ մեծ ազդ կդարձնեմ. ես քեզ հետ եմ գալիս Եգիպտոս, այնտեղ Յովսէփը պէտք է քո աչքերը խփէ»:

Այս խօսքերից յետոյ վեր կացաւ Յակովբը և հեռացաւ Բերսաբէից: Նորա որդիքը լծեցին Յովսէփի ուղարկած կառքերը ու նստացրին նրանց մէջ իրանց որդւոցը և կանանցը. առան իրանց հետ կենդանիները և կալքը, որ Քանանացւոց երկրումն էին աշխատել և այսպէս Յակովբը վաթսուն և վեց հոգով Եգիպտոս տեղափոխվեց:

Յակովբը Յուդային առաջուց Յովսէփի մօտ ուղարկեց, որպէսզի իր գալուստը յայտնէ նորան: Յովսէփն այս լուրն առնելուն պէս խփոյն լծել տուեց կառքերը և եկաւ հօրն ընդունելու: Երբ Յովսէփը հօրը տեսաւ, վզովն ընկաւ ու երկար ժամանակ լաց էր լինում: Յակովբն ասաց. «Հիմա Հանգիստ կմեռնեմ՝ քեզ տեսնելուց յետոյ»: Այն ժամանակ Յովսէփը խօսքը դարձրեց դէպի իւր հայրն ու եղբայրները և ասաց. «Ես շտապում եմ Փարաւոնին իմաց տալ ձեր գալուստը»:

Բ.

Յովսէփն եկաւ Փարաւոնի մօտ և ասաց. «Իմ հայրը և իմ եղբայրները եկել են Քանանացւոց երկրից՝ իրանց ոչխարներով, տաւարներով և բոլոր ստացուածքներով ու Քեսեմ երկրումն են»:

Յովսէփն առաւ իւր եղբայրներից Հինդին և ներկայացրեց Փարաւոնին: Թագաւորը հարցրեց եղբայրներին. «Ինչով էք պարապում»: Նրանք պատասխանեցին. «Քո ծառաները և մեր հայրը խաշնարած-

ներ են: Մենք եկել ենք քո երկրում բնակուելու, որովհետեւ քո ծառաները արօտատեղի չունեն իրանց անասունների համար. սովը նեղում է մեզ Քանանացւոց երկրում, թոյլ տո՛ւր մեզ Քեսեմում բնակուելու»: Փարաւոնն ասաց Յովսէփին. «Քնտրիր քո հօր և քո եղբայրների համար իբրեւ բնակութեան տեղ իմ երկրի ամենալաւ տեղը—բնակեցրո՛ւ նրանց Քեսեմում: Եւ եթէ քո եղբայրների մէջ քաջ և զօրաւոր մարդիկ կան, նշանակիր խաշներիս վերայ վերակացու»:

Յովսէփը կանչեց իւր հօրը ևս ու ներկայացրեց թագաւորին: Փարաւոնը հարցրեց Յակովբին. «Քանի տարեկան ես»: Յակովբը պատասխանեց. «Իմ պանդը խտուածեան տարիները հարիւր և երեսուն են»: Յակովբն օրհնեց Փարաւոնին և հեռացաւ:

Յովսէփը հօրը և եղբայրներին բնակեցրեց Եգիպտոսի ամենապտղաւետ մասներից մինում՝ Քեսեմում, ինչպէս որ թագաւորը հրամայել էր ու հողս էր տանում ամենին:

Գ.

Այսպէս Յակովբի սերունդը բնակուեց Քեսեմ երկրում, որտեղ նրանք աճեցին և բազմացան: Յակովբը Եգիպտոսում տասն և եօթն տարի ապրեց: Երբ մահուան օրը մօտեցաւ, կանչեց Յովսէփին և ասաց. «Եթէ ինձ սիրում ես, մի՛ թաղիր Եգիպտոսում, վերջին ցանկութիւնս է հայրերիս մօտ հանգստանալ, դուրս տա՛ր ինձ այս երկրից և պապերիս գերեզմանի մէջ թաղել տո՛ւր»: Յովսէփը պատասխանեց. «Այնպէս կանեմ, ինչպէս որ քո կամքն-

է»: Այնուհետեւ խոնարհեցրեց Յակովբը իւր գլուխը ու աղօթում էր անկողնի մէջ:

Սորանից յետոյ իմաց տուին Յովսէփին, որ իւր հայրը հիւանդ է: Յովսէփին իսկոյն վեր առաւ իւր երկու որդւոց՝ Եփրեմին և Մանասէին ու գնաց հօր մօտ: Յակովբը երբ իմացաւ, որ Յովսէփը գալիս է, զօրացաւ, տեղից վեր կացաւ, նստեց անկողնի մէջ ու ասաց Յովսէփին. «Ամենակարող Աստուածը տեսիլքում երեւաց ինձ Քանանացւոց երկրում, օրհնեց ինձ և ասաց. ես քեզ մեծ ազգ կդարձնեմ, այս երկիրը քո ժառանգներին պետք է տամ: Քո երկու որդիքն ևս՝ Եփրեմն ու Մանասէն իմն են, ինչպէս Ռուբէնն ու ձմաւոնը»:

Յակովբը մեկնեց իւր ձեռքերը և Յովսէփի երկու որդւոց գլխներին դնելով՝ օրհնեց և ասաց. «Իմ հայրերի Աստուածը թող օրհնէ այս մանուկներին, որպէսզի սրանք աճեն և բազմանան երկրիս վերայ»:

Յետոյ Յովսէփի հետ խօսեց ու ասաց. «Ահա ես մեռնում եմ. Աստուած ձեզ հետ կլինի ու կրկին ձեր հայրերի երկիրը կդարձնէ»:

Սորանից յետոյ կանչեց Յակովբը իւր բոլոր որդւոց և օրհնեց իւրաքանչիւրին յատուկ օրհնութիւնով: Նա իւր չորրորդ որդի Յուդային բոլոր եղբայրների վերայ մեծ նշանակեց: Յակովբը խնդրեց իւր որդւոց և ասաց. «Ինձ թաղեցէք Քանանացւոց երկրում, Մամբրէի մօտ գտանուող այրի մէջ»: Երբ իւր պատուէրը վերջացրեց, խփեց աչքերը և բաժանուեց ամենից: Յովսէփն ընկաւ հօր երեսի վերայ, լաց էր լինում և համբուրում էր նորան: Հրամայեց բժիշկներին, որ

զմուսեն. նրանք էլ կատարեցին նորա հրամանը: Քանաւուն օր այսպէս մնաց, որովհետեւ զմուսածներին այսքան օր պահում էին: Եղիպտացիները սգում էին Յակովբի մահը եօթանասուն օր:

Երբ սգոյ օրերն անցան, Յովսէփը խօսեց Փարաւոնի հետ. «Իմ հայրը ինձ խնդրել է, որ ես նորան Քանանացւոց երկրում թաղեմ. ես գնում եմ այն երկիրը և հօրս թաղելուց յետոյ՝ կվերադառնամ»: Փարաւոնն ասաց. «Քնն և թաղիր քո հօրը, ինչպէս որ խոստացել ես»:

Այսպէս Յովսէփը ճանապարհ ընկաւ դէպի Քանան: Փարաւոնի ծառաները, նոյնպէս Յովսէփինը, այլև իւր եղբօր ու հօր ծառաները ուղեկցում էին նորան: Նրանք կատարեցին այնպէս, ինչպէս որ Յակովբն էր հրամայել—դիակը տալու Քանանացւոց երկիրը և թաղեցին Մամբրէի մօտ՝ կրկին այրի մէջ: Սորանից յետոյ ամէնքն էլ Եղիպտոս վերադարձան:

«Պատուէն գհալը քո եւ զմալը քո, զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի: II. Մովս. ի. 12.

Պատուէր քո հօրն ու մօրը, որ երկրիս վերայ երկար կեանք կարողանաս վարել»:

«Երանի մեռելոց, որք ի Տէր ննջեցին»: Յայտ. Յովհ. Ժ. 13.

§ 30.

Յովսէփի մահը:

ա.

Յակովբի մահուանից յետոյ Յովսէփի եղբայրները վախենում էին իրանց եղբօրից—նրանք ասում էին.

«Յովսէփը մեզ հետ ոխ կունենայ. նա մեր չարութեան փոխարէնը անպատճառ կհատուցանէ»։ Սորա համար եկան նորա մօտ ու ասում էին. «Ներէր մեզ այն բոլոր լանցանքներն ու չարութիւնները, որոնք մենք գործել ենք քո դէմ»։ Այս բանի վերայ դառնացաւ Յովսէփի սիրտը և սկսեց լաց լինել։ Եղբայրները մօտեցան նրան. երեսի վերայ ընկան, ու ասում էին. «Մենք քո ծառաներն ենք»։ Յովսէփն ասաց նրանց. «Մի վախենաք. ես էլ Աստուծոյ ծառան եմ. դուք իմ մասին չարութիւն մտածեցիք. իսկ Աստուած՝ բարի։ Մի վախենաք, ես ձեզ էլ և ձեր որդւոցն էլ կկերակրեմ»։ Նա մխիթարեց եղբայրներին և սիրով էր խօսում նրանց հետ։ Այսպէս Յովսէփը բռնակվում էր Եգիպտոսում իւր սերնդի հետ։

Բ.

Երբոր Յովսէփը 110 տարեկան դառաւ, ասաց եղբայրներին. «Ահա ես մեռնում եմ, Աստուած ձեզ պէտք է այցելութիւն անէ. նա ձեզ այս երկրից կհանէ և կտանէ Քանանացոյ աշխարհը, որն Աստուած Աբրահամին, Իսահակին և Յակովբին երդուաւ տալու։ Երբ դուք կտեղափոխվէք, չմոռնաք իմ ոսկորներն էլ ձեզ հետ տանելու»։

Այսպէս մեռաւ Յովսէփը. նորան զմուսեցին և թաղեցին Եգիպտոսում։

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։ Մատ. ե. 9.

Երանի խաղաղասէրներին, որովհետեւ նրանք Աստուծոյ որդիք պիտի լինին։

«Եթէ որոց սիրեն զԱստուած, յամենանի գործակից լինի ի բարիս»։ Թ. ա. հռով. ր. 28.

«Նոքա, որոնք Աստուծուն սիրում են, բարին նրանցից անբաժան է»։

Գ.

ԴԱՏԱԻՈՐՆԵՐԻ ԴԱՐ

Ա.

Մ Ո Վ Ս Է Ս

§ 31.

Իսրայէլի նեղութիւնները Եգիպտոսում։

Յովսէփը մեռել էր. նմանապէս նորա բոլոր եղբայրները, բայց նրանց ժառանգները իրանց մահուանից յետոյ այնքան բազմացել էին, որ երկիրը լրքացուել էր նրանցով։ Այդ ժամանակ Եգիպտոսում մի նոր թագաւոր եկաւ, որը Յովսէփին չէր ճանաչում. նա ասաց եգիպտացիներին. «Իսրայէլացիները չափից դուրս բազմացել են. նրանք վտանգաւոր կարող են լինել մեզ համար. եթէ մի պատերազմ պատահի, հեշտ կերպով կարող են մեր թշնամու հետ միանալ և մեր դէմ պատերազմ մղել, ուստի պէտք է նրանց մի կերպով ոչնչացնել»։

Սորա համար թագաւորը վերակացուներ նշանակեց, որպէսզի նրանց չարչարեն։ Եգիպտացիները անգուլթ կերպով ստիպում էին իսրայէլացիներին աշխատելու. նրանց կեանքը դառնացնում էին ամեն տեսակ ծանր աշխատանքներով՝ թէ աղիւսի գործա-

րաններում և թէ դաշտում. Փարաւոնի համար ամուր քաղաքներ և շտեմարաններ պէտք է շինէին: Սակայն որքան եգիպտացիները ճնշում, նեղում էին իսրայէլացիներին, այնքան սրանք աճում և բազմանում էին: Այն ժամանակ Փարաւոնը հրամայեց, որ եբրայեցւոյ բոլոր նորածին արու զաւակները ջուրը ձգեն, իսկ աղջկերանց խնայեն:

«Երանի քեզ, երկիր, որոյ թագաւոր քո որդի ապառի է»: Փող. Ժ. 17.

Երանի այն երկրին, որի թագաւորը ազնիւ է, բարի է:

«Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն եւ Աստուած խորհեցաւ վասն իմ ի բարութիւն»: I. Մովս. 8. 20.

Դուք ինձ համար չար բան մտածեցիք, իսկ Աստուած՝ բարի:

§ 32.

Մովսիսի ծնունդը և ազատութիւնը:

Այդ միւսնոյն ժամանակներում Ղէիի ցեղից մինը՝ Ղէի անունով մի մարդու աղջկայ հետ ամուսնացաւ և նորանից մի արու զաւակ ունեցաւ: Մայրը չափից դուրս ուրախանում էր, որ մի սիրուն երեխայ էր ստացել, դորա համար ևս երեք ամիս շարունակ ծածուկ էր պահում: Երբ այլ ևս չկարողացաւ թաքցնել, եղեկնից մի զամբիւղ հիւսեց, կալրածիւթով ծեփեց, երեխան նորա մէջը դրեց և Նեղոսի եղեկնուտ ափը թողեց: Նորա քոյրը հեռուից գիտում էր, որ տեսնի թէ եղբօրն ինչ կալատահի:

Թագաւորի աղջիկը Նեղոսի ափն իջաւ լուսնուելու համար. նորա նաժիշտները գետի ափում ման էին գալի: Երբ թագաւորի աղջիկը հեռուից նկատեց զամբիւղը, աղախիններից մինին ուղարկեց, որ բռնէ ու իրան բերէ: Նորա հրամանը կատարուեցաւ—զամբիւղն իրան բերին, բաց արեց ու տեսաւ որ մէջը մի մանուկ լաց էր լինում: Թագաւորի դուստրը գլխաշարժուեց և ասաց. «Սա եբրայեցւոյ մանուկներից պիտի լինի»: Այն ժամանակ մանուկի քոյրը մօտեցաւ և ասաց Փարաւոնի աղջկան. «Արդեօք չես կամենայ մի եբրայեցի մայր կանչեմ, որ մանուկին կերակրէ»: Փարաւոնի աղջիկն ասաց. «Գնա և կանչիր»:

Աղջիկն շտապեց մանուկի մօրը կանչելու: Մայրն եկաւ: Փարաւոնի աղջիկն ասաց. «Ա՛ռ այս մանուկը, քեզ մօտ պահիր, մեծացրո՛ւ, ես քո վարձը կվճարեմ»: Մայրն առաւ մանուկը և սնուցանումէր նորան: Երբ մեծացաւ, մայրը թագաւորի աղջկայ մօտ բերեց, իշխանուհին որդեգրեց նորան և Մովսէս անուանեց, որ մեր լեզուով նշանակում է «ջրից հանած»: Մովսէսն ուսաւ եգիպտոսում այն բոլոր գիտութիւնները, որոնք յայտնի էին այն ժամանակ և դարձաւ մի իմաստուն մարդ:

«Պահէ Տէր զամենեւեան, ոչք սիրեն զնա»: Սաղ. ճխդ. 20.

«Զկեանս եւ գողորմութիւն եղեր ի վերայ իմ, այցելութիւն քո պահեաց զոգի իմ»: Յովբ Ժ. 12.

Կեանք և ողորմութիւն շնորհեցիր ինձ և քո խնամքը պահեց իմ անձը:

Մովսիսի փախուստը:

Երբոր Մովսէսը չափահաս դարձաւ, գնաց իւր եղբայր իսրայէլացիների մօտ նրանց չարչարանքները տեսնելու: Այնտեղ տեսաւ, որ մի եգիպտացի իրան եղբայր իսրայէլացիներից մինին ծեծում էր. նայեց իւր շուրջը և երբ տեսաւ որ ոչ ոք չկայ, սպանեց եգիպտացուն և աւաղի տակ թաղեց:

Միւս օրը ևս դուրս գնաց և տեսաւ որ երկու իսրայէլացիներ միմեանց հետ կռվումն. դարձաւ յանցաւորին և ասաց. «Ի՞նչու ես քո ընկերին ծեծում»: Նա պատասխանեց. «Քեզ ո՞վ նշանակեց մեզ վերայ դատաւոր, չլինի ինձ էլ եգիպտացու նման ուզում ես սպանել»: Մովսէսը զարհուրեց, երբ իմացաւ որ իւր արարմունքը յայտնի է եղել: Այս իրողութիւնը Փարաւոնի ականջին ևս հասաւ. նա կամենում էր Մովսէսին սպանել, իսկ Մովսէսը փախաւ Մագիամացւոց երկիրը և այնտեղ մի ջրհորի մօտ բռնակվումէր:

Մագիամու քուրմը եօթն աղջիկ ունէր. նրանք եկան ջրհորի մօտ և ջուր հանեցին ու լքցրին նաւի մէջ իրանց հօր խաշները ջրելու համար: Ուրիշ հովիւներն ևս եկան և աղջիկներից խլեցին ջուրը: Մովսէսը տեղից վեր կացաւ, օգնեց աղջկերանց, ջրհորից ջուր հանեց և խաշներին խմացրեց:

Երբ նրանք տուն դարձան, Յոթորն ասաց. «Այդ ի՞նչպէս է պատահել, որ այսօր վաղ էք եկել»: Նրանք պատասխանեցին. «Մի եգիպտացի մարդ պաշտպանեց

մեզ հովիւների դէմ, ջուր հանեց և մեր ոչխարներին խմացրեց»: Յոթորն ասաց. «Ո՞րտեղ է այն մարդը, ի՞նչու նրան հացի չկանչեցիք»: Մովսէսին տուն հրաւիրեցին և նա նորա ոչխարներն էր արածացնում ու վերջը նորա Սեպուրա աղջկայ հետ ամուսնացաւ:

«Զի բարկութիւն մարդոց զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»: Թ. Յակ. ա. 20.

Բարկացած մարդը Աստուծոյ նման արդար բան չի կարող գործել:

«Զի զոր սիրէ տէր՝ խրատէ: Թ. ա. Եբր. Ժբ. 8.

Աստուած կանչում է Մովսէսին:

Երբ Մովսէսը իւր աներոջ՝ Յոթորի խաշները արածացնում էր անապատի մէջ, մօտեցաւ նա Քորե լեռանը: Այնտեղ նկատեց, որ մի մօրենի վառվում էր, բայց չէր այրվում: Մովսէսը մօտ գնաց իմանալու, թէ ինչու մօրենին չի այրվում: Իսկոյն թփի միջից ձայն եկաւ, որ ասում էր. «Մովսէս, Մովսէս»: Նա պատասխանեց. «Ի՞նչ է. Տէր»: Չայնը կրկնեց. «Հան կօշիկներդ, այդ տեղը, ուր որ դու կանգնած ես, սուրբ է»:

Չայնը շարունակեց. «Ես եմ Աբրահամի, Յակովբի և Իսահակի Աստուածը: Մովսէսը շուռ տուեց իւր երեսը և ծածկեց ձեռքերով: Աստուած ասաց. «Ես տեսայ իմ ժողովրդի նեղութիւնները եգիպտոսում, նորա աղաղակն ինձ է հասել, ես կամենում եմ նորան այն երկրից հանել և մի ուրիշ երկիր տա-

նել. Ես կամենում եմ Քանանացւոց երկիրը նրանց տալ, ուր մեզը և կաթն է բոխում. ես կամենում եմ քեզ Եգիպտոս ուղարկել Փարաւոնի մօտ, որ իմ ժողովուրդն ազատես»: Մովսէսն ասաց Աստուծուն. «Եթէ ես իսրայէլացւոց մօտ գնամ և ասեմ, թէ ձեր հայրերի Աստուածը՝ Եհովան ինձ ուղարկեց ձեզ մօտ, նրանք չեն հաւատալ և կասեն, որ Աստուած քեզ չի երևացել»: Աստուած ասաց. «Ձեռքիդ գաւազանը գետին ձգիր»: Նա էլ ձգեց և գաւազանը օձ դարձաւ: Մովսէսը վախեց և հեռացաւ: Աստուած ասաց. «Ձգիր ձեռքդ և ագիւղ բռնիր»: Օձն իսկոյն գաւազան դարձաւ: Աստուած շարունակեց. «Ձեռք ծոցդ դիր»: Նա էլ ձեռը ծոցը դրեց, բայց դուրս հանելիս տեսաւ որ ձեռը բորոտ է դարձել—սալիտակ, ինչպէս ձիւն: Աստուած ասաց նորան. «Ձեռք ծոցդ դիր»: Նա էլ կատարեց և տեսաւ որ միւս ձեռքի նման առողջ է: Աստուած ասաց. «Եթէ այս երկու նշաններին չեն հաւատալ, Նեղոսից ջուր կվեր առնես, կսրսկես գետնի վերայ և գետի ջուրն իսկոյն արիւն կդառնայ»:

Մովսէսն ասաց Աստուծուն. «Տէր, ես ծանրալեզու եմ»: Աստուած ասաց նորան. «Ո՞վ է մարդուն բերան՝ լեզու տուել՝ ո՞վ է ստեղծել համբերին ու խուլներին. չէ՞ որ ես եմ ստեղծել նրանց. գնա, ես քո բերանը բաց կանեմ և կսովորցնեմ, թէ ինչ պիտի խօսես»: Գորա համար քո ճարտարախօս եղբայր Ահարոնը քեզ հետ կգայ, նա քո փոխարէն ժողովրդին իմ կամքը կյայտնէ—նա քո բերանը կլինի, իսկ դու նորա Աստուածը:

Այս բանից յետոյ Մովսէսը Յոթորի մօտ գնաց և ասաց. «Արձակիր ինձ, որ ես կրկին իմ եղբայրների մօտ գնամ Եգիպտոս»: Յոթորը պատասխանեց. «Գնա խաղաղութեամբ»: Մովսէսը վեր առաւ իւր կնոջը և երկու որդւոց ու գնաց Եգիպտոս: Անապատում նա հանդիպեց Ահարոնին և յայտնեց նորան Աստուծոյ պատգամները: Մովսէսը տեղեկացաւ, որ այն ժամանակուայ Փարաւոնն արդէն մեռել է: Այսպէս նրանք երկուսով Փարաւոնի մօտ գնացին և Խորայէլի ժողովրդեան ձերբերին իմիասին հաւաքեցին: Ահարոնը յայտնեց նրանց այն բոլորը, ինչ որ Աստուած նորան յայտնել էր. Մովսէսը ցոյց տուեց նոյն նշանները ժողովրդի առաջ: Երբ ձերբերը իմացան, որ Աստուած իրանց նեղութիւնները լսել է, խօնարհեցան և սկսեցին աղօթել Աստուծուն:

«Զի գորութիւն իմ ի տկարութեան կատարի»:

II. Թ. ա. Կրնթ. Ժբ. 9.

Իմ գորութիւնը տկարներին գորացնում է:

§ 35.

Եգիպտոսից դուրս գալը:

Սորանից յետոյ Մովսէսը և Ահարոնը գնացին Փարաւոնի մօտ և ասացին. «Խորայէլի Աստուածն ասում է, արձակիր իմ ժողովրդին»: Փարաւոնը պատասխանեց. «Այն ո՞վ է, որին ես պէտք է լսեմ և արձակեմ ժողովրդին, այդ Աստուծուն ես չեմ ճանաչում»:

Փարաւոնը նոյն օրում հրամայեց գործավարներ-

րին և նրանց օգնականներին, որ ժողովրդին աւելի խիստ աշխատեցնեն, նորանց այլ ևս յարդ չտան, ինչպէս մինչև այժմ. թող իրանք զնան և դաշտից ծղնոտ հաւաքեն՝ աղիւս այրելու համար և աղիւսների թիւը չպէտք է պակասացնել: Գործավարներն էլ գնացին և թագաւորի կամքը ժողովրդին յայտնեցին: Սորանից յետոյ ժողովուրդն սկսեց ցրուել ամբողջ Եգիպտոսում և յարդ ու եղեկն էր հաւաքում: Գործավարներն աւելի ևս ստիպում էին ժողովրդին և ասում. «Աւարտեցէք ձեր ամենօրեայ աշխատանքը՝ այնպէս ինչպէս որ յարդ ունեցած ժամանակն էիք պատրաստում»: Եւ որովհետև նրանք հանապազօրեայ աշխատանքը չէին կարողանում աւարտել, ուստի խիստ ծեծի էին ենթարկւում:

Խորայէլի որդիները գանգատվեցին Մովսէսին, Ահարոնին և ասացին. «Աստուած ձեր դատաստանն անէ, դուք շարժեցիք թագաւորի բարկութիւնը»: Մովսէսն սկսեց աղօթել Աստուծուն և ասել. «Տէր, ինչո՞ւ ես քո ժողովրդին այդպէս չարչարում, այն օրից, երբ ես Փարաւոնի մօտ գնացի, ժողովրդի բեռն աւելի ծանրացաւ»: Աստուած ասաց Մովսէսին. «Այժմ դու կտեսնես, թէ ես Փարաւոնին ի՞նչ կանեմ»: Բայց որովհետև նրանց նեղութիւնները և չարչարանքները խիստ ծանր էին, դորա համար ևս չլսեցին նորան:

Սորանից յետոյ Աստուած մինը միւսի յետևից ծանր պատիժներ ուղարկեց եգիպտացիների համար— գորտ, մուկն, կարկուտ, մորեխ... միայն Գեհեմ երկիրն ազատ մնաց այս պատիժներից: Այն ժամանակ եգիպտացիներն ասացին. «Աստուած սրանց հետն է»:

Հենց որ մի պատիժ գալիս էր, Փարաւոնն ասում էր Մովսէսին և Ահարոնին. «Ժողովրդին կարճակեմ», իսկ երբ պատիժն անցնում էր, նորա սիրտը կրկին քաւանում էր և ժողովրդին չէր արձակում:

Աստուած ասաց Մովսէսին. «Մի պատիժ էլ կամենում եմ ուղարկել, այն ժամանակ Փարաւոնը կարճակէ ձեզ: Ուղիղ կէս գիշերին Եգիպտոսի բոլոր անդրանիկները՝ Փարաւոնի որդուց սկսած մինչև վերջին աղախինը, կմեռնեն, իսկ խորայէլացիներից ոչ ոք չի մեռնի»:

Աստուած շարունակեց խօսել Մովսէսի հետ. «Յայտնիր Խորայէլի ժողովրդին, որ այս ամիսը (նիսան) նրանց համար առաջին ամիսը կլինի. այս ամիս 14 իւրաքանչիւր տան տէր պէտք է մի գառն ունենայ, երեկոյեան ժամանակ մորթէ, խորովի և իւր ընտանիքի հետ ուտէ միւսնոյն գիշերում. դորա հետ պէտք է ուտեն այլև բազարջ հաց: Ընթրիքը այսպէս պիտի ուտէք—գօտին կապած, կօշիկները հագած և գաւազանը ձեռին շտապով պիտի ուտէք. այս գատիկը Տիրոջ գատիկն է: Միւսնոյն գիշերում ես պիտի հարուածեմ Եգիպտոսի բոլոր անդրանիկներին, իսկ դուք անվնաս կհեռանաք այս երկրից: Այդ օրը չալիտի մոռանաք. այդ տօնը միշտ պիտի կատարէք՝ ի յիշատակ Տիրոջ, ձեր և ձեր յետագաների: Այսպէս էլ արին խորայէլացիները:

Այդ միւսնոյն գիշերում Աստուած սպանեց Եգիպտոսի բոլոր անդրանիկները՝ Փարաւոնի որդուց սկսած մինչև վերջին աղախինի որդին. տուն չկար, ուր սուգ չլինէր: Փարաւոնը կանչեց Մովսէսին և Ահարոնին ու

ասաց. «Ջտապեցէք, հեռացէք իմ ժողովրդից. վեր առէք ձեր հետ ձեր տաւարն ու ոչխարները»: Եզիպտացիներն ստիպում էին իսրայէլացիներին հեռանալու իրանց երկրից. նրանք ասում էին. «Հեռացէք, թէ չէ մենք ամենքս էլ կմեռնենք»: Այսպէս Եզիպտոսից դուրս եկան իսրայէլացիները՝ թուով 600,000 չհաշվելով կանանց և երեխաներին: Իսրայէլացիները մնացին Եզիպտոսում 430 տարի: Մովսէսը տարաւ իւր հետ և Յովսէփի ոսկորները: Աստուած նորանց մի ամպէ սիւն տուեց ցերեկը, իսկ մի կրակէ սիւն էլ գիշերն առաջնորդելու համար:

«Ամենայն ինչ նովաւ եղև»: Աւետ. Յովհ. ա. 2.

Ամեն բան նորանով եղաւ:

«Եւ հզօրացեալքդ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ զխորհուրդն զոր խորհիք, խափանէ տէր, զի... Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք և ոչ խռովիցուք, զի... Փամազիրք:

Զօրեղներդ կշաղթուէք, որովհետև Աստուած մեզ հետ է: Այն՝ ինչ որ մտածում էք, Աստուած կխափանէ, որովհետև... Ձեր երկիւղից և սպառնալիքներից մենք չենք վախենալ, որովհետև....

§ 36.

Սարմիր ծովն անցնելը:

Երբ Փարաւոնին իմաց տուին, թէ ժողովուրդն արդէն հեռացել է, այն ժամանակ թաղաւորի և նորա ծառաների սիրտը փոխվեց, նրանք ասացին.

«Ի՞նչու իսրայէլացիներին մեր ծառայութիւնից արձակեցինք»: Փարաւոնը վեր առաւ ժողովրդին՝ վեց հարիւր ընտիր պատերազմական կառքերով, երիվարներով և ընկաւ իսրայէլի որդւոց ետևից ու հասաւ նրանց Կարմիր ծովի մօտ, ուր բանակ էին ձգել:

Երբ իսրայէլացիները տեսան եզիպտացիներին, խիստ վախեցան, սկսեցին զանգատուել Աստուծուն և ասել Մովսէսին. «Մի՞թէ Եզիպտոսում դերեղմաններ չկային, որ դու բերիր մեզ այստեղ անապատում թաղելու»: Մովսէսը պատասխանեց. «Մի՞ վախենաք, քաջալերվեցէք, դուք շուտով կտեսնէք, թէ Աստուած այսօր ինչպէս է փրկելու ձեզ: «Աստուած ինքը պէտքէ ձեր փոխարէն պատերազմէ, դուք հանգիստ կմնաք»:

Աստուած ասաց Մովսէսին. «Յայտնիր իսրայէլացիներին որ չուեն, իսկ դու բարձրացրու քո դաւադանը և ձգիր ձեռքդ ծովի վերայ»: Երբ Մովսէսը ձեռքը ձգեց, ջուրն իսկոյն պատառվեց և երկու կողմից պատի նման կանգ առաւ. յետոյ հողմ փչեց, յատակը չորացրեց և իսրայէլացիները ցամաքի վերայով անվտանգ միւս ափն անցան: Եզիպտացիները հետևեցին իրանց կառքերով, երիվարներով. Փարաւոնն էլ նրանց հետ:

Աստուած ասաց Մովսէսին. «Ձգիր ձեռքդ ծովի վերայ, որպէսզի ջուրը միանայ և թափվի եզիպտացիների վերայ»: Մովսէսը ձգեց ձեռը և ծովը միացաւ. եզիպտացիներն սկսեցին փախչել, իսկ ջուրը ծածկեց կառքերը, երիվարները և Փարաւոնի զօրքը— նոցանից ոչ մէկն էլ կենդանի չմնաց, իսկ իսրայէլացիներն անվտանգ անցան ծովը և տեսան եզիպ-

տացիներին ծովի ափում խեղդուած, թափուած են: Այսպէս օգնեց Աստուած Իսրայէլի ժողովուրդին և ազատեց եգիպտացիներին ձեռքէն:

Ժողովուրդը վախենում էր Աստուածանից և հաւատում նորա ծառայ Մովսէսին: Մովսէսը և Իսրայէլի ժողովուրդը սկսեցին Տիրոջ համար երգ երգել և ասել. օրհնեցէք Աստուծուն, որովհետեւ նա փառաւոր գործ կատարեց—Փարաօնի երիվարները և հեծեալները ծովը ձգեց. Տէրն իմ օգնականն է և փրկիչը:

«Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»: Սաղ. հր. 19.

Անօրէնները յանկարծակի կործանվեցան, սատակեցան և կորան իրանց անօրէն գործքերի համար:

«Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա»: Սաղ. ձե. 1.

Խոստովանեցէք որ Աստուծոյ ողորմութիւնը քաղցր է և յաւիտենական:

§ 37.

Իսրայէլացիներն անցնում են անապատով:

Մովսէսը շարունակեց ճանապարհը Կարմիր ծովից դէպի անապատ՝ երեք օր շարունակ. վերջապէս հասաւ Մեռա, որտեղի ջուրը դառն էր—խմել չէին կարողանում: Ժողովուրդն սկսեց գանգատուել Մովսէսին և ասել. «Ի՞նչ պէտք է խմենք»: Մովսէսն

աղօթեց Աստուծուն. Աստուած Մովսէսին մի փայտ ցոյց տուեց, որին նա ջուրը ձգեց և ջուրն իսկոյն քաղցրացաւ:

Այգտեղից իսրայէլացիները չուեցին և եկան Սին անապատը. արդէն երկրորդ ամսուայ տասն և հինգն էր, որ Եգիպտոսից դուրս էին եկել: Իսրայէլի որդիքը կրկին սկսեցին գանգատուել Մովսէսին, Ահարոնին և ասել. «Երանի Աստուած մեզ Եգիպտոսում մահ տար. այն տեղ կաթսաներով միս ունէինք և առատ հաց. դուք բերիք մեզ այս անապատ տեղը սովամահ առնելու»: Աստուած ասաց Մովսէսին. «Ես երկնքից հաց կթափեմ ձեզ համար. ժողովուրդը թող ամեն օր դուրս գնայ և ժողովէ ինչքան իրան մի օրուայ համար հարկաւոր է, իսկ վեցերորդ օրը թող երկու անգամ աւելի ժողովէ: Մովսէսը և Ահարոնը յայտնեցին այս բանն իսրայէլացիներին և ասացին. «Երեկոյեան պահուն կիմանաք դուք, որ Աստուած ձեզ հանել է Եգիպտոսից, իսկ առաւօտը նորա փառքը կտեսնէք, նա ձեր տրտունջը լսել է, մենք ովքեր ենք, որ մեզանից գանգատվում էք: Երեկոյեան ուտելու միս կունենաք, իսկ առաւօտեան՝ առատ հաց. վերջապէս դուք կիմանաք, որ նա է ձեր Աստուածը»: Երեկոյեան ժամանակ եկան լորամարկիները և ծածկեցին ամբողջ բանակը, իսկ առաւօտեան ցօղով էր պատած բանակը: Երբ ցօղը հեռանում էր, գետնի վերայ մնում էր կլոր և սպիտակ՝ եղեամի նման մի բան: Իսրայէլացիները երբ այս բանը տեսան, ասում էին միմեանց. «Այս ի՞նչ բան է»: Ժողովուրդը չգիտէր նորա ինչ լինելը: Մովսէսն ասաց. «Այս այն հացն է,

որ Աստուած ուղարկել է ձեզ ուտելու: Վեց օր շաբաթուակ ամեն ոք թող այնքան հաւաքէ, որքան որ ուտել կարող է, իսկ վեցերորդ օրը երկու անգամ աւելի կհաւաքէք, որովհետեւ շաբաթ է, հանգստեան օր է՝ սուրբ օր է»: Իսրայէլացիները այս հացի անունը մանանա դրին և առաւօտներն էին հաւաքում. գոյնը սպիտակ էր և մեղրահացի համ ունէր. երբ արեւը տաքանում էր, իսկոյն հալվում էր: Այսպէս նրանք միշտ մանանայ էին ուտում, քանի որ անապատումն էին:

Իսրայէլացիները յառաջ գնացին: Ժողովուրդը խմելու ջուր չուներ. սկսեցին նորից գանգատով Մովսէսին և ասել. «Ջուր տուր մեզ, միթէ մեզ և մեր անասուններին ծարաւից սպանելու համար դուրս բերեցիր Եգիպտոսից»: Մովսէսը յայտնեց Աստուծուն և ասաց. «Ի՞նչ անեմ ես այս ժողովրդի հետ, մի փոքր էլ որ մնայ, ինձ քարկոծ կառնեն»: Աստուած ասաց. «Ա՛ռ քո գաւազանը, որով ծովի ջուրը բաժանեցիր, ես քեզանից առաջ՝ մի ժայռի մօտ կանգնած կլինեմ. դու քո գաւազանով ժայռին կխփես և ջուրն այնտեղից իսկոյն կբղխէ ու ժողովուրդը կխմէ»: Մովսէսը հնազանդվեց Աստուծոյ հրամանին. նորա կամքը կատարեց և այնպէս էլ եղաւ:

Սորանից յետոյ եկան ամաղէկացիները և պատերազմեցին իսրայէլացիների հետ: Մովսէսն ասաց Յեսուին. «Քաջ մարդիկ ընտրիր, դուրս արի և պատերազմիր ամաղէկացիների հետ»: Յեսուն էլ այնպէս արաւ, ինչպէս որ Մովսէսն էր պատուիրել: Մովսէսը և Ահարոնը բարձրացան մի բլրի վերայ. Մովսէսը կարկառեց իւր ձեռները դէպի երկինք և աղօթումէր

Աստուծուն: Իսրայէլը յաղթեց և Յեսուն սրով հաբուածեց ամաղէկացիներին: Մովսէսն Աստուծոյ համար սեղան շինեց:

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու: Բանաս գծեռն քո և լցուցանես զնոսա քաղցրութեամբ կամօք քովք»: Սաղ. ճիւղ. 15—16.

Ամենքն էլ քեզ վերայ ունին դրած յոյսերը, դու ես տալի նրանց կերակուր իւր ժամանակին: Բաց ես անում քո ձեռները և ամենքին էլ բաւականացնում ես քո կամքովը:

«Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա. առ ամենեսեան, որ կարդան առ նա ճշմարտութեամբ»: Սաղ. ճիւղ. 18.

«Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումօրորմ»: Սաղ. ճբ. 8.

§ 38.

Յովթորի բարի խորհուրդը:

Մովսէսի աներ Յովթոր քուրմը երբ լսեց որ Աստուած իսրայէլի ժողովրդին Եգիպտոսից դուրս է հանել, վեր առաւ Սեփովրային, որին Մովսէսը ճանապարհից յետ էր դարձրել, իրա երկու թոռներին, գնաց անապատ և փեսայի մօտ մարդ ուղարկեց, որ իրան գայ: Մովսէսը աներոջ գալն իմանալուն պէս՝ գնաց նորա առաջը, երկրպագութիւն տուեց, համբուրեց և յետոյ վրանը տարաւ: Այնտեղ Մովսէսը պատմեց աներոջն այն ամենը, ինչ որ Տէրը արել էր Փարաւոնին և եգիպտացիներին. պատմեց նոյնպէս այն նե-

ղութիւնները, որոնք նա ճանապարհին քաշել էր և թէ ինչպէս Աստուած ազատել էր նորան: Յոթորը շատ ուրախացաւ Իսրայէլի Աստուծոյ գործած բարի գործերի համար և ասաց. «Օրհնեալ լինի ձեզ ազատող Աստուածը, այժմ գիտեմ, որ նա բոլոր աստուածներէց մեծն է»:

Հետեւեալ առաւօտ՝ Մովսէսն սկսեց ժողովրդի գանգատները վճռել. բազմութիւնը խռովածէր նորա շուրջը՝ առաւօտից սկսած մինչև երեկոյ: Յոթորն ասաց նորան. «Այդ լաւ բան չես անում—դու յոգնեցնում ես քեզ էլ, ժողովրդին էլ: Պաշտօնդ ծանր է, միայնակ չես կարող դատել այդ բազմութեանը: Լսիր ինձ, ես քեզ մի խորհուրդ կտամ, Աստուած ևս կօգնէ քեզ այդ բանում—դու եղիր միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ. նրանց համար կանոններ և օրէնքներ սահմանիր և սովորեցնու այն ճանապարհը, որով նրանք պէտք է գնան և այն գործքերը, որոնք պարտաւոր են գործելու: Ընտրիր քո ժողովրդի միջից արդարադատ, աստուածավախ, խոնարհ մարդիկ ու նրանց ժողովրդի վերայ դատաւոր նշանակիր—ոմանց 1,000 պետ, ոմանց 100 պետ, ոմանց 50 պետ և ոմանց 10 պետ: Եթէ մեծ գործք կատարանի, թող քեզ դիմեն, իսկ փոքրերը իրանք վճռեն: Այսպէս քո աշխատանքը կթեթեւանայ, նրանք էլ քեզ հետ ծանրութիւնը կտանեն—նրանք քո օգնականները կլինին»:

Մովսէսը լսեց Յոթորի խորհրդին և այնպէս արեց, ինչպէս որ նա էր ասել: Սորանից յետոյ Մովսէսը աներոջն արձակեց իւր երկիրը գնալու:

«Եւ մեծին խոնարհեցնող զգլուխ քո»: Սիրաք դ. 7.
Մեծին՝ դատաւորին պէտք է յարգես:

§ 39.

Մինայի օրէնստուութիւնը:

Եգիպտոսից դուրս գնալու երկրորդ ամսում իսրայէլացիները հասան Մինա անապատը և բանակ ձգեցին նոյն լեռան հանդէպ: Մովսէսը լեռու բարձրացաւ. Աստուած ասաց նորան. «Իսրայէլի որդւոց այսպէս կասես—դուք տեսաք թէ ես եգիպտացիներին ինչ արի. ինչպէս ես ձեզ արծուի թւերի վերայ առած ինձ մօտ բերեցի. եթէ դուք ինձ կլսէք և իմ ուխտը կպահէք, իմ ընտրեալ ժողովուրդը կլինիք բոլոր ազգերի մէջ. դուք կլինիք ինձ համար մի քահանայական թագաւորութիւն և սուրբ ժողովուրդ»: Մովսէսն իջաւ լեռնից, կանչեց ժողովրդի ձերերին և Աստուծոյ այս խօսքերը յայտնեց նրանց: Բոլոր ժողովուրդն իմիասին պատասխանեց. «Աստուծոյ բոլոր պահանջները կկատարենք»: Մովսէսը յայտնեց այս բանն Աստուծուն: Աստուած ասաց նորան. «Գնա՛ ժողովրդի մօտ, պատուիրիր նրանց լուսացուել և մաքրուել այսօր և վաղը՝ պատրաստիր երրորդ օրուան համար. ասիր որ մաքուր շորեր հագնեն. լեռան շուրջը ցանկ պատիր, որ ոչ ոք այնտեղ չբարձրանայ, ապա թէ ոչ՝ մօտեցողը մահով կմեռնի»:

Վերջապէս երրորդ օրը եկաւ: Առաւօտեան վաղ՝ լեռուն սկսեց որոտալ և կայծակել. թանձր ամպերը պատեցին սարի գլուխը—և փողի ձայնը լսելի կեր-

պով հնչում էր. ամենքը զարհուրեցան: Մովսէսը ժողովրդին բանակից դուրս հանեց և տարաւ լեռան ստորոտը: Սինա լեռնն ամբողջապէս ծխի մէջ կորած էր, կրակի բոցեր էին բարձրանում միջից և շարժվում էր—փողի ձայնը հետզհետէ սաստկանումէր:

Այդ ժամանակ Աստուած սկսեց խօսել ժողովրդի հետ և ասել. 1. «Ես եմ քո տէր Աստուածը. ես քեզ հանեցի Եգիպտոսից և ազատեցի նորա ծառայութիւնից, ինձանից զատ ուրիշ Աստուած չպիտի ունենաս: 2. Կուռք չշինես ո՛չ երկնքի և ո՛չ երկրիս ստեղծուածների նման ու երկրպագութիւն չտաս նրանց, որովհետեւ ես եմ քո Աստուածը՝ Աստուած նախանձոտ—ինձ ատող հայրերի մեղքը մինչև երրորդ, չորրորդ սերունդը նրանց որդիներից կհանեմ, իսկ ինձ սիրողներին և իմ հրամանը կատարողներին՝ մինչև հազարերորդ սերունդը չեմ մոռանայ: 3. Քո Աստուծոյ անունը իզուր բաների վերայ մի լռելի, նորա անունով սուտ մի երդուիր, որովհետեւ Աստուած իրան անունը սուտ երդուողներին անպատիժ չէ թողնում: 4. Յիշիր շաբաթ օրը և սուրբ պահիր նորան—վեց օր աշխատիր, իսկ եօթներորդ օրը, որը Աստուծուն է, հանգիստ եղիր, նորան նուիրիր: 5. Պատուիր քո հօրն ու մօրը, որ երկար կեանք ունենաս: 6. Մի սպանաներ: 7. Մի շնար: 8. Մի գողանար: 9. Քո ընկերի մասին սուտ վկայութիւն չտաս: 10. Մի ցանկանար քո ընկերի տանը, արտին, եզանը, իշին և այն ամենին, ինչ որ նորանն է:

Բոլոր ժողովուրդը լսում էր որոտի և փողի ձայնը, տեսնում էր կայծակները և լեռան ծխալը: Երկիւղից

զարհուրած ժողովուրդը հեռացաւ և այնտեղից էր խօսում Մովսէսի հետ և ասում. «Դ՞նա խօսիր մեզ հետ Աստուծոյ փոխարէն. մենք քեզ կսենք. մեզ ուղղակի Աստուծոյ հետ մի խօսեցնել տուր, ապա թէ ոչ ամենքս էլ կմեռնենք»: Մովսէսն ասաց. «Մի վախենաք, Աստուած կամենում էր ձեզ փորձել. նորա երկիւղը աչքից չհեռացնէք. յանցանք մի գործէք»: Ժողովուրդը մօտեցաւ, իսկ Մովսէսը լեռու բարձրացաւ: Աստուած խօսում էր Մովսէսի հետ: Մովսէսը լեռնից վայր իջաւ և յայտնեց ժողովրդին Աստուծոյ բոլոր ասածները, այլև այն բոլորը, ինչ որ իրաւունք ունին անելու: Այն ժամանակ ամենքը միաբերան սկսեցին աղաղակել և ասել. «Աստուծոյ բոլոր պատուիրանները կկատարենք»:

Մովսէսը դարձեալ բարձրացաւ լեռու և այնտեղ 40 օր մնաց: Երբ Աստուած իւր խօսակցութիւնը վերջացրեց Մովսէսի հետ Սինա լեռան վերայ, երկու քարէ տախտակներ տուեց նորան, որի վերայ Աստուած ինքն էր գրել այս պատուիրանները:

«Մեք սիրեսցուք զԱստուած, վասնզի նա նախ սիրեաց զմեզ»: Ի. Թ. Յովհ. դ. 19.

«Քանզի այս է սէրն Աստուծոյ, զի զպատուիրանս նորա պահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք». Ի. Թ. Յովհ. ե. 3.

§ 40.

Ոսկէ որթը:

Երբ ժողովուրդը տեսաւ, որ Մովսէսն այլ ևս չվերադարձաւ լեռնից, ժողովեցան Ահարոնի մօտ և ասացին. «Զինիր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն. այն մարդը՝ Մովսէսը, որը մեզ Եգիպտոսից դուրս հանեց, չգիտենք ինչ եղաւ»: Ահարոնը պատասխանեց նրանց. «Բերէք ինձ ձեր կանանց և աղջիկներն ոսկէ գնտերը»: Այն ժամանակ իւրաքանչիւրը հանեց իւր ականջի ոսկէ օղը և նորա մօտ բերեց. նա էլ վերցրեց և մի ոսկէ որթ՝ ձուլեց նորանից: Ոսկէ որթ ձուլելու միտք յայտնողները երբ տեսան, որ իրանց գործքը յաջողեց, աղաղակեցին ժողովրդին և ասացին. «Ահա ձեր Աստուածը, որը ձեզ Եգիպտոսից դուրս բերեց»: Ահարոնը սեղան կանգնեց, քարոզ կարդաց և ասաց. «Ասղը Աստուծոյ տօնն է»: Առաւօտեան վաղ՝ վեր կացաւ ժողովուրդը և ողջակէզ մատուցեց: Սորանից յետոյ սկսեցին ուտել խմել և պարել որթի չորս կողմը:

Այդ ժամանակ Մովսէսը իջաւ լեռնից՝ ձեռքին բռնած վկայութեան երկու տախտակները: Երբ բանակին մօտեցաւ, տեսաւ ոսկէ որթը և պարաւորներին, բարկացաւ, տախտակները ձեռքից վայր ձգեց լեռան ստորոտում և կոտրատեց: Յետոյ վերառաւ նրանց շինած ոսկէ որթը, կրակով այրեց, խարտոցեց, փոշի դարձրեց, ջրի մէջ ցանեց և խմացրեց իսրայէլացիներին: Ապա Ահարոնին դարձաւ և ասաց. «Այս ժողովուրդը քեզ ինչ արեց, որ սորան

այսպիսի յանցանքի մեջ ձգեցիր»: Ահարոնը պատասխանեց. «Մի բարկանար, քեզ ևս շատ լաւ յայտնի է սրանց չարութիւնը և յանդգնութիւնը»: Երբ Մովսէսը տեսաւ, որ ժողովուրդը յանցանք է գործել, մօտեցաւ բանակի դրանը և ասաց. «Աստուծուն հաւատարիմ մնացողները թող ինձ մօտ գան»: Ղեւի բոլոր որդիքը նորա մօտ հաւաքվեցան: Մովսէսն ասաց նրանց. «Մերկացրէք ձեր սրերը, անցէք բանակի մի ծայրից միւսը և կրկին յետ դառէք դէպի միւս դուռը ու սպանեցէք Աստուծոյ դէմ բոլոր մեղանշողներին: Ղեւի որդիքը կատարեցին Մովսէսի հրամանը: Այդ օրում ժողովրդից երեք հազար մարդ ընկաւ:

Առաւօտը Մովսէսն ասաց ժողովրդին. «Դուք մեծ յանցանք էք գործել, ես լեռը կը արձրանամ Աստուծոյ մօտ և կխնդրեմ, որ ձեր յանցանքը ներէ»: Մովսէսն ասաց Աստուծուն. «Ժողովուրդը մեծ յանցանք է գործել, ներիր նրանց, իսկ եթէ չես ների, այն ժամանակ իմ անունն էլ քո որդեգրութեան ցուցակից ջնջիր»: Աստուած ասաց Մովսէսին. «Յանցաւորների անունները կջնջեմ, իսկ դու գնա և առաջնորդիր նրանց»: Աստուած ասաց Մովսէսին. «Երկու քարէ տախտակներ բեր, որ առաջին տախտակների պատգամները նորից գրեմ»: Մովսէսը կատարեց Աստուծոյ պատուէրը: Աստուած գրեց տախտակների վերայ ուխտի խօսքերը և Մովսէսը բերեց նրանց իսրայէլի որդւոց համար:

«Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն

մտաց քոց. այս է մեծն եւ առաջին պատուիրան»։ Աւետ. Մատ. իբ. 37—38.

«Սիրիր քո տէր Աստուծուն ամբողջ սրտովդ, ամբողջ անձովդ և ամբողջ մտքովդ. այս է առաջին և մեծ պատուիրանը։

§ 41.

Լրտեսներ։

Իսրայէլացիները մի ամբողջ տարի բանակ ձգեցին Սինա լեռան մօտ։ Դորանից յետոյ չուեցին այնտեղից և բանակեցան Փառան անապատում։ Այն ժամանակ Աստուած խօսեց Մովսէսի հետ և ասաց. «Իւրաքանչիւր ցեղից մի-մի մարդ ուղարկիր Քանանացւոց աշխարհը, որպէսզի լրտեսեն»։ Մովսէսն էլ այնպէս արեց—12 մարդ ընտրեց ու Քանան ուղարկեց. դրանց մէջն էր և Յեսուն։ Մովսէսը պատուիրեց նրանց և ասաց. «Գնացէ՛ք և տեսէ՛ք, թէ ինչպիսի երկիր է Քանանը. հովքեր են նորա բնակիչները՝ զօրեղ, թէ՛ թույլ մարդիկ են. բազմամարդ է երկիրը, թէ՛ սակաւամարդ. հաստատուն և ամուր քաղաքներում են ապրում, թէ՛ վրանների տակ. արդե՞՞ք երկիրը պտղաւէտ է, թէ ոչ։ Ժիր եղէ՛ք վերադառնալիս, երկրի պտուղներից հետներդ վեր առէ՛ք»։

Սրանք գնացին և լրտեսեցին երկիրը՝ Սին անապատից մինչև Բոօր (Սիզոնի մօտ)։ Այնտեղից դարձան Քեբբոն և Հասան Ողկուզի ձորին, ուր մի Հատ որթ կտրեցին մի Հատ ողկուզով և երկու մարդիկ լծակով հետները բերին. առան նաև նուռն և թուզ։ Քառասուն օրից յետոյ, երբ լրտեսեցին, վերադարձան իսրայէլի որդւոց մօտ և պատմեցին նրանց, թէ ինչ-

պիսի երկիր է և ցոյց տուին հետները բերած պտուղները։ Նրանք ասում էին. «Մենք գնացինք այն երկիրը, ուր մեղր և կաթն է բլխում, ահա այս էլ նորա պտուղն է. բնակիչները զօրեղ մարդիկ են. քաղաքներն ամուր և մեծ»։ Ժողովուրդն սկսեց ձայն բարձրացնել և տրտնջալ։ Յեսուն և Քաղէբն ասացին. «Գնանք և Քանանը նուաճենք», իսկ միւս տասը լրտեսները հակառակում էին. «Մենք չենք կարող նրանց դէմ դուրս գալ, նրանք մեզնից շատ զօրեղ են»։ Այս խօսքերը մեծ աղմուկ հանեցին իսրայէլի որդւոց մէջ. նրանք շարունակեցին. «Այնտեղ այնպիսի Հսկայ մարդիկ տեսանք, որոց առաջ մենք մօրեխ էինք երևում»։

Այն ժամանակ ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց, սկսեց աղաղակել և լաց լինել. կրկին տրտնջացին Ահարոնին և Մովսէսին ու ասացին. «Նրանի՛ Եգիպտոսում կամ անապատում մեռած լինէինք»։ Եւ մէկը միւսին ասում էր. «Ընտրենք առաջնորդներ և վերադառնանք Եգիպտոս»։ Մովսէսը և Ահարոնը երեսի վրայ ընկան ժողովի առաջ, իսկ Յեսուն և Քաղէպը պատառեցին իրանց շորերը և ասացին ժողովականներին. «Մեր լրտեսած երկիրը շատ գեղեցիկ է, եթէ Աստուած գթայ մեզ, կարող է Քանան հասցնել։ Մի հեռացէ՛ք Աստուածանից և մի վախենաք նոյն երկրի մարդկանցից, մենք նրանց Հացի պէս կուտենք. Աստուած մեզ հետ է»։ Ժողովուրդը քիչ մնաց որ քարկոծէր երկուսին էլ։

Իսկույն երևեցաւ Աստուծոյ փառքը ժողովրդի առաջ ամպի մէջ՝ վկայութեան խորանի վերայ։ Աս-

տուած ասաց Մովսէսին. «Մինչև երբ պէտք է այս ժողովուրդն ինձ բարկացնէ. մինչև երբ չպիտի նա ինձ և իմ հրաշքներին հաւատայ. ես կընջեմ դրանց անունը երկրիս երեսից. նոցանից ոչ մինը չպիտի տեսնի այն երկիրը, որը ես նրանց հայրերին եմ խոստացել. նրանց ոսկորները կփտեն անապատում. քսան տարեկանից բարձրը, որոնք իմ դէմ տրտունջ բարձրացրին, չեն մտնի Քանան. ձեր որդւոցը միայն այնտեղ կհասնեն, իսկ դուք 40 տարի շարունակ անապատում հովիւներ կլինիք, որպէսզի զգաք, թէ ինչ ասել է առանց Աստուծոյ օգնութեան ապրել: Առաւօտեան վերադարձէք անապատ, որը տանում է դէպի Կարմիր ծովը»: Մովսէսն այս բոլորը յայտնեց իսրայէլի որդւոց: Ժողովուրդը սգում և ողբում էր. նա վերստին անապատ դարձաւ:

«Համբարձի զայս իմ ՚ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն: Օգնութիւն ինձ ՚ի Տեառնէ եկեսցէ, որ արար գերկինս եւ գերկիր»: Սաղ. ճի. 1—2.

Ես իմ աչքերը դէպի լեռները բարձրացրի, որտեղից իմ օգնութիւնը կգայ: Իմ օգնութիւնը Աստուծանից կգայ, որը երկինքն ու երկիրը ստեղծեց:

«Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ ի հնազանդութեան կայցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ Աստուհետեւ որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ»: Թ. ա. հոմ. Ժգ. 1—2.

Ամենայն ոք թող հնազանդ լինի բարձր իշխանութեանը, որովհետեւ չկայ իշխանութիւն, որ Աստուծանից չլինի: Ուրեմն իշխանութեան հակառակողը Աստուծոյ հրամանին է հակառակում:

§ 42.

Մովսէսի մահը:

Երբ 40 տարին անցաւ, իսրայէլի որդիքը կրկին չուեցին դէպի խոստացեալ երկրի սահմանները—դէպի Յորդանան: Այնտեղ Աստուած խօսեց Մովսէսի հետ և ասաց. «Քարձրացիր Նաբաւ լեռու և տես Քանանացոց երկիրը, որը ես իսրայէլի որդւոցը պիտի տամ, իսկ տեսելուց յետոյ «յաւելցիս առ ժողովուրդքս և դու»: Մովսէսը պատասխանեց. «Տէր, ժողովրդի վերայ մի առաջնորդ նշանակիր, որ դեկավարէ նրանց, մի դուցէ նա անտէր մնայ, ինչպէս մի հօտ առանց հովուի»: Աստուած պատասխանեց. «Վեր առ Նաւեայի որդի Յեսուն, որի մէջ Աստուծոյ ողի կայ. տա՛ր ժողովրդի մօտ և կանգնեցրո՛ւ Նդիազար քահանայի առաջ. դիր քո ձեռը նորա գլխին. տո՛ր նորան քո փառքը, քո զօրութիւնը, որպէսզի իսրայէլի բոլոր որդիքը նորան լսեն»:

Մովսէսը կանչեց ամենին և կատարեց այն բոլորը, ինչ որ Աստուած նորան հրամայել էր: «Ես արդէն 120 տարեկան ծերունի եմ, ձեզ այլևս առաջնորդել և ղեկավարել չեմ կարող, սորա համար Աստուած ասաց ինձ, որ ես Յորդանանը չպիտի անցնիմ: Միւլթարուեցէք և մի վախենաք, Աստուած ինքը ձեզ կառաջնորդէ, նա ձեզ չի մոռանայ. Յեսու Նաւեան կանցնի ձեզ հետ Յորդանանը, ինչպէս Տէրն ինքն ասաց»:

Մովսէսը դարձաւ Յեսունին և բոլոր ժողովրդեան ներկայութեամբ ասաց. «Քաջացիր և զօրացիր, դո՛ւ

պէտք է ժողովրդին այն երկիրը տանես, որ Աստուած խոստացաւ իսրայէլի որդւոց հայրերին. դ՛ու կբաժանես երկիրը նրանց մէջ»:

Սորանից յետոյ Մովսէսը յիշել տուեց ժողովրդին այն բոլորը, ինչ որ Աստուած արել էր նրանց հայրերին. նա ասաց. «Լսիր, իսրայէլ, մեր Տէրը՝ մեր Աստուածը մի է. դու պէտք է քո Տիրոջը՝ քո Աստուծուն քո ամբողջ սրտովդ, ամբողջ կարողութիւնովդ սիրես: Իմ այսօրուայ խօսածները դու սրտումդ պիտի պահես և քո որդւոց պատմես թէ՛ տանը, թէ՛ ճանապարհին, թէ՛ արթնութեան և թէ՛ քնի ժամանակ: Եթէ դու քո Տիրոջ՝ քո Աստուծոյ խօսքին կլսես, նրա օրհնութիւնը քեզ վերայ կլինի, իսկ եթէ դու քո Տիրոջ՝ քո Աստուծոյ խօսքին չես լսի, այն ժամանակ Նորա բարկութիւնը քեզ վրայ կգայ. նայիր, ժողովուրդ, ես այսօր քո առաջ կեանք և մահ, օրհնութիւն և նորովք դրի, որպէսզի դու կեանքն ընտրես:

Մովսէսն օրհնեց ժողովրդին այն օրհնութիւնով, որն Աստուած էր նրան ուսուցել. «Օրհնեսցէ զքեզ Տէր եւ պահեսցէ զքեզ, երեւցցուցէ զերեսս իւր ՚ի քեզ, եւ ողորմեսցի քեզ. ամբարձցէ Տէր զերեսս իւր ՚ի քեզ, եւ տացէ քեզ խաղաղութիւն»։ Մովսէս IV. գ. 25. 26. 27.

Սորանից յետոյ Մովսէսը Նաբաւ լեառը բարձրացաւ. Աստուած ցոյց տուեց նրան Քանանու ամբողջ երկիրը՝ մինչև Դան, մինչև վերջին ծովը, Երիֆովի շրջակայքը, որը հարուստ է արմաւենիներով։ Աստուած ասաց նորան. «Ահա այս է այն երկիրը,

որը ես խոստացել եմ Աբրահամին, Իսահակին և Յակովբին, այս բոլորը քո աչքովը տեսար, բայց դու այնտեղ չես մտնի»։ Այսպէս Աստուծոյ ծառայ Մովսէսը մեռաւ Մովաբացւոց երկրում. նորա գերեզմանի տեղը ոչ ոք չգիտէ մինչև այժմս էլ։ Իսրայէլի որդիքը Մովսէսի վերայ 30 օր սուգ արին։

«Լէր հաւատարիմ մինչեւ ի մահ եւ տաց քեզ զպսակն կենաց»։ Յայտ. Յովհ. բ. 10.

Հաւատարիմ եղիր մինչև ՚ի մահ, կեանքի պսակը քեզ կտամ։

«Եւ իմաստունք ծագեսցին իբրեւ զլուսաւորութիւն ՚ի հաստատութեան, եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս յաւիտեան»։ Դան. Ժբ. 3.

Իմաստունները լուսի պէս պէտք է փայլեն երկնակամարի վերայ, իսկ արդարներից շատերը՝ աստղի նման յաւիտեանս յաւիտենից։

Բ.

ՅԵՍՈՒ.

§ 43.

Յետուն նուաճում է Քանանը։

ա.

Մովսէսի մահուանից յետոյ Աստուած ասաց Յեսուին. «Իմ ծառայ Մովսէսը մեռաւ, վեր կաց, անցիր Յորդանանը ժողովրդի հետ և զնա՛ այն երկիրը, որը ես խոստացել եմ իսրայէլի որդիներին։ Այժմ չի համարձակուի հակառակել ձեզ, քանի որ դու կեն-

դանի ես. ինչպէս որ Մովսիսի Հետն եմ եղել, այնպէս էլ քեզ Հետ կլինիմ: Զօրացիր և քաջացիր. օրինաց գիրքը քո բերանիցը չհեռանայ. գիշեր ու ցերեկ նորա վերայ մտածիր և կատարիր նրա միջի գրուածները, այն ժամանակ քեզ ամենայն բան կը յաջողուի»:

Յեսուն պատուիրեց ժողովրդի առաջաւորներին և ասաց. «Մտէք բանակը, հրաման տուէ՛ք ժողովրդին և ասացէ՛ք որ պաշար պատրաստեն, որովհետեւ երեք օրից յետոյ պէտք է Յորդանանն անցնենք»: Յեսուն ծածուկ երկու լրտեսներ ուղարկեց, որ Երեքովը խուզարկեն. նրանք վերադարձան և պատմեցին, որ Աստուած ամբողջ երկիրը և Երեքովը մեր ձեռք մատնեց:

Սորանից յետոյ՝ առաւօտը վաղ վերկացաւ Յեսուն և ժողովրդի Հետ միասին դիմեց դէպի Յորդանանի ափը: Այստեղ ասաց քահանաներին. «Աւէ՛ք տապանակ ուխտին և անցէ՛ք ժողովրդի առաջով»: Քահանաներն առաջ անցան, իսկ ժողովուրդը Հետեւումէր նրանց Յորդանանի միջով և եկան մինչև Երեքովը:

Բ.

Երեքովի դռները կողպած էր իսրայէլի որդիների առաջ—քաղաքացիները ներս ու դուրս չէին անում: Աստուած ասաց Յեսունին. «Ահա Երեքովը քո ձեռքն եմ տալիս. պատուիրիր զինուորներին որ քաղաքի շուրջը մի անգամ պտտեն. վեց օր այդպէս շարունակիր: Եօթներորդ օրը հրամայիր քահանաներին փողերն առնեն և տապանակի առաջովը գնան. այդ օրը եօթն անգամ պտտեցէ՛ք քաղաքի շուրջը.

քահանաները թո՛ղ փողը փչեն, իսկ դուք փողի ձայնը լսելուն պէս՝ ամենքդ էլ աղաղակ բարձրացրէ՛ք. այս աղաղակի ժամանակ քաղաքի պարիսպները կկործանուին»:

Յեսուն այդպէս էլ արեց, ինչպէս որ Աստուած նորան հրամայել էր: Եօթներորդ օրում, երբ քահանաները եօթներորդ անգամ փողը փչեցին, ժողովուրդն սկսեց աղաղակել—քաղաքի պարիսպները կործանվեցան, ժողովուրդը ներս մտաւ, աւերեց և կոտորեց բոլորը, ինչ որ կար, թէ մարդ և թէ կենդանի, իսկ մնացածը կրակ տուին, այրեցին:

Գ.

Գաբաւոնի բնակիչները, երբ լսեցին որ Յեսուն Երեքովի Հետ այսպէս խիստ է վարվել, խորամանկութիւն գործ դրին—գետպաններ ուղարկեցին իսրայէլացիների մօտ. հին շորեր հագան. վեր առան պատուած և կարկատած զինու տկեր, մաշուած կօշիկներ չորացած և բորբոսնած հացեր ու եկան բանակ Յեսունի մօտ և ասացին. «Մենք հեռու տեղից ենք գալի, ամենայն բան, ինչ որ ունէինք, նոր էր, երբ դէպի ձեզ չուեցինք, բայց երկար ճանապարհորդութեան ժամանակ ամենայն ինչ հնացաւ: Այժմ մեզ Հետ դաշն կապեցէ՛ք»:

Յեսուն խաղաղութիւն արաւ, դաշը կապեց և խոստացաւ նրանց չվնասել. ժողովրդեան իշխանները ևս երգում կերան և նոյնը խոստացան: Իսրայէլի որդիները երեք օրից յետոյ դիմեցին դէպի Գաբաւոն քաղաքը. այստեղ իմացաւ որ սրանք իւր հարևանն են եղել: Յեսուն կանչեց քաղաքացիներին և

ասաց. «Ի՞նչու խաբեցիք մեզ»: Նրանք պատասխանեցին. «Երկիւղեց, մեր կեանքն ազատելու համար. այժմ մեր կեանքը քո ձեռքումն է, արա՛ ինչ կամենումես»: Յեսուն խնայեց նրանց կեանքը իրանց կապած դաշի և տուած խոստման համար, բայց բոլորին էլ փայտ կտրող և ջուր բերող դարձրեց իսրայէլացիներին համար:

Դ.

Երուսաղէմի թագաւորը երբ այս բանը լսեց՝ շատ վախեց. նա դաշն կապեց ամովրհացի չորս թագաւորների հետ, որոնք չուեցին և բանակ ձգեցին Գաբաւոնի շուրջը: Գաբաւոնի բնակիչները մարդ ուղարկեցին Գաղգաղա իմաց տուին Յեսուին ու ասացին. «Հտապով արի և ազատի՛ր մեզ ամովրհացիներից»: Յեսուն զիշերով աճապարեց այն կողմը իւր զինուորուած մարդկանցով: Աստուած ասաց Յեսուին. «Մի՛ վախենար, ես նրանց քո ձեռքը կմատնեմ»: Այսպէս Յեսուն յանկարծակի թշնամու վերայ եկաւ և Գաբաւոնի մօտ մի մեծ պատերազմ տեղի ունեցաւ: Աստուած ամովրհացիներին սարսափեցրեց—մեծ կարկուտ թափեց նրանց զլխին և ցիր ու ցան արեց. իսրայէլացիները հետևեցին նրանց: Յեսուն աղօթեց և ասումէր. «Կանգնիր, արև՛, Գաբաւոնի զիմացը»: Արևը կանգ առաւ. երկնակամարի վերայ և մայր չմտաւ, մինչև որ Յեսուն թշնամուն ոչնչացրեց:

Այսպէս Աստուած Իսրայէլի համար պատերազմեց: Յեսուն կրկին գիմեց գէպի բանակը Գաղգաղա:

Այստեղ Յեսուին իմաց տուին, որ հինգ թագաւորներ են գտել այլի մէջ թաք կացած: Յեսուն հրա-

մայեց դուրս բերել նրանց, գլխատել տուեց և հինգ փայտից կախեց: Երեկոյեան վեր առան նրանց դիակները, ձգեցին նոյն այլի մէջ և մի մեծ քար գրին բերանին:

Ե.

Յեսուն 31 թագաւորների յաղթեց. նրանց երկիրները նուաճեց ու տուեց իսրայէլի որդիներին որպէս ժառանգութիւն՝ իւրաքանչիւր ցեղին իւր բաժինը յատկացնելով: Ռուբէնի, Գատի և Մանասէի ցեղի մի մասը ստացան Յորդանանի միւս կողմի (յայնկոյս Յորդանանու) երկիրները: Ղաիի որդիները ժառանգութիւն չստացան, այլ դորա փոխարէն 48 քաղաքներ բոլոր ցեղերի երկիրներում: Յուդայի սերունդն ստացաւ Մեռեալ ծովի և փղշտացւոց երկրի միջի եղած տարածութիւնը: Իսրայէլացիները որպէս ժառանգութիւն՝ տուին Յեսուին Թամնաթսարա քաղաքը, որ գտնվումէ Եփրեմի լեռների մէջ: Տապանակ ուխտին բերին Սելով քաղաքը և զրին վկայութեան խորանի մէջ:

Այսպէս ժողովուրդը բնակուեց Քանանում. այն բարիքները, որ Աստուած խոստացել էր նրանց, բոլորն էլ ստացան: Ամենայն բան կատարուեց:

«Սա է իմ Աստուած եւ փառաւոր արարից՝ զսա՛ Աստուած հօր իմոյ, եւ բարձր արարից զսա՛»: II. Մովս. ԺԵ. 3.

Սա է իմ Աստուածը և ես կփառաւորեմ նորան, սա իմ հօր Աստուածն է և ես կբարձրացնեմ նորան:

Յետուի մահը:

Երբ Աստուած խորաշէլացիներին հանգստացրեց թշնամիներէ յարձակումներէց, Յետուն կանչեց բոլոր ժողովրդին՝ ծերերին, իշխաններին, դատաւորներին և դպիրներին ու ասաց նրանց. «Ես ծերացել եմ. իմ օրերն անցել են, դուք տեսաք Աստուած ինչ արեց հեթանոսներին. ինչպէս պատերազմեց նրանց հետ ձեր փոխարէն. ձեր մինը նրանց հաղարին հալածեց. զգոյշ եղէք այսուհետև և ձեր Աստուծուն սրտանց սիրեցէք. կատարեցէք Մովսիսի բոլոր օրէնքները: Հաւատարիմ, արդարացի ծառայեցէք նորան. եթէ չէք կամենում ծառայել, այսօրուանից ընտրեցէք ձեզ համար մի այլ Աստուած, իսկ ես և իմ տունը նոյն Աստուծուն կ'ծառայենք»:

Ժողովուրդը պատասխանեց. «Աստուած մի արացէ. մենք ևս նոյն Աստուծուն կ'ծառայենք, որովհետև նա է մեր Աստուածը»: Այն ժամանակ Յետուն դաշը կապեց ժողովրդի հետ և մի մեծ քար կանգնեցրեց որպէս վկայ այս ուխտի: Յետոյ մեռաւ Յետուն. նա արդէն 110 տարեկան էր. նորան թաղեցին Նփրեմի լեռների մէջ: Յովսէփի ոսկորները, որ իսրայէլի որդիքը իրանց հետն էին բերել, թաղեցին Սիւլեմ քաղաքում:

«Այն հաւատարիմ մինչեւ 'ի մահ, եւ տաց քեզ զպատկն կենաց»: Յայտ: Յովհ Բ. 10.

ՄԻՒՍ ԴԱՏԱԻՈՐՆԵՐԸ:

Քեդէոնը որպէս իսրայէլի դատաւոր:

ա.

Յետուն մեռաւ. մեռել էին և նրա ժամանակից մարդիկը. սորանցից յետոյ մի նոր սերունդ լառաջ եկաւ: Այն ժամանակ իսրայէլի որդիները սկսեցին ամուսնանալ հեթանոս աղջիկների հետ և իրանց աղջիկներն էլ նրանց կնութեան տալ. կրկին մոռացան ճշմարիտ Աստուծուն և սկսեցին կուռքեր պաշտել: Աստուած 7 տարի շարունակ մատնեց նրանց մաղիամացուոց ձեռքը: Ինչ որ իսրայէլացիները ցանում էին, հնձի ժամանակ գալիս էին մաղիամացիները, չափշտակում էին և ոչնչացնում ցանքերը, այնպէս որ իրենց երկրում ոչ հաց էր մնում և ոչ կենդանի: Իսրայէլացիները լիշեցին Աստուծուն և սկսեցին օգնութիւն խնդրել նորանից:

Այն ժամանակ Աստուած երևաց Քեդէոն անունով մէկին, որը Մանասէի ցեղիցն էր և ասաց. «Աստուած քեզ հետ է, ո՞վ անյաղթելի հերոս, գնա՛, ազատի՛ր իսրայէլի որդիներին մաղիամացիների ձեռքից»: Քեդէոնը պատասխանեց. «Ի՞նչով կարող եմ ես ազատել իսրայէլացիներին, ես փոքր բարեկամութիւն ունիմ Մանասէի ցեղի մէջ, բացի այդ իմ հօր տան կրտսեր անդամներից մինն եմ»: Աստուած ասաց նրան. «Ես քեզ հետ կլինեմ,

դու մադիամացիներին կյաղթես ինչպէս մի մարդու. կործանի՛ր ԲաՀաղի սեղանը, որ քո հօրնէ պատկանում. կոտորի՛ր, նրա շուրջ գտանուող անտառը և շինի՛ր Աստուծոյ Համար մի սեղան այս ժայռի կատարին. ա՛ռ մի ողջակէզ և զոհի՛ր նոյն անտառի փայտով»:

Գեղէոնը վեր առաւ իւր ծառաներից տասն հոգի և կատարեց Աստուծոյ հրամանը: Նա այս բանը գիշերով կատարեց: Առաւօտը՝ երբ քաղաքի բնակիչները վեր կացան, տեսան որ ԲաՀաղի սեղանը կործանուել է, իսկ անտառը կտրտված, և մի ողջակէզ դրած Եհովայի սեղանի առաջ: Այն ժամանակ սկսեցին միմեանց նայել և ասել. «Ո՞վ է այս բանն արել»: Ամենքը յուզված որոնումէին կործանողին և ասում. «Այս բանը անշուշտ Յովասի որդի Գեղէոնն արած կլինի»:

Քաղաքացիները Յովասի մօտ եկան և ասացին. «Դուքս բեր քո որդուն, նա պէտքէ մեռնի, որովհետեւ ԲաՀաղի սեղանը կործանել է»: Իսկ Յովասն ասաց իւր շուրջ գտանուողներին. «Դուք կամենում էք ԲաՀաղի փոխարէն դատել, եթէ նա Աստուած է, թո՛ղ ինքն իրեն պաշտպանէ և վրէժխնդիր լինի իւր սեղանը կործանողից»:

Բ.

Մադիամացիները դաշտավայրի վրայ բանակ էին ձգել. Գեղէոնը հրամայեց եղջիւրները փչել. դեսպաններ ուղարկեց Մանասէի և իսրայէլի միւս ցեղերի մօտ, որպէսզի իրեն հետեւին: Անթիւ զէնք կրող մարդիկ Հաւաքուեցան Գեղէոնի մօտ. նա առաջնորդեց նրանց դէպի այն աղբիւրը, որի հիւսի-

սային կողմում բանակ էին ձգել Մադիամացիները: Աստուած ասաց Գեղէոնին. «Քո Հետ եղած ժողովուրդը շատ շատէ. թերեւ իսրայէլը պարծենայ և ասէ թէ իմ բազուկն ինձ ազատեց: Խօսի՛ր ժողովրդի Հետ և յայտնի՛ր որ երկչոտները հեռանան»: Այն ժամանակ 22,000 հոգի յետ դարձան, մնաց 10,000 միայն: Աստուած կրկին անգամ ասաց Գեղէոնին. «Գարձեալ շատէ զօրքդ, 300 մարդ բաւականէ, մնացածն արձակի՛ր»: Գեղէոնը կատարեց Աստուծոյ հրամանը: Մադիամացիների բանակը հովտի մէջն էր, իսկ իրենք բարձրումն էին:

Այս գիշերին Գեղէոնն ասաց իւր 300-ին «Վեր կացէ՛ք, Աստուած մադիամացուց բանակը ձեր ձեռքն է մատնելու»: Երեք հարիւր հոգին երեք մասնի բաժանեց և իւրաքանչիւրին մի եղջիւրէ փող և մի սափոր տուեց մէջը վառած և ասաց. «Ինձ նայեցէ՛ք, ինչ որ ես կանեմ, նոյնն էլ դուք արէ՛ք: Երբ ես փողը կփչեմ, ինձ մօտ եղողները թո՛ղ նմանապէս փչեն և աղաղակեն. «Այստեղ է Աստուծոյ և Գեղէոնի սուրը»:

Գեղէոնը գիշերով իւր 100 մարդով մադիամացիների բանակը մտաւ և հրամայեց փողերը փչել ու սափորները կոտրատել: Երեք գնդերն էլ սկսեցին փողերը փչել և սափորները փշրտել, ջահերը ձախ ձեռին բռնած, փողերն աջ, սկսեցին աղաղակել. «Այստեղ է Աստուծոյ և Գեղէոնի սուրը»: Մադիամացիների զօրքը զարհուրած սկսեց աղաղակ բարձրացնել և փախչել. իսրայէլացիները հետևեցին նրանց և կոտորեցին:

Այս բանից յետոյ իսրայէլացիներէն ոմանք՝ ասացին Քեղէօնին. «Յղիւր մեզ վերայ իշխան դու, քո որդիւն և քո որդու որդիւն»: Քեղէօնը պատասխանեց. «Ես ձեր իշխանը չեմ լինի և ոչ իմ որդիւն, այլ Աստուած է ձեր իշխանը»: Քեղէօնը գարձաւ դատաւոր. 40 տարի շարունակ երկիրը նորա կենդանութեան ժամանակ խաղաղ էր:

«Զի ամենայն կուռք հեթանոսաց սնոտիք են. այլ Տէր Աստուած մեր ճշմարիտ»: Երեմիա Ժ. 3. 10.

Հեթանոսների բոլոր աստուածները սուտ բաներ են, մեր տէր Աստուածը միայն ճշմարիտ է:

«Աստուած մեր ապաւէն եւ գորութիւն, օգնական ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ»: Սաղ. խե. 2.

Աստուած է մեր ապաւէնը և գորութիւնը. նեղութիւնների մէջ նա մեզ շատ օգնեց:

§ 46.

Սամփսոն:

ա.

Իսրայէլի որդիները կրկին հեռացան Աստուածանից և սկսեցին Բազաղին պաշտօն մատուցանել, ուստի և Աստուած մատնեց նրանց փղշտացիները. 40 տարի շարունակ: Դորանից յետոյ Աստուած Սամփսոն անունով մինին դատաւոր ընտրեց: Այս դատաւորը Թամնաթա գնաց, որսէսգի Փղշտացիների աղջիկներից իրան համար մի կին ընտրեց: Երբ նրանց այգեստաններին հասաւ, մի

երիտասարդ առիւծ մռնչալով նորա առաջը դուրս եկաւ: Սամփսոնը այս գաղանին ուլի նման ձեղքեց: Մի փոքր ժամանակից յետոյ, երբ նոյն ճանապարհով գնումէր, կամեցաւ առիւծի գէշը տեսնել և զրտաւ նրա բերանի մէջ մի գունդ մեղու և մեղր:

Սամփսոնը փղշտացիներից մի աղջիկ ընտրեց ու հարսանիք արաւ Թամնաթայում. 30 փղշտացի երիտասարդներ ներկայ էին հարսանիքին որպէս հիւր: Սամփսոնն ասաց նրանց. «Ես ձեզ մի հանելուկ կասեմ, եթէ դուք մինչև հարսանեաց եօթներորդ օրը գտնէք, ինչնից 30 ձեռք շոր կստանաք, իսկ եթէ չկարողանաք, դուք տուէք ինձ նոյնքան շոր: Համաձայնեցան և նա պատմեց հանելուկը. — «Իկերչէ ել կերակուր և ի հօրէ ել քաղցր»: այսինքն ուտողից ուտելէք դուրս եկաւ և հօրից քաղցր: Նրանք չէին կարողանում գտնել այս հանելուկը. ուստի գնացին Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Խաբէր քո մարդուն և այս հանելուկի միտքն իմացիր, իսկ եթէ չես անի, այն ժամանակ մենք քեզ էլ, քո հօր տունն էլ կայրենք»: Կինը այնքան խնդրեց և լաց եղաւ, մինչև որ մարդը յայտնեց նորան գաղտնիքը և նա էլ իւր հայրենակից երիտասարդներին պատմեց: Եօթներորդ օրը՝ արեգակի մտնելուց առաջ փղշտացիներն ասացին Սամփսոնին. «Ինչ կայ մեղրից քաղցր և առիւծից հօր»: Սամփսոնը պատասխանեց. «Եթէ դուք իմ կնոջը չստիպէիք, չէիք կարողանայ իմանալ»:

Սամփսոնը գնաց փղշտացիների մի ուրիշ քաղաք. 30 մարդ սպանեց. նրանց շորերը բերեց և տուեց հանելուկը գուշակողներին, իսկ ինքը վերադարձաւ

Յուդայի երկիրը: Աները Սամփսոնի կնոջը տուեց այն-
տեղի երկտասարդներից միսին: Մի առ ժամանակից
յետոյ վերադարձաւ Սամփսոնը իւր կնոջ մօտ և տեսաւ
որ ուրիշին են տուել. բարկացաւ և կամեցաւ վրէժ-
խնդիր լինել բոլոր փղշտացիներից, ուստի բռնեց 300
աղուէս. զոյգ-զոյգ պոչ պոչի կապեց. պոչերի մէջ
վառած ջաշ գնելով՝ արձակեց փղշտացիների ցորենի
արտերի մէջ և այլեց նրանց արտերը, այգիները և
ձիթենու ծառերը: Թամնաթա եկան փղշտացիները
և Սամփսոնի աներոջն ու կնոջը միասին այլեցին:
Սամփսոնը պատերազմեց նրանց հետ և շատերին
սպանեց:

Փղշտացիները յարձակուեցան Յուդայի երկրի
վերայ և ստիպեցին իսրայելի որդիներին Սամփսոնին
կապած իրանց յանձնելու: Բայց Սամփսոնը իր կամ-
քով թող տուեց իւր հայրենակիցներին, որ կապեն
իրան և թշնամու ձեռքը մատնեն: Երբ փղշտացի-
ները տեսան նրան, սկսեցին ուրախութեան աղաղակ
բարձրացնել: Սամփսոնը կտրատեց չուանը, կարծես
թէ թել լինէր՝ դտաւ մի սատկած իշի ծնօտ և նորա-
նով 1,000 մարդ սպանեց: Նա շարունակումէր իւր
դատաւորութիւնը իսրայելի վերայ:

Սորանից յետոյ Սամփսոնը զնաց փղշտացիների
մի ուրիշ քաղաք, որի բնակիչները քաղաքի դռները
կողպեցին գիշերով և հսկում էին առաւօտեան խեղ-
դամաշ անելու նորան: Սամփսոնը կէս գիշերին վեր
կացաւ, բարձրացրեց քաղաքի դռները իւրեանց սեմով
ու նեղով, շալակեց և տարաւ քաղաքի մօտ գտնուող
լեռան գլուխը:

Մի քանի ժամանակից յետոյ Սամփսոնը դտաւ
մի ուրիշ փղշտացի աղջիկ Գալիլա անունով և ամուս-
նացաւ նորա հետ:

բ.

Փղշտացիների իշխանները եկան Սամփսոնի կնոջ
մօտ և ասացին նորան. «Եթէ դու քո մարդուն մեր
ձեռքը կմատնես, մեզանից իւրաքանչիւրը կը վճարէ
քեզ հազար և հարիւր արծաթ»: Երբ Սամփսոնը քնեց,
կինը փղշտացիներին իւր մօտ կանչեց: Նրանք բռնե-
ցին, Սամփսոնին երկաթէ շղթաներով կապեցին,
աչքերը բրեցին, Գազա քաղաքը տարան և բանտ
դրին՝ որտեղ նա աղումէր:

Սորանից յետոյ փղշտացիները և նրանց իշխան-
ները հաւաքուեցան իրանց Գագոն կուռքին զոհ
մատուցանելու. այնտեղ ասացին նրանք. «Մեր Աստու-
ածը մեր թշնամին մեր ձեռքը մատնեց»: Երբ նրանց
սրտերը զուարթացան, Սամփսոնին բանտից դուրս
բերին, որ իրանց առաջը խաղայ. կանգնացրին տան
մէջ՝ երկու սիւնների մէջ տեղում, որոնց վերայ տուններ
հաստատուած: Տունը լիքն էր այլ ու կին մարդկանց
բաղմութիւնով, իսկ տանիքի վերայ մօտ 3,000 հոգի
կանգնած էին: Յանկարծ՝ բռնեց Սամփսոնը տան
միջի երկու սիւններից և աղաղակեց. «Թող ես էլ այս
ալլազգիների հետ մեռնեմ»: Այս ասաց և քանի ոյժ
կար իւր մէջ, շարժեց երկու սիւնները, որոց վերայ տունն
էր հաստատուած. սիւնները վալը ընկան. տունը
քանդուեց իշխանների ու նրանց հետ ուրախացողների
գլխին: Այստեղ Սամփսոնն աւելի փղշտացի սպանեց,
քան թէ մինչև հիմա իւր կեանքում սպանել էր:

«Աստուծով արասցուք զօրութիւն» (գործ): Սաղ.
ՏԺ. 14.

Աստուծով զօրութիւն կգործենք:

«Իմ է վրէժխնդրութիւն եւ ես հատուցից՝ ասէ
Տէր»։ Թ. ա. հոմ. Ժբ. 19.

§ 47.

Հռութ:

Գատաւորների կառավարութեան ժամանակ իւրայեւացիների երկրում սով ընկաւ: Մի մարդ Եղիմէլէք անունով իր Նոոմին կնոջ և երկու որդիների հետ Ֆուգայի Բեթղեհէմ քաղաքից գնաց մովաբացիների երկիրը: Եղիմէլէքը մեռաւ այնտեղ, իսկ նրա որդիները ամուսնացան այնտեղացի աղջիկների հետ, որոնցից մինի անունը Որփա էր, իսկ միւսինը՝ Հռութ: Տասն տարուց յետոյ Նոոմին երկու որդիներն էլ մեռան: Այդ ժամանակամիջոցներում լսեց, որ հայրենի երկրում տո՛ւն անցել է, ուստի վեր կացաւ իւր հարսների հետ և կամեցաւ յետ դառնալ Ֆուգայի երկիրը: Ճանապարհին սկեսուրն ասաց իւր հարսներին. «Գարձէք ձեր ծնողների մօտ, Աստուած օրհնէ ձեզ, դուք լաւ կնութիւն արիք իմ որդիներին և բարի հարսներ էք եղել ինձ համար:» Հարսներն սկսեցին լաց լինել: Որփան փաթաթուեց սկեսրոջը, համբուրեց և հրաժարական ողջոյն տուեց. իսկ Հռութը չէր կամենում դառնալ: Նոոմին ասաց. «Տեսնումես Որփան յետ դարձաւ իւր ծնողաց մօտ, դու էլ հետեւիր նորան»: Հռութը պատասխանեց. «Աստուած մի արասցէ, որ ես քեզ միայն

թողնեմ և հեռանամ. ուր որ դու կերթաս, ես էլ հետդ կը գամ. ուր դու կմնաս, այնտեղ էլ ես. քո ազգը իմ ազգը կլինի և քո Աստուածն իմ Աստուածը. ուր որ դու կմեռնես, այնտեղ էլ ես. մահը միայն ինձ քեզնից կբաժանէ»: Երբ Նոոմին տեսաւ որ Հռութը վճռելէ իւր հետ գնալու, այդ մասին էլ խօսք չարեց: Այսպէս նոքա միասին գնացին մինչև Բեթղեհէմ: Այն ժամանակ Նոոմին ասաց. «Հարուստ հեռացաւ ես ձեզանից, իսկ աղքատ լետ դարձրեց ինձ Աստուած»: Երկուսն էլ բնակուեցին Բեթղեհէմում:

Հռութի ժամանակ էր: Հռութը գնումէր դաշտ և հասկ էր ժողովում: Մի օր գնաց Բոոսի արտը: Այդ միջոցն ժամանակ եկաւ Բոոսը Հնձողների մօտ և սերով ողջունեց նրանց ասելով. «Աստուած ձեզ հետ լինի»: Հնձողները պատասխանեցին. «Աստուած քեզ օրհնէ»: Բոոսը հարցրեց. «Ո՞ւմ աղջիկն է այդ»: Վերակացուն պատասխանեց. «Սա այն մովաբացի աղջիկն է, որը Նոոմինի հետն է դարձել»: Բոոսն ասաց Հռութին. «Աղջիկս, մի գնա ուրիշի արտը հասկ ժողովելու, այլ մնա իմ աղջիկների մօտ, որտեղ նրանք կհնձեն, դու էլ նրանց յետեւից կըգնաս, եթէ կծարաւես, գնա այն ամաններից խմիր, որտեղից իմ ծառաներն են խմում»: Հռութը պատասխանեց. «Ես մի օտարական կին եմ, իմ ո՞ր արժանաւորութեանս համար եմ այդպիսի մեծ ողորմութեան եմ արժանանում»: Բոոսը պատասխանեց. «Ինձ ամենայն բան պատմեմք, թէ դու ինչպէս ես վարուել քո սկեսրոջ հետ՝ քո մարդու մահուանից յետ—դու թո-

ղել ես քո հօրն ու մօրը, քո ծննդեան տեղը և եկել ես սկեսրոջդ հետ՝ քեզ մի անծանօթ երկիր»։ Առաջի ժամանակ Բոսոր Հռութին հաց տուեց. նա կերու և մի կտոր էլ սկեսրոջ համար պահեց։ Երբ Հռութը վեր կացաւ դարձեալ հասկ ժողովելու, Բոսոր պատուիրեց ծառաներին և ասաց. «Թող տուէք նորան որաների միջից հաւաքելու և փոքր էլ աւելորդ թափեցէք, որ ժողովէ»։ Այսպէս Հռութը մինչև երեկոյց հասկ հաւաքեց. երբ մութն ընկաւ, շալակեց հաւաքածը և տուն դարձաւ։

Սկեսուրը հարսի հաւաքած հասկերը և հետը բերած հացը տեսնելով՝ ասաց. «Ո՞րտեղ էիր այսօր հասկ հաւաքում»։ Հարսը պատասխանեց. «Մի Բոսոս անունով մարդու արտում»։ Նոոմին պատասխանեց. «Աստուած օրհնէ նորան. նա մեր ազգականն է»։ Այսպէս Հռութն ամենայն օր գնումէր Բոսոսի արտը և հասկ էր ժողովում մինչև հնձի վերջանալը։ Բոսոր Հռութին հաւանեց և նրա հետ ամուսնացաւ։ Աստուած նրան մի որդի տուեց, որին անուանեցին Ովբէգ։ Նոոմին էլ դաջեակ դառաւ մանկանը։ Ովբէգը Յեսսէի հայրն եղաւ, իսկ Յեսսէն էլ՝ Դաւթի։

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց»։ Յայտ. Յովհ. Բ. 10.

§ 48.

Հեղի և Սամուէլը։

ա.

Հեղիի քահանայապետութեան ժամանակ ապրումէր մի մարդ՝ Եղկանա անունով՝ իւր կին Աննայի

հետ։ Նրանք անդաւակ էին։ Եղկանան սովորութիւն ունէր ամենայն տարի Սելով գնալու և Աստուծուն զոհ մատուցանելու. նրա հետ գնումէր և իւր կին Աննան։ Սա մի անգամ Սելով գնալիս խիստ տրտմեց, լաց եղաւ, աղօթեց Աստուծուն և ասաց. «Տէր Սաբաուվթ, քեզ յայտնի է քո աղախնի նեղութիւնը, եթէ նրան մի որդի ընծայես, ես նրան քեզ կնուիրեմ, որ մինչև իւր մահը ծառայէ», Հեղի քահանայապետը նստած էր վկայութեան խորանի դրանը և ուշադրութեամբ նայումէր Աննայի բերանին, որովհետև նորա շրթունքները շարժվումէին, իսկ ձայն չէր լսվում։ Եւ որովհետև երկար տևեց այս աղօթքը, Հեղին ասաց. «Աննա, քանի աղօթես»։ Աննան պատասխանեց. «Ես մի վշտացած կին եմ, սիրտս Աստուծոյ առաջ բաց եմ անում»։ Հեղին ասաց. «Դարձիր խաղաղութեամբ քո տեղը, իսրայէլի Աստուածը քո խնդիրը կկատարէ»։ Կինը վերադարձաւ տուն. նրա սիրտն այլ ևս այնպէս տխուր չէր։

Աստուած լիջեց Աննային և նորան մի որդի պարգևեց, որին անուանեցին Սամուէլ, որ նշանակումէ «Աստուածանից խնդրած»։ Երբ մանուկը մի քանի տարեկան դառաւ, մայրը բերեց նորան Սելով՝ Հեղի քահանայապետի մօտ և ասաց. «Տէր, ես այն կինն եմ, որ քեզ մօտ կանգնած աղօթում էի այս մանկան համար. Աստուած իմ աղօթքը լոցեց, ուստի ես նորան եմ ընծայում իւր տուածը մինչև իմահ»։ Աննան զոհութիւն մատուցեց Աստուծուն և տուն դարձաւ, իսկ մանուկը Հեղիի մօտ Աստուծոյ սպասաւոր դառաւ։

բ.

Հեղին որդիքը վատէին—նրանք Աստուծոյ երկիւղ չունէին. իրանց քահանայական իրաւունքը չէին ճանաչում: Խլում էին իտրայէլացի ուխտաւորներէից զոհի մեծ մասը և անվայել գործքեր էին անում: Ծերունի Հեղին գիտէր նրանց բոլոր արարմունքները, նա յաճախ ասումէր նրանց. «Ի՞նչու էք այդպէս անում. ձեր վատ վարմունքով ժողովրդին դալթակղեցնում էք»: Բայց նրանք չէին լսում: Իսկ մանուկ Սամուէլն աճումէր և զօրանում, նորան սիրում էին և Աստուած և մարդիկ: Աստուծոյ խօսքը շատ թանգ էր այդ ժամանակներում, չէր գտնվում, Հազուադիւր էր:

Մի անգամ, երբ Սամուէլը վկայութեան խորանի առաջ՝ Տիրոջ տանը քնածէր, ձայն լսվեց որ ասումէր. «Սամուէլ, Սամուէլ»: Սամուէլը վազեց Հեղինի մօտ և ասաց. «Այտեղ եմ, ինչու և կանչեցիր ինձ» Հեղին պատասխանեց. «Ես քեզ չեմ կանչել, դարձի՛ր և քնի՛ր»: Աստուած Սամուէլին երկրորդ, երրորդ անգամ կանչեց: Սամուէլը կրկին անգամ գնաց Հեղինի մօտ: Հեղին նկատեց որ Աստուած է նորան կանչողը, ուստի ասաց. «Դարձի՛ր և քնի՛ր, եթէ մի անգամ էլ ձայն լսես, ասի՛ր. ասա՛ Տէ՛ր, քո ծառան լսումէ՛քք»: Սամուէլը դարձաւ իւր տեղը: Աստուած կրկին անգամ ձայն տուեց. «Սամուէլ, Սամուէլ»: Սամուէլը պատասխանեց. «Ասա՛ Տէ՛ր, քո ծառան լսումէ՛ք»: Աստուած ասաց Սամուէլին. «Ես կամենումեմ Հեղինին իւր որդիների հետ դատել, որովհետեւ նորան յայտնիէ որդւոց անվայել արարմունքները և չէ պատժում նորանց»: Սամուէլը վախենումէր այս բանը Հեղինին յայտնելու:

Այն ժամանակ Հեղին կանչեց նորան և ասաց. «Աստուած ինչ ասաց քեզ. մի ծածկիր ինձնից, որդեակ»: Սամուէլը պատմեց նորան ամենը: Հեղին ասաց. «Ինչ որ բարի է, թող այն կատարէ Աստուած»:

դ.

Սորանից յետոյ իսրայէլացիները պատերազմ ունեցան փղշտացիների հետ և խիստ հարուած ստացան: Այն ժամանակ իսրայէլի ծերերն ասացին. «Ուխտի տապանակը բերենք Սելովից, որ մեզ ազատէ այլազգու ձեռքից», և բերել տուին. նորա հետ եկան և Հեղին երկու որդիները: Երբ տապանակը բանակ բերին, բոլոր ժողովուրդը բարձր ձայնով սկսեց աղաղակել. իսկ փղշտացիներն ասումէին միմեանց. «Իսրայէլի Աստուածը բանակէ եկել, ով փղշտացիներ, քաջ-պատերազմեցէք, որ եբրայեցիներին ծառայ չլինէք»: Պատերազմի մէջ իսրայէլացիները յաղթուեցան. Հեղին երկու որդիներն էլ սպանուեցան. իսկ ուխտի տապանակը գերի ընկաւ թշնամու ձեռքը:

Մինը պատերազմի դաշտից՝ շորերը պատառելով և գլխին հող ցանելով Սելով հասաւ: Հեղին դրան առաջ մի աթոռի վերայ նստած էր. նորա սիրտը երկիւղի մէջ էր տապանակի համար. նա հարցրեց եկող մարդուն բանակի մասին: Դեսպանը պատասխանեց. «Իսրայէլը յաղթուեց. քո երկու որդիներն էլ սպանուեցան և ուխտի տապանակը գերի ընկաւ»: Այս գոյժը լսելուն պէս՝ Հեղին աթոռից վայր ընկաւ, մէջքը կոտրվեց և մեռաւ:

Փղշտացիները վեր առան տապանակ ուխտին և դրին կռատան մէջ՝ իրանց կուռքերի մօտ: Առաւօ-

տեան տեսան որ իրանց կուռքերը տապանակի առաջ երեսի վերայ վալը են ընկած. նրանց ձեռքերն ու ոտքերը փշրտած են: Փղշտացիները տապանակ ուխտին իսրայէլացիներին յետ ուղարկեցին:

Դ.

Սամուէլը աճում էր և զօրանում. Աստուած նորա հետն էր: Նա սկսեց քարոզ կարդալ բոլոր իսրայէլացիներին. ժողովուրդը խոստովանեց, որ նա Աստուծոյ ճշմարիտ մարգարէն է: Սամուէլը դատաւոր դարձաւ. հաւաքեց բոլոր իսրայէլացիներին և ասաց. «Եթէ դուք ՚ի բոլոր սրտէ կդառնաք դէպի ճշմարիտ Աստուածը, կթողնէք օտար աստուածներին և ճշմարտին միայն կծառայէք, այն ժամանակ նա ձեզ կազատէ փղշտացիների ձեռքից»: Իսրայէլացիները հեռացին իրանցից օտար աստուածներին:

Երբ փղշտացիներն այս համբաւն իմացան, դուրս եկան կրկին անգամ պատերազմելու: Իսրայէլացիներն ասացին Սամուէլին. «Մի դադարիր Աստուծուն խընդրելունց՝ մինչև որ նա մեզ օգնէ»: Սամուէլն առաւ մի դառն, ողջակէզ արաւ Աստուծուն ժողովրդեան հետ և աղօթումէր. իսկ այդ ժամանակ փղշտացիները յարձակուեցան Մասեփաթայի մօտ իսրայէլացիների վերայ: Փղշտացիները յաջողութիւն չունեցան՝ յաղթուեցան: Սամուէլը վեր առաւ մի քար և տնկել տուեց Մասեփաթայի և Բեթսանայի մէջ և այդ տեղին Աբենեզեր անուանեց ու ասաց. «Աստուած մեզ մինչև այստեղ օգնեց»: Փղշտացիները փախան և Սամուէլի կենդանութեան ժամանակ երբեք չվստահացան իսրայէլի դէմ դէնք առնելու: Սամուէլը կառա-

վարեց իսրայէլին իւր ամբողջ կեանքի ընթացքում: Նա ամենայն տարի դալիս էր Բեթէլ, Գաղատա և Մասեփաթ, դատումէր ժողովրդին և կրկին դառնում Արիմաթեմ, որովհետև նրա տունն այնտեղ էր:

Նա այնտեղ ևս դատումէր իսրայէլին և Աստուծոյ համար մի սեղան շինեց:

«Որ խնայէ ի գաւազան՝ ատեայ զորդի իւր, իսկ որ սիրեն՝ խնամով խրատէ»: Առակք Սող. Ժգ. 24. Ով որ խնայում է գաւազանը, նա ատում է իւր որդուն:

«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք»: Առակք Սող. Ժգ. 34.

Արդարութիւնը ազգ է բարձրացնում, իսկ չանցանքը մարդկանց կործանում է:

«Եւ իմաստունք ծագեցեն իբրեւ զլուսաւորութիւն ՚ի հաստատութեան, եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս չաւիտեանս»: Դան. Ժբ. 3.

Դ.

ԹԱԳԱԽՈՐՆԵՐԻ ԴԱՐ

Ա.

ՍԱԽՈՒՂ

§ 49.

Սաւուղը դառնում է թագաւոր:

ա.

Երբ Սամուէլը ծերացաւ, իւր որդիներին իսրայէլի վերայ դատաւոր նշանակեց: Բայց նրանք իրանց

Հօր ճանապարհով չէին գնում—ազաՀուԹեան ետե-
ւից ընկած, կաշառքներ էին վերցնում և օրէնքից
գուրս գործքեր կատարում: Սորա Համար իսրայէլի
ձերերը ԱրիմաԹեմ Հաւաքուեցան Սամուէլի մօտ և
ասացին. «Գու ձերացել ես, քո որդիքը քո ճանա-
պարհով չեն գնում, մեզ վերայ մի Թագաւոր նշա-
նակիր, ինչպիսին այլազգիներն ունեն, որպէսզի նա
մեզ դատէ և պատերազմում առաջնորդէ»: Այս բանը
դուր չեկաւ Սամուէլին. նա աղօթեց Աստուծուն այդ
մասին: Աստուած ասաց նորան. «Հնազանդիր ժողո-
վըրդի պահանջին և նորան մի Թագաւոր տո՛ւր»:

բ.

Բենիամինի ցեղում մի մարդ կար՝ Վիս անունով.
նա մի որդի ունէր, որի անունը Սաւուղ էր և որը
մի գեղեցիկ մարդ էր: Մի անգամ Վիսի իշանները կո-
րան. Սաւուղը փնտռելու գնաց և Հասաւ մինչև
ԱրիմաԹեմ քաղաքը: Հէնց որ Սամուէլը Սաւուղին
տեսաւ, Աստուած ասաց նորան. «Ահա այս է այն
մարդը, որը իմ ժողովրդեան պիտի կառավարէ»: Սա-
մուէլն ասաց Սաւուղին. «Գու այսօր ինձ Հետ
պէտք է Հաց ուտես. իշաների մասին մի՛ մտածիր,
նրանք գտնուած են. իսրայէլի ժողովրդի մէջ ամե-
նազեղեցիկ բանը քեզ է պատկանում»: Սաւուղը Սա-
մուէլի Հետ ճաշեց: Հետևեալ օրը ձեզը բացուելիս
նրանք Հեռացան քաղաքից:

Սամուէլն ասաց Սաւուղին. «Հանգիստ եղիր»: Այս ասաց, առաւ իւղի սրուակը, ածեց նորա գլխին,
Համբուրեց և ասաց. «Աստուած քեզ իւր ժառանգու-
Թեան վերայ տէր է նշանակում»: Հէնց Սաւուղը Հե-

ռացաւ Սամուէլից, Աստուած նորան մի ուրիշ սիրտ,
ուրիշ Հոգի տուեց:

Սամուէլը Հաւաքեց իսրայէլի ժողովրդին Մա-
սեփաԹում և յայտնեց, որ Աստուած Սաւուղին Թա-
գաւոր է ընտրել: Ժողովուրդը սկսեց փնտռել նորան,
բայց չգտաւ, որովհետև կարասի տակ Թաք էր կա-
ցել: Վերջապէս գտան և յառաջ բերին: Երբ Սաւու-
ղը ժողովրդին ներկայացաւ, ամենից բարձրն էր—
միւսների Հասակը Հազիւ էր նրա ուսերին Հասնում:
Ժողովուրդն ուրախական աղաղակ բարձրացրեց և
ասաց. «Կեցցէ Թագաւորը: Բայց մի քանի մարդիկ
ասում էին. «ՄիԹէ սա պիտի մեզ փրկէ». նրանք
անարգում էին Սաւուղ Թագաւորին և ոչ մի ընծայ
չէին բերում: Բայց Սաւուղն այնպէս էր ցոյց տալի
իրան, որպէս Թէ չէ լսում:

գ.

Ամովնացիների Թագաւորը յարձակուեց իսրայե-
լացիների վերայ, Յաբիս քաղաքը պաշարեց և ասաց
քաղաքացիներին. «Ես ձեր ամենի աջ աչքը պէտքէ
Հանեմ ի նախատինս իսրայէլի»: Յաբիսացիները դեւ-
պաններ ուղարկեցին իրանց եղբայր իսրայէլացի-
ների մօտ և օգնութիւն էին խնդրում: Գեսպանները
Պաբաա ևս եկան և ամենայն բան ժողովրդի աչքի
առաջ պատմում էին: Ժողովուրդն սկսեց լաց լինել:
Առաւօտեան Սաւուղը Հանդից դառնալիս՝ տեսաւ
այս բանը և Հարցրեց. «Ի՞նչու է լաց լինում ժողո-
վուրդը»: Նրան պատմեցին եղելութիւնը: Աստուծոյ
Հոգին իսկոյն Սաւուղի վերայ եկաւ. նա խիստ բար-
կացաւ: Երկու եզն առաւ, կտոր կտոր արեց և զես-

պաններն ձեռքով բոլոր իսրայելի քաղաքներն ուղարկեց ասելով. «Ով Սաւուղին և Սամուէլին չի հետեւի, նորա եգներն էլ այսպէս պատառ—պատառ կլինին»: Ժողովուրդն իսկոյն իրանց նոր թագաւորի շուրջը հաւաքուեց: Սաւուղը գետպան ուղարկեց Յաբիսի բնակիչներն մօտ, որ նրանց ասեն, «Վաղը արեւը տաքանալուն պէս ձեզ համար օգնութեան դուռը կբացուի»: Յաբիսացիները շատ ուրախացան: Սաւուղն առաւօտեան երեք գունդի բաժանեց իւր զօրքը—յարձակուեց ամովնացիների բանակի վերայ և ջարդեց նրանց մինչև արևի տաքանալը. մնացած թշնամին ցրուեց, այնպէս որ երկու ամովնացի միասին գտնել չէր կարելի:

Այն ժամանակ ժողովուրդն ասաց. «Մեր ձեռքը մատնեցէք Սաւուղի անարգող մարդկանց, որպէսզի սպանենք նրանց»: Իսկ Սաւուղը պատասխանեց. «Այս օր՝ երբ Աստուած մեզ ազատութիւն է տուել, ոչ մի իսրայէլացի չպիտի մեռնի»: Սամուէլը Գաղգաղա հաւաքեց բոլոր իսրայէլացիներին. այնտեղ Սաւուղին թագաւոր օծեցին և շնորհակալութեան զոհ մատուցին Աստուծուն: Նորընտիր Սաւուղ թագաւորը բոլոր ժողովրդի հետ ուրախանումէր:

«Աստուծոյ երկերուք, զթագաւորս պատուեցէք»:

Ի. Թ. Պետ. բ. 17.

Աստուածանից վախեցէք, թագաւորին պատուեցէք:

«Երանի բեզ, երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»: Ժող. Ժ. 17.

§ 50.

Յովնաթանի քաջագործութիւնը:

Սորանից յետոյ փղշտացիները մեծ պատրաստութիւններով իսրայելի վերայ պատերազմի եկան՝ 30,000 կառքով, 6,000 հեծեալ զօրքով, իսկ ժողովրդի բազմութիւնը ծովի աւազին էր նմանում: Երբ իսրայէլացիները այս բազմութիւնը տեսան, սարսափի մէջ ընկան և ամենայն ոք իւր զլուխն սկսեց ազատել—ոմանք այլերի մէջ թաքկացան, ոմանք գոմերի, ոմանք ժայռերի և ծերպերի, ոմանք անտառների և ջրհորների մէջ, ոմանք Յորդանանն անցան, մի քանիսն էլ թշնամու հետ միանալով՝ յառաջ արշաւեցին: Սաւուղը իւր Յովնաթան որդու և 600 մարդոց հետ միասին մնացին մի բլրի վերայ՝ Գաբաայի մօտ, որ գտանվումէ Բենիամինի երկրում, ոչ հեռու փղշտացիների բանակից: Թշնամու բանակից երեք գունտ զօրք դուրս եկաւ երկիրը ասպատակելու: Այդ ժամանակ իսրայէլացիների երկրում ոչ մի դարբին, ոչ մի երկաթագործ չկար, որովհետև ամենքն էլ իրանց երկիրն էին քշել, որ եբրայեցիները սուր և զեղարդ չշինեն:

Մի օր Յովնաթանն ասաց իւր կապարճակրին. «Եկ անցնենք փղշտացիների բանակը. Աստուած անշուշտ կօգնէ մեզ. Նորա համար դժուար չէ փոքրաթիւ մարդկանցը ևս յաղթութիւն պարգևել»: Կապարճակիրը պատասխանեց. «Արա՛ այնպէս, ինչպէս քո սիրտն ուզում է, ես քեզ կհետեւիմ»: Երկուսն էլ հեռացան՝ առանց Սաւուղին իմաց տալու. ժողո-

վուրդը նույնպէս ոչինչ չգիտէր: Այն տեղը՝ որտեղից
Յովնաթանը փղշտացիների բանակն էր ուզում մըտ-
նել, երկու սրածայր ժայռեր էին: Յովնաթանը կրկ-
նեց իւր կապարճակին. «Եթէ թշնամին մեզ տեսնէ
և ասէ. Հանգիստ մնացէ՞ք տեղներդ մինչև որ ձեզ
մօտ վեր գանք, մենք կանգնած կմնանք, իսկ եթէ
ասէ, եկէ՛ք վար մեզ մօտ, այդ կնշանակէ Աստուած
նրանց մեր ձեռքն է մատնում»: Երբ երկուսն էլ
այլազգու կիրճը մտան, այնպէս որ թշնամուն նկա-
տելի եղան, ասացին փղշտացիները. «Նայեցէ՛ք, եր-
րայեցիները այրերից դուրս են եկել, վեր եկէ՛ք մեզ
մօտ, ձեզ բան ունինք յայտնելու»: Յովնաթանն
ասաց կապարճակին. «Հետեւիր ինձ, Աստուած նրանց
մեր ձեռքն է մատնում»: Յովնաթանն սկսեց վեր
մագլցել. նորա կապարճակին էլ յետեւից: Յով-
նաթանն սկսեց Հարուածել թշնամուն. կապարճա-
կիրը նույնն էր անում, այնպէս որ առաջին պատե-
րագմում քսան հոգի սպանեցին: Քանակի մէջ շփո-
թութիւն ընկաւ, պատերազմող զնգերն անգամ զար-
հուրեցան:

Սաւուղի պահապանները բարձրից նկատեցին,
որ թշնամու բանակի մէջ շփոթութիւն է ընկել և
մէկը միւսի յետեւիցն է փախչում:

Այն ժամանակ Սաւուղն ասաց ժողովրդին.
«Համարեցէ՛ք և տեսէ՛ք մեզանից ով է պակաս»: Նը-
բանք էլ համարեցին և տեսան որ Յովնաթանն ու
իւր կապարճակին այնտեղ չեն: Փղշտացիների բա-
նակում աղմուկն ու շփոթը քանի գնում, մեծանում-
էր: Սաւուղը կանչեց ժողովրդին. Հետեւեցին նորան.

արիւնահեղ պատերազմ եղաւ: Այն երրայեցիները,
որոնք փղշտացիների բանակումն էին, միացան իս-
րայէլացիների հետ—Սաւուղը և Յովնաթանը հա-
լածեցին թշնամիներին: Եփրեմի լեռների մէջ թաք
կացածները ևս միացան և պատերազմ սկսեցին փը-
ղշտացիների դէմ: Այսպէս Աստուած առաջնորդեց
իսրայէլին դէպի յաղթութիւն:

Յաղթութիւնը նորանն է, ով յոյսն Աստուծոյ վե-
րայ է դնում:

§ 51.

Սամուէլը հրաժարվումէ իւր պաշտօնից:

Սամուէլը հաւաքեց իւր մօտ Գաղգաղայում ամ-
բողջ իսրայէլի ժողովրդին և ասաց. «Ես ձեզ լսեցի
և թաղաւոր տուի. մանկութիւնիցս ձեր մէջն եմ
եղել, ձեզ առաջնորդել մինչև այսօր. այժմ ձերացել
եմ, մաղերս բամբակ են դառել, ահա ձեր առաջն եմ
կանգնած, ցոյց տուէ՛ք ինձ Աստուծոյ և Նորա օծեալի
առաջ, եթէ ես մինի եզր կամ էջը վեր եմ առել,
եթէ մինին զրկել եմ կամ նորա դէմ անիրաւութիւն
գործել, եթէ մինից մի կօշիկ ընծայ եմ ստացել,
պատրաստ եմ փոխարէնը վճարելու»: Ժողովուրդը
պատասխանեց. «Դու մեզ ոչ զրկել ես, ոչ մեր դէմ
անիրաւութիւն գործել և ոչ մինից մի կօշիկ ընծայ
ընդունել, Աստուած և Նորա օծեալը կարող են
վկայ լինել»:

Սամուէլը շարունակեց. «Յիշեցէք այն բարութիւնները, որ Աստուած ձեզ և ձեր հայրերին արել է, Աստուծոյ երկիւղը սրտներիցդ մի հանէք. ծառայեցէք նորան հաւատարմութեամբ ի բոլոր սրտէ, վասն զի դուք ինքներդ տեսաք, թէ ինչպիսի մեծ գործքեր կատարեց Նա ձեր՝ աչքի առաջ: Այժմ էլ ձեզ մի թագաւոր տուեց, որի մասին խնդրել էիք: Եթէ դուք ձեր սրտերում Աստուծոյ երկիւղ կունենաք և Նորան հաւատարմութեամբ կծառայէք, այն ժամանակ Նա ձեզ էլ, ձեր թագաւորին էլ կօրհնէ, իսկ եթէ վատ կվարուէք, դուք էլ ձեր թագաւորն էլ կկորչէք: Իսկ ես, քանի որ շունչ ունեմ բերանումս, չեմ դադարի ձեզ համար աղօթելու, ձեզ ուսուցանելու Աստուծոյ բարի և ճշմարիտ ճանապարհը»:

Սամուէլն այսպէս հրաժարուեց իւր դատաւորական պաշտօնից:

«Աստուածապաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է»: Տիմոթ. I. գ. 8.

Աստուածապաշտութիւնն ամեն բանի համար օգտակար է:

§ 52.

Սաւուղի անհնազանդութիւնը:

Նոր պատերազմ ծագեց փղշտացիների և իսրայելացիների մէջ. Սամուէլը զօրք հաւաքեց և եկաւ Գաղգադա. Ժողովուրդը հետևումէր նրան ահ ու երկիւղով: Սամուէլն ասաց թագաւորին. «Սպասիր ինձ

Գաղգադայում, մինչև որ ես կգամ և զոհ կմատուցանեմ»: Սաւուղը եօթն օր անհամբեր սպասումէր: Սամուէլը չեկաւ. Ժողովուրդն սկսեց ցրուել: Թագաւորն ասաց. «Մօտ բերէք ողջակէզը, որ զոհենք»: Բայց դեռ զոհը չվերջացած՝ Սամուէլն եկաւ:

Այն ժամանակ Սամուէլն ասաց. «Այդ ինչ ես արել». Սաւուղը պատասխանեց. «Ես տեսայ որ Ժողովուրդն սկսեց ցրուել, դու ևս որոշած ժամանակին չեկար. փղշտացիները խմբուած էին մեր դէմ, ուստի համարձակուեցի ողջակէզ մատուցանելու»:

Սամուէլն ասաց Սաւուղին. «Դու անմիտ ես վարվել. դու Աստուծոյ պատուիրանիցն անցել ես, միթէ դու կարծումես որ Աստուած ողջակէզը՝ զոհը աւելի կսիրէ՝ քան թէ հնազանդութիւնը—«լաւ է ունկնդրութիւն քան զզոհ», անհնազանդութիւնը յանցանք է՝ կռապաշտութիւն է: Որովհետև դու Աստուծոյ խօսքը անարգեցիր, արհամարհեցիր, Աստուած էլ քեզ կարհամարհէ, որպէսզի դու այլ ևս թագաւոր չլինիս իսրայէլի վերայ»:

Սամուէլը Սաւուղից երեսը դարձրեց և մինչև իւր մահն այլևս նորան չտեսաւ: Բայց և այնպէս Նա ցաւումէր Սաւուղի վերայ:

«Քակեաց զհօրս յաթողոց»: Դուկ. ա. 52.

Զօրաւորներին աթոռներից իջեցրեց:

Բ.

ՍԱՒՈՒՂ ԵՒ ԴԱԻԻԹ.

§ 53.

Դաւթի թագաւոր ընտրուիլը:

Աստուած ասաց Սամուէլին. «Մինչև երբ տըխրես Սաւուղի համար, ես նորան արդէն անարգեցի: Լցրու եղջիւրդ իւղով և գնա Բեթղեհէմ՝ Յեսսէի մօտ, նորա որդիներից մինին թագաւոր եմ ընտրել»: Սամուէլը գնաց Բեթղեհէմ, հրաւիրեց Յեսսէին և իւր որդիներին զոհ մատուցանելու»:

Երբ որդիները ներս եկան, Սամուէլը նայեց մեծին և կարծումէր թէ սա պիտի լինի ընտրեալը: Բայց Աստուած ասաց. «Դու ոչ նորա մեծ հասակին նայիր և ոչ տեսքին. ես մեծ հասակ ունեցողին անարգեցի: Բանը նորանով չէ վերջանում, ինչպէս որ մարդս է տեսնում, որովհետև մարդս տեսնումէ աչքի առաջինը, իսկ Աստուած սրտին է նայում»:

Յետոյ Յեսսէն իւր եօթն որդիներին ևս Սամուէլի առաջով անցկացրեց: Սամուէլը պատասխանեց. «Աստուած սոցանից և ոչ մինն չէ ընտրել: Սոքա ես արդեօք քո բոլոր որդիները»:

Յեսսէն պատասխանեց. «Մի փոքրը ևս ունեմ, նա խաշներ է արածացնում»: Սամուէլն ասաց. «Մարդ ուղարկիր և կանչել տուր»:

Դաւիթն եկաւ՝ նա կարմրաբերես էր, գեղեցիկ աչքեր ունէր և սիրուն հասակ: Աստուած ասաց. «Վեր կաց և սորան օծիր, որովհետև սա է ընտ-

րեալը»: Սամուէլն առաւ եղջիւրը և օծեց նորան թագաւոր իւր եղբայրների մէջ:

Այդ օրից սկսած Աստուծոյ հոգին Դաւթի վերայ իջաւ:

«Փակեաց զհօրս յաթոռոց և բարձրացոյց զստնարհս»: Դուկ. ա. 52.

Զօրաւորներին աթոռներից իջեցրեց, իսկ խոնարհներին բարձրացրեց:

«Մարդ հայի յերեսս եւ Աստուած հայի ՚ի սիրտս»: Լ. թագ. Ժգ. 7.

Մարդս տեսնումէ աչքի առաջինը, իսկ Աստուած սրտին է նայում:

§ 54.

Դաւիթը գալիս է Սաւուղի արքունիքը:

Աստուծոյ հոգին վերացաւ Սաւուղից. չար ոգին տանջումէր նորան: Ծառաներն ասացին թագաւորին. «Դտներք մի մարդ, որը կարողանայ քնարի վերայ երգել. հէնց որ չար ոգին կգայ, նա կերգէ և քեզ կհանգստացնէ»:

Սաւուղը պատասխանեց. «Եթէ գիտէք մի այդպիսի մարդ, ինձ մօտ բերէք»: Ծառաներից մինը պատասխանեց. «Բեթղեհէմ քաղաքում ես ճանաչում եմ մի մարդ՝ Յեսսէ անունով, որի որդին քնարի վերայ երգումէ. նա մի իմաստուն, քաջ երիտասարդ է և Աստուած էլ նորա հետն է»: Սաւուղը դեսպաններ ուղարկեց Յեսսէի մօտ և պատուիրեց ասելու. «Ուղարկիր քո որդի Դաւթին ինձ մօտ»:

Այսպէս Գաւիթը Սաւուղի մօտ եկաւ և ծառայումէն նորան: Սաւուղը նորան շատ սիրեց և իւր կապարճակիրը դարձրեց: Հէնց որ չար ոգին Սաւուղի վերայ էր գալի, Գաւիթն առնումէր քնարը և սկըսումէր երգել: Այսպէս հանգստանումէր Սաւուղը և չար ոգին հեռանում նորանից, երբ Գաւիթն սկսումէր երգել քնարի վերայ:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք»: Մատ. ե. 8.
Երանի սուրբ սիրտ ունեցողներին:
Աստուծոյ խորհուրդը սքանչելի է, իսկ նորա իմաստութիւնը գերազանց:

§ 55.

Գաւիթ և Գողիթ:

Փղշտացիները զօրք հաւաքեցին. եկան Յուզայի երկիրը. բանակ ձգեցին, և ուզում էին պատերազմել: Սաւուղը և իսրայէլի ժողովուրդը նոյնպէս զօրք հաւաքեցին և փղշտացիների հանդէպ բանակեցան, այնպէս որ մի հովիտով բաժանուիւմ էին միմեանցից: Փղշտացիների բանակից դուրս եկաւ մի հսկայ՝ Գողիթ անունով, որի հասակի երկայնութիւնը վեց կանգուն և մի թիւղ էր: Նորա գլխին պղնձէ սաղաւարդ կար դրած, հագել էր հիւսած զրահ, ոտքերի վերայ պղնձէ սաւապաններ, ուսերի մէջ պղնձէ գեղարդ: Նորա նիզակի բունը ոստայնանկաց գլանի պէս էր, վահանակին առաջովն էր գնում:

Գողիթը դուրս եկաւ բանակից և ձայն տուեց իսրայէլացիներին. «Ձեզանից մէնին ընտրեցէք, թող

իմ դէմ մենամարտելու դուրս գայ. եթէ նա յաղթէ, մենք ձեր ծառաները լինենք. իսկ եթէ ես յաղթեմ նորան, դուք մեր ծառաները եղէք»: Սաւուղը և իսրայէլացիները երբ այս բանը տեսան, զարհուրեցան և խիստ վախեցան:

Գաւիթի երեք մեծ եղբայրները Սաւուղի հետ բանակումն էին, իսկ ինքը տուն էր գնացել հօր ոչխարներն արածացնելու: Մի անգամ Յեսսէն ասաց Գաւիթին. «Առ այս տասն նկանները, տար եղբայրներիդ հարցրո՛ւ և տես, թէ ինչպէս է նրանց առողջութիւնը»: Երբ Գաւիթը եղբայրներին մօտ եկաւ, հսկայ Գողիթը կրկին դուրս եկաւ բանակից և սկսեց նոյն ձևով նախատել իսրայէլացիներին: Ոչ մի իսրայէլացի չէր փոտահանում նորա դէմ դուրս գալ. նրա ձայնը լսելուն պէս, ամէնքն էլ փախչում էին նրանից: Գաւիթը հարցրեց իւր մօտ կանգնողներին. «Այս փղշտացին նախատում է կենդանի Աստուծոյ ժողովրդին, միթէ մինը չկայ, որ նորան սպանէ և իսրայէլի նախատինքը վերացնէ»: Ժողովուրդն ասաց. «Ով որ նրան սպանէ, թագաւորը կհարստացնէ և իւր աղջիկն էլ նորան կնութեան կտայ»: Այս լուրը Սաւուղին հասցրին. նա էլ Գաւիթին իրա մօտ կանչեց:

Գաւիթն ասաց Սաւուղին. «Ոչնչից մի վախենար, թագաւոր, ես կգնամ և կմենամարտեմ նորա հետ»: Սաւուղը պատասխանեց. «Գու մանուկ ես, փղշտացու հետ չես կարող պատերազմել, նա մանկութիւնից վարժուած է այս ընտել մէջ»: Գաւիթը պատասխանեց. «Հօրս խաշներն արածացնելիս՝ երբ առիւծ կամ արջ էր գալիս և յափշտակում ոչխարներս, ընկնում էի

նրանց լետեից, ոչխարը կորցում էի բերանից և իրան էլ սպանում: Այն Աստուածը, որ ինձ առեւծից և արջից ազատեց, կազատէ և այս փղշտացուց:»

Այն ժամանակ Սաւուղն ասաց Դաւթին. «Գնա, Աստուած քեզ հետ:» Սաւուղը իւր շորերը Դաւթին հագցրեց. գլխին պղնձէ սաղաւարդ դրեց. զրահաւորեց Սաւուղի սուրը մէջքին կապեց, և սկսեց գնալ: Բայց որովհետեւ անսովոր էր այդ բանին. ուստի ասաց. «Սորանով ես չեմ կարող յառաջ գնալ, այս բանին չեմ վարժուած»: Զրահները վերալից հանեց, առաւ իւր ցուպը, հինգ ողորկ քար և դրեց իւր հովուական մաղախի մէջ, պարսը ձեռքն առաւ և սկսեց դիմել դէպի փղշտացին:»

Երբ փղշտացին Դաւթին տեսաւ, արհամարհեց նորան և ասաց. «Միթէ ես շուն եմ, որ դու ցուպով և քարով ես ինձ վերայ գալի. մօտ արի, ես քո մարմինը երկնքի թռչուններին և երկրիս գազաններին կերակուր դարձնեմ»: Դաւիթը պատասխանեց. «Դու գալիս ես ինձ վերայ սրով, նիզակով և վահանով, իսկ ես՝ Սաբաւովթի՝ իսրայէլի Աստուծոյ անունով, որին դու նախատեցիր: Աստուած քեզ այսօր իմ ձեռը կ'յանձնէ, որպէսզի ամենքը ճանաչեն իսրայէլի Աստուծուն, թո՛ղ իմանան որ փրկութիւնը սրով և գեղարդով չէ լինում»: Փղշտացին տեղից վեր կացաւ և դիմեց դէպի Դաւիթը. սա էլ նորան դիմաւորելով, մաղախից մի քար հանեց, դրեց պարսի մէջ և ձգեց դէպի այլազգին. քարը ճակատին դիպաւ և հսկան գետին փռուեց երեսի վերայ: Բայց որովհետեւ Դաւիթը ձեռին սուր չունէր, վազեց դէպի

փղշտացին, նորա սուրը պատենից հանեց և գլուխը կտրեց: Երբ փղշտացիները տեսան, որ իրանց հերոսն ընկաւ, փախան, իսկ իսրայէլացիները սկսեցին նրանց լետեիցն ընկնել և հալածել մինչև իրանց քաղաքի դռները:

«Զի Աստուած ամբարտաւանից հակառակ կա՛յ տա՛յ շնորհս խոնարհաց»: I. Թ. Պետ. ե. 5.

Աստուած ամբարտաւան մարդկանց հակառակ է, իսկ խոնարհներին շնորհ է տալի:

«Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»: II. Թ. ա. Կորնթ. Ժբ. 9.

§ 56.

Սաւուղն ատումէ, իսկ Յոֆնաթանը սիրում Դաւթին:

ա.

Երբ Դաւիթը Դողիաթի գլուխը կտրեց և յաղթութեամբ լետ դարձաւ, թաղաւորի զօրապետ Աբենները նորան Սաւուղի մօտ տարաւ: Սաւուղը հարցրեց Դաւթին, «Ո՞ւմ որդին ես»: Դաւիթը պատասխանեց. «Քո ծառայ Յեսսէի, որը Բեթղեհէմիցն է»: Այս դէպքից լետոյ Յոֆնաթանը Դաւթին սրտով սիրեց և ընկերական դաշը կապեց նորա հետ—տուեց նորան իւր լօտիկը, վարապանակը, սուրը, աղեղը և դօտին: Սաւուղը չթողեց Դաւթին, որ նա իւր հօր տունը դառնայ, այլ իրա մօտ պահեց և զօրաց վերայ հրա-

մանատար նշանակեց: Ժողովուրդը սիրումէր Դաւ-
թին: Գողիաթին սպանելուց յետոյ՝ երբ Դաւիթը վե-
րադառնումէր փղշտացուց պատերազմից՝ իսրայէլի
բոլոր քաղաքներէից կանայք դուրս էին գալի Դաւթի
առաջ թմբուկներով և ծնծղաներով սկսումէին պա-
րել, երգել և ասել. «Սաւուղը Հազարին սպանեց, իսկ
Դաւիթը՝ բիւրին»: Այս խօսքերը դուր չեկան Սաւու-
ղին, նա բարկացաւ և ասաց. «Ի՛նչ է պակաս նո-
րան, բացի իմ թագաւորութիւնից»: Այդ օրից սկսած
Սաւուղը խեթիւ էր նայում Դաւթին:

Հետեւեալ օրը չար ոգին կրկին Հանգիպեց նո-
րան, իսկ Դաւիթը սկսեց քնարն ածել ըստ սովորա-
կանին: Այն ժամանակ Սաւուղը վեր առաւ զեղարդը
և ձգեց Դաւթի յետեւից՝ այն մտքով որ նորան պա-
տի Հետ մեխէ: Բայց նա խոյս տուեց և զեղարդը
պատի մէջ ցցվեց: Սաւուղը վախենումէր և Դաւթին
իրանից Հեռացնելու Համար Հազար մարդու գլխա-
ւոր՝ վերակացու նշանակեց: Դաւիթը զգուշ էր վար-
վում ամեն մի Հանգամանքի մէջ. Աստուած նորա
Հետն էր, բացի այդ իսրայէլի բոլոր ժողովուրդը նո-
րան սիրում և յարգում էր:

Սաւուղի աղջիկը՝ սիրումէր Դաւթին: Եւ
որովհետեւ թագաւորը խոստացել էր նորան իւր աղ-
ջիկը կնութեան տալու, ասաց. «Բոպէն շատ յա-
ջող է, Դաւթին ոչնչացնելու Համար կփեսայացնեմ և
փղշտացուց դէմ պատերազմի կուղարկեմ»: Սաւուղը
պատուիրեց իւր ծառաներին, որ ծածուկ Դաւթի Հետ
այսպէս խօսեն. «Թագաւորը քեզ սիրումէ, նոյնպէս
և նորա բոլոր մարդիկը, եկ և նորան փեսայ դար-

ձիր»: Այդպէս էլ արին ծառաները: Դաւիթն ասաց.
«Ես մի աղքատ և աննշան մարդ եմ»: Ծառաները
պատասխանեցին. «Թագաւորը քեզնից ոչ մի վարձ
չէ պահանջում, բացի Հարիւր փղշտացու գլխից»:
Նորա միտքն այն էր, որ Դաւիթը թշնամու Հետ
պատերազմելիս՝ կարելի է սպանուի: Դաւիթն իսկույն
վեր կացաւ. իւր մարդկանց Հետ փղշտացուց դէմ գնաց
և 200 մարդ սպանեց, ուստի թագաւորը իւր աղջկան՝
Մեղքողին կնութեան տուեց: Սաւուղը նկատեց, որ Աս-
տուած Դաւթի Հետն էր, այս պատճառով աւելի ևս
վախեցաւ և թշնամացաւ նորա Հետ իւր ամբողջ
կեանքի ընթացքում: Դաւիթը թագաւորի բոլոր մարդ-
կանցից էլ խելացի և իմաստուն էր. նորա անունը
ժողովրդի մէջ յարգուած էր:

բ.

Սաւուղը բաց և արձակ խօսեց իւր որդի Յովնաթանի
և բոլոր ծառաների Հետ, որ Դաւթին սպանեն: Յով-
նաթանն այս բանը յայտնեց Դաւթին և նա էլ թաք-
կացաւ: Սորանից յետոյ Յովնաթանը խօսեց Հօր Հետ՝
յօգուտ Դաւթի և ասաց. «Յանցանք մի գործիր, Հայր,
Դաւիթն արդար է քո առաջ. նա քեզ Համար շատ
է աշխատել—նա իւր անձը վտանգի ենթարկեց և
սպանեց փղշտացուն. Աստուած նորանով մեծ փրկու-
թիւն արեց բոլոր իսրայէլին»: Սաւուղը լսեց իւր որ-
դուն, երգուեց որ այնուհետեւ Դաւթի մահը ալ ևս
չի ցանկայ: Յովնաթանը յայտնեց Դաւթին այս բանը
և նորան Հօր մօտ բերեց: Դաւիթը դարձեալ այնպէս
էր թագաւորի Հետ, ինչպէս և առաջ:

Նոր պատերազմ: Դաւիթը դուրս եկաւ փղշտա-

ւոց դէմ և մեծ հարուած տալով նրանց, փախցրեց: Բայց երբ կրկին Սաւուղի մօտ եկաւ և քնարի վերայ ածումէր, չար ոգին դարձեալ յայտնվեց թագաւորին—վեր առաւ գեղարդը և կամենումէր Դաւիթին պատի վերայ մեխել: Բայց նա դարձեալ խոյս տուեց և գեղարդը մտաւ պատի մէջ: Դաւիթը փախաւ միւս կողմէն գիշերում և հեռացաւ պալատից: Սաւուղը մարդիկ ուղարկեց, որ նորա տունը գիշերով շրջապատեն և առաւօտեան սպանեն:

Մեղքոյը յայտնեց Դաւիթին եղբւրթիւնը և ասաց. «Եթէ դու այս գիշեր քո կեանքը չազատես, առաւօտեան կենդանի չես մնայ»: Կինը մարդուն պատուհանից վայր թողեց. Դաւիթն անյայտացաւ: Յետոյ Մեղքոյը մի պաճուճապատան շինեց, դրեց կողինքի մէջ, գլուխը այծի մորթով պատեց և ծածկեց շորերով: Սաւուղը դեսպաններ ուղարկեց, որ Դաւիթին բռնեն: Մեղքոյը պատասխանեց. «Հիւանդ է»: Սաւուղը կրկին անգամ մարդ ուղարկեց և ասաց. «Մահճով ինձ մօտ բերէք, որ նորան սպանեմ»: Երբ դեսպաններն եկան, պաճուճապատանը կողինքում դրած էր. իրողութիւնը թագաւորին յայտնեցին: Սաւուղն ասաց իւր աղջկան. «Ինչո՞ւ դու ինձ խաբեցիր և իմ թշնամուն փախցրիր»: Մեղքոյը պատասխանեց. «Նա ինձ ասաց, եթէ չես թոյլ տալ, կսպանեմ»:

Դաւիթը մի տեղից միւսը թափառելով՝ վերջապէս եկաւ Յովնաթանի մօտ և ասաց. «Ի՞նչ յանցանք եմ գործել ես քո հօր դէմ, որ իմ կեանքի չետեւիցն է ընկել. իմ և մահուանս մէջ մի քայլ

միայն հեռաւորութիւն կայ»: Յովնաթանը պատասխանեց. «Դու չես մեռնի, ես այն կանեմ, ինչ որ քո սիրտն է ուզում. ես կխօսեմ հօրս հետ և կհամոզեմ նորան: Թաք կացիր դաշտում մի քարի տակ, երեք օրից յետոյ ես քեզ իմաց կտամ, բանը խաղաղութեամբ է վերջացել արդե՞՞ք՝ թէ ոչ»:

Հետեւեալ օրը Սաւուղը Յովնաթանի և Աբենների հետ սեղան էին նստած: Երբ Դաւիթ մատին խօսք եղաւ, Յովնաթանը յօգուտ նորա խօսեց: Սաւուղը բարկացաւ և ասաց. «Խարդախ, ես գիտեմ որ դու Յեսսէի որդու հետ դաշնակից ես, ամօթ քեզ, քանի որ նա ապրումէ երկրիս վերայ, քո թագաւորութիւնը հաստատ չէ, ուստի մարդ ուղարկիր նորա յետեւից և բերել տո՛ւր. նա պէտք է մեռնի»: Յովնաթանը պատասխանեց. «Ինչո՞ւ պիտի նա մեռնի, ի՞նչ է արել»: Սաւուղը բարկացաւ և այս անգամ գեղարդը Յովնաթանի վերայ ձգեց՝ նորան տպանելու մտքով: Յովնաթանը նկատեց, որ հայրը վճռել է Դաւիթին սպանելու, վեր կացաւ սեղանից, դուրս եկաւ և ամբողջ օրը ոչինչ չկերաւ ու մտածումէր միայն Դաւիթի վերայ:

Առաւօտը Յովնաթանը գնաց դաշտ, ուր որ ժամադիր էին եղած և յայտնեց Դաւիթին ամենը: Երկուսը ևս գրկեցին իրար և լաց էին լինում. Դաւիթն աւելի էր արտասովում: Նրանք երգութեցին հաւատարիմ լինել թէ միմեանց և թէ իրանց յետագաներին: Յովնաթանն ասաց. «Գնա՛ խաղաղութեամբ, ինչ որ մենք Տիրոջ անունով երգութեցինք, թող այդ յաւիտեան անխախտ մնայ»: Յովնաթանը յետ դառաւ քաղաք, իսկ Դաւիթը փախաւ, հեռացաւ:

«Յամենայն ժամանակի բարեկամք եղիցին քո, բայց եղբարք՝ ՚ի վիշտս եղիցին քեզ պիտոյ: Առակք ժէ. 17.

Բարեկամը ամենայն ժամանակ սիրող է, բայց եղբայրը նեղ օրուան համար է ծնուած:

«Որ առնէ մեղս, ծառայէ մեղաց»: Յովհ. ր. 39.

Ով որ մեղք է գործում, մեղքի ծառան է դառնում:

«Արթուն կացէք և աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք ՚ի փորձութիւն»: Մատ. իգ. 41.

Արթուն կացէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնէք:

«Եթէ որոց սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ՚ի բարիս»: Թ. ա. հռմ. ր. 28.

§ 57.

Դաւթի մեծահոգութիւնը դէպի Սաւուղ:

ա.

Սորանից յետոյ Սաւուղին յայտնեցին, որ Դաւիթը Դադգալի անապատումն է: Սաւուղն առաւ 3,000 զօրք ու դնաց Դաւթին և նորա մարդկերանցը փնտռելու: Այն անապատում մի այր կար. Սաւուղը ներս մտաւ ալնտեղ քնելու, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ արդէն այրի ներսումն էր: Դաւթի մարդիկն ասացին. «Ահա, այս այն օրնէ, երբ Աստուած թշնամուն քո ձեռնէ մատնում»: Դաւիթը վերկացաւ և ծածուկ կտրեց Սաւուղի լօտիկի ծայրից, բայց շուտով զղջաց և ասաց իւր մարդկերանցը. «Աստուած մի արասցէ, որ ես իմ ձեռքը Տիրոջ օծեալի վերայ բարձրացնեմ»: Դաւիթը իւր մարդկանցը համոզեց և թոյլ չտուեց Սաւուղին սպանելու:

Սաւուղը երբ զարթեց, դուրս եկաւ այրից և սկսեց իւր ճանապարհը շարունակել: Նորանից յետոյ դուրս եկաւ Դաւիթը ու սկսեց Սաւուղի յետեւից ձայն տալ. «Իմ տէր թաղաւոր»: Սաւուղը յետ նայեց: Դաւիթն ասաց. «Այսօր Աստուած քեզ իմ ձեռքը մատնեց այրի մէջ, բայց ես քո կեանքը խնայեցի. ես ասում էի ինքս ինձ, նա իմ տէրն է և Աստուծոյ օծեալը. տես, հայր իմ, ահա քո լօտիկի ծայրը իմ ձեռումն է: Թող Աստուած դատաւոր լինի իմ և քո մէջ և աղատէ ինձ քո ձեռքից, բայց ես իմ ձեռքս քեզ վերայ չեմ բարձրացնի:»

Սաւուղն սկսեց բարձր ձայնով լաց լինել և ասել. «Գու ինձանից արդար ես. դու ինձ բարի հատուցիր, իսկ ես քեզ՝ չար: Ինչ որ դու այսօր իմ դէմ ցոյց տուիր, Աստուած քեզ դուրս փոխարէն բարի հատուցումն կանէ: Ես գիտեմ դու խրայելի թաղաւորը պիտի դառնաս»:

Սաւուղը տուն դարձաւ, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ մնաց անապատում:

բ.

Սորանից յետոյ լուր առաւ Սաւուղը որ Դաւիթը Զիփալի անապատումն է: Վերկացաւ Սաւուղը, առաւ իւր հետ 3,000 մարդ և սկսեց Դաւթին որոնել ու բանակ ձգեց անապատում մի բլրի վերայ: Դաւիթն այս բանն իմանալուն պէս, եկաւ Սաւուղի բանակը: Նա ասաց իւր ընկերներին. «Ով կգայ ինձ հետ Սաւուղի բանակը մտնելու»: Արեւստան պատասխանեց. «Ես կգնամ քեզ հետ բանակ մտնելու»: Այսպէս Դաւիթը և Արեւստան գիշերով Սաւուղի բանակը մտան:

Սաւուղը քնած էր պաղպաջունի մէջ, գեղարդը զլխի վերևում գետնի մէջն էր ցցած: Իսկ Աբինները և բոլոր զօրքը նորա շուրջը քնած էին: Արեստան ասաց Դաւթին. «Աստուած այսօր թշնամուն քո ձեռնէ մատնել, թող ես գեղարդով միանգամ այնպէս խփեմ, որ գետին մտնէ:» Իսկ Դաւիթը պատասխանեց Արեսային. «Մի խփիր, ո՞վ է այն մարդը որ Տիրոջ օծեալին խփէ և անպատիժ մնայ: Դաւիթն ասաց. «Աստուած կենդանի է, նա նորա դատատանը կկտրէ—կամ նորա օրը կզայ և կմեռնի, կամ թէ պատերազմի մէջ կմտնէ և կսպանուի: Աստուած մի արասցէ, որ ես ձեռքս նորա օծեալի վերայ բարձրացնեմ: Վեր ա՛ռ նորա զլխի վերևից գեղարդը, ջրի կուժը և գնանք»: Այսպէս Դաւիթը վեր առաւ գեղարդը և ջրի կուժը ու գնաց: Մէկը չեղաւ, որ տեսնէր կամ նկատէր, ամենքն էլ քնած էին:

Դաւիթը բարձրացաւ բլրի գագաթը և այնտեղից ձայն տուեց զօրքին, Արեսներին ու ասաց. «Չեմ լսում Արեսներ»: Արեսները պատասխանեց. «Ո՞վ ես դու:» Դաւիթը պատասխանեց. «Ինչո՞ւ քո տիրոջը՝ քո թագաւորին չպաշտպանեցիր, որովհետեւ գիշերով մէկը բանակը մտաւ և թագաւորի գեղարդն ու ջրի կուժը տարաւ. թող ձեզանից մինը գայ և տանէ»: Սաւուղը Դաւթի ձայնը ճանաչեց և ասաց. «Այդ քո՞ ձայնն է, որդի Դաւիթ»: Դաւիթը պատասխանեց. «Այո՛, իմ ձայնն է, իմ Տէր. ինչո՞ւ ես քո ծառայի յետևիցն ընկել. ի՞նչ վատ բան է արել քեզ:» Սաւուղը պատասխանեց. «Արի՛ ինձ մօտ կրկին, որդեակ իմ Դաւիթ, ես յանցաւոր եմ, ես քեզ այլ ևս չեմ հալածի, որովհետեւ դու

այսօր իմ կեանքը թանկ ես գնահատել:» Դաւիթը պատասխանեց. «Աստուած ամենքին էլ իւր արդարութեան և հաւատարմութեան համար կը վարձատրէ: Աստուած քեզ այսօր իմ ձեռքը մատնեց, բայց ես իմ ձեռքը նորա օծեալի վերայ չբարձրացրի: Եւ ինչպէս որ այսօր քո անձը ես թանկ գնահատեցի, այդպէս էլ Աստուած իմ անձը թանկ կգնահատէ. նա ինձ այս նեղութիւնից կազատէ»: Սաւուղն ասաց Դաւթին. «Օրհնեալ լինես, որդեակ իմ Դաւիթ, գիտեմ որ դու այդ բանը կանես և գլուխ կբերես»: Գորանից յետոյ Դաւիթը իւր ճանապարհով գնաց, իսկ Սաւուղը կրկին տուն դարձաւ:

«Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ, որ լկեն գձեզ եւ հալածեն»: Մատ. ե. 44.

Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարի արէք ձեզ ատողներին, աղօթք արէք ձեզ չարչարողների և հալածողների համար:

«Մի զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուր տեղի բարկութեան. քանզի գրեալ է, իմ է վրէժխնդրութիւն, ես հատուցից ասէ Տէր»: Թ. ա. Հոմ. Ժբ. 19.

Ձեր անձերի համար վրէժխնդրութիւն մի անէք, սիրելիներ, այլ բարկութեան տեղ տուէք, որովհետեւ գրած է. վրէժխնդրութեան իրաւունքն իմն է, ես պիտի հատուցանեմ:

Ինքը իւր հետ պատերազմելը ամենադժուար պատերազմն է, ինքն իրան չաղթելը ամենագեղեցիկ չաղթութիւնն է:

«Մի չաղթիր 'ի չարէ. այլ չաղթեա բարեաւն չարին»: Թ. ա. հմ. Ժբ. 21.

Մի չաղթուիր չարիցը, այլ բարիովը չարին չաղթիր:

§ 58.

Սաւուղի մահը:

Այս բանից յետոյ մեռաւ Սամուէլը: Բոլոր իսրայէլացիները սուգ արին նորա վերայ և թաղեցին Արիմաթեմում:

Փղշտացիները կրկին պատերազմ ունեցան իսրայէլի հետ: Իսրայէլացիները փախան թշնամուց և Գեղբուա լեւան մօտ ջարդուեցան: Թշնամին շրջապատեց Սաւուղին և նրա որդւոց. պատերազմը խիստ էր. Սաւուղը ծանր կերպով վիրաւորուեց:

Այն ժամանակ թագաւորն ասաց իւր կապարձակին. «Հան քո սուրը և սպանիր ինձ, որպէսզի փղշտացիները չգան, չխոցոտեն և չծաղրեն ինձ»: Կապարձակիւրը հրաժարովեց կատարելու նրա հրամանը: Յետոյ Սաւուղն ինքն առաւ իւր սուրը և ընկաւ նորա վերայ: Երբ կապարձակիւրը տեսաւ, որ Սաւուղը մեռաւ, ինքն էլ իւր սրի վերայ ընկաւ և ինքնասպան եղաւ: Յովնաթանը, իւր երկու եղբայրների հետ, կապարձակիւրը և հետն եղած բոլոր մարդիկը մեռան՝ ընկան պատերազմի մէջ: Հետեւեալ օրը թշնամին եկաւ, որ անկեալներին մերկացնէ: Սաւուղին իւր երեք որդու հետ միասին գտան. կտրեցին թագաւորի գլուխը, հանեցին վերայից գէնքերը և երկուսն էլ իւրեանց երկիրն ուղարկեցին աւետիք տալու, իսկ

Սաւուղի մարմինը Բեթսանայի պարիսպներից կախ արին:

Երբ Յաբելսի բնակիչները լսեցին թագաւորի մահը, բոլոր պատերազմող մարդիկը վեր կացան, ամբողջ գիշեր ճանապարհ գնացին և թագաւորի ու նորա որդու Յովնաթանի դիակները Բեթսանայի պարիսպներից հանելով՝ քաղաք բերին և ալրեցին. յետոյ վեր առան նրանց ոսկորները մի ծառի տակ թաղեցին և եօթն օր պահք պահեցին:

Սաւուղի մահուանից երեք օր յետոյ՝ մի ամառեկացի շորերը պատառելով և գլխին հող ածելով Դաւիթի մօտ եկաւ ու ասումէր նորան. «Իսրայէլի բանակիցն եմ ազատվել. ժողովուրդը փախաւ. մեծ մասը պատերազմում ընկան. Սաւուղը և Յովնաթանը ճմանապէս մեռան»: Դաւիթն ասաց. «Ո՞րտեղից գիտես որ Սաւուղը և Յովնաթանն ընկան»: Ամառեկացին պատասխանեց. «Գեղբուայի լեռների վերայ էի, Սաւուղը կռթնած էր. նիզակի վերայ, թրշնամու հեծելագօրը դիմումէր դէպի նա: Սաւուղն ասաց ինձ. սպանիր ինձ, որովհետեւ ես ամէն կողմից վտանգով շրջապատուած եմ»: Մօտ գնացի, սպանեցի նորան, վեր առայ թագն ու ասլարանջանը և ահա իմ տիրոջն եմ բերել»: Դաւիթն ասաց. «Դու ինչպէս վստահացար Տիրոջ օճեալի վերայ ձեռք բարձրացնել»: Դաւիթը նշան արեց իւր մարդկանցից մինին, որ սպանեն ամառեկացուն և սպանեցին:

Սորանից յետոյ Դաւիթն սկսեց պատառել իւր շորերը, նույնն արին և մօտը եղող մարդիկը. նրանք լաց էին լինում և սգում Սաւուղի, Յովնաթանի և

բոլոր իսրայէլի ժողովրդեան վերայ: Դաւիթը ողբ յօրինեց իւր սիրելի Յովնաթանի վերայ և ասումէր. «Արձանացիր, իսրայէլ ՚ի վերայ բլրոցն ՚ի բարձունսքո վիրաւորաց. զիարդ անկան զօրաւորքն: Մի պատմէք ՚ի Գէթ, եւ մի տայք զայս աւետիս յիս Բսկադոնի. զի մի երբէք ուրախ լիցին դստերք այլազգեացն, եւ մի ցնծասցեն դստերք անթլիատիցն: Լեւրինք Գեղբուայ, մի իջցէ ՚ի ձեզ ցօղ, եւ մի եկեսցէ ՚ի վերայ ձեր անձրեւ. Յովնաթան ՚ի վերայ բարձանցքոց վիրաւոր: Յաւ է ինձ ՚ի վերայ քո, եղբայր իմ Յովնաթան, զեղեցկացար ինձ յոյժ, զարմանալի եղեւ սէր քո ինձ քան զսէր կանանց»:

«Զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն հնձեսցէ»: Թ. ա. Գաղ. գ. 7.

«Անօրէնք եղեն լաւեր չանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»: Սաղ. չբ. 19.

«Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի»: I. Թ. ա. Կրնթ. Ժ. 12.

Ով որ կարծում է թէ հաստատ կանգնած է, թող զգոյշ լինի, որ վաղ չընկնի:

Գ.

Դ Ա Ի Ի Թ.

§ 59.

Դաւիթը որպէս Թագաւոր:

Սորանից յետոյ Դաւիթը իւր մարդկանց հետ գնաց Քեբրոն քաղաքը: Յուդայի տան մարդիկը նո-

րան Թագաւոր օծեցին Յուդայի տան վերայ: Իսկ Սաուղի զօրավար Աբենները նորա որդի Յեբուսթէին Թագաւորեցրեց միւս ցեղերի վերայ: Սորա համար Դաւիթի և Սաուղի տան մէջ երկար ժամանակ պատերազմներ եղան: Դաւիթի տունը քանի գնում զօրանում էր, իսկ Սաուղին՝ նուազում, տկարանումէր: Յեբուսթէի մօտ երկու գլխաւոր մարդիկ կային. սրանք քնած ժամանակ սպանեցին նորան և գլուխը կտրելով Դաւիթի մօտ բերին Քեբրոն քաղաքը: Բայց Դաւիթն ասաց նրանց. «Դուք արդար մարդէք սպանել» և հրամայեց երկու մարդասպաններին էլ սպանել:

Այն ժամանակ իսրայէլի բոլոր ցեղերը Քեբրոն եկան և Դաւիթին Թագաւոր օծեցին ամբողջ իսրայէլի վերայ: Դաւիթը երեսուն տարեկան էր, երբ Թագաւոր եղաւ. նա կառավարեց Յուդայի ժողովուրդը եօթը և կէս տարի, իսկ երեսուն տարի՝ ամբողջ իսրայէլը:

Թագաւորը գնաց դէպի Երուսաղէմ երուսացւոց դէմ, որոնք Յուդայի երկրումն էին կենում: Նրանք ասացին Դաւիթին. «Դու չես կարող քաղաք մտնել, կոյրերը և կողերը կարգելեն քեզ»: Բայց Դաւիթն առաւ քաղաքը, Սիօն լեռը ու նրա վերայի աշտարակը: Նա բնակուեց այդ աշտարակի մէջ, անուանեց նրան Դաւիթ քաղաք, ու այնտեղ մի փառաւոր տուն շինեց:

Սորանից յետոյ մարդիկ հաւաքեց և գնաց ուխտի տապանակը բերելու: Ուրախութեան ձայներով և փողերը փչելով տապանակը Սիօնի աշտարակը բարձ-

րացրին և դրին այն վրանի տակ, որը Դաւիթն էր խփել տուել: Թագաւորը ղետացիներէից մի քանիսին պաշտօնեայ նշանակեց ուխտի տապանակին, որոնք երգով և քնարով օրհնում էին և փառաբանում Աստուծուն. նմանապէս քահանաներ նշանակեց Ահարոնի ցեղից, սրանք էլ ամենայն օր ողջակէզ էին մատուցանում: Այսպէս նա Աստուածապաշտութեան կարգը սահմանեց և ինքն անձամբ մի քանի երգեր՝ սաղմոսներ հեղինակեց:

Այո բանից յետոյ Դաւիթը փղշտացիներէի դէմ պատերազմի դուրս եկաւ, հալածեց նրանց. նոյնպէս մովաբացիներէի դէմ գնաց, յաղթեց և հարկատու դարձրեց, այլև ասորւոց և եղոմացւոց յաղթեց: Նորա թագաւորութիւնը ընդարձակուեց ծովից մինչև Նիւրատ և Գամասկոսից մինչև Եգիպտոս: Աստուած օգնում էր Դաւթին, ուր որ նա գնում էր: Դաւթի անունը մեծ դառաւ բոլոր երկրներում. հետեաները զողում էին նորա անունը լսելիս: Նա դատաւորներ և պաշտօնեաներ նշանակեց երկրի մէջ. իւր բոլոր հպատակներէի համար իրաւունք և արդարութիւն ձեռք բերեց:

Յետոյ Դաւիթն ասաց. «Արդեօք Սաւուղի տանից որ և է ժառանգ չէ մնացել, որ ես Յովնաթանի սիրոյ համար նրան ողորմութիւն անեմ:» Նորա ծառաներից մինն ասաց. «Յովնաթանից մի կաղ որդի է մնացել»: Իսկոյն Դաւիթը մարդ ուղարկեց նրա յետեւից և բերել տուեց իւր մօտ: Երբ Յովնաթանի որդի Մեմփիբոսթէն Դաւթի առաջն եկաւ, երեսի վերայ ընկաւ. Դաւթն ասաց նրան. «Մի վախիր, ես

ուզում եմ քեզ ողորմութիւն անել՝ քո հայր Յովնաթանի սիրոյ համար. քեզ կտամ Սաւուղի բոլոր արտերը, դու ամէն օր իմ սեղանիս վերայ կը ճաշես և ճաշում էր: Այսպէս չմոռացաւ Դաւիթը իւր սիրելի Յովնաթանին:

«Թագաւոր հանձարեղ՝ իմաստութիւն ժողովրդոց»: Իմաստ. Սող. գ. 26.

Խելօք թագաւորը ժողովրդի համար բաղդաւորութիւն է:

«Նրանի քեզ, երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»: Ժող. ժ. 17.

§ 60.

Դաւիթը մեղանշումէ:

Մի անգամ Դաւիթը իւր Յովաբ գորավարին և ծառաներին ամոնացւոց դէմ ուղարկեց, որ նրանց գլխաւոր քաղաքը՝ Ռաբաթաւը պաշարեն, իսկ ինքը մնաց Երուսաղէմում: Մի օր թագաւորն անկողնից վերկացաւ և տան կտրի վերայ ման էր գալի. նա տեսաւ մի ղեղեցիկ կին, որի անունը Բերսաբէ էր. սա Ուրիաի կինն էր, որը Յովաբի հետ պատերազմ էր զնացել: Դաւիթը Յովաբին մի նամակ գրեց, որով պատուիրում էր նորան ու ասում. «Ուրիաին պատերազմի վտանգաւոր տեղն ուղարկիր, դու յետ դարձիր, թող նա սպանուի»: Յովաբն էլ այդպէս արեց. թշնամիները քաղաքից դուրս եկան և սկսեցին Յովաբի դէմ պատերազմել. Դաւիթի ծառաներից ոմանք մահ ստացան այստեղ. մեռաւ նմանապէս և Ուրիան:

Յովաբը մարդ ուղարկեց Դաւիթի մօտ այդ լուրը նորան հաղորդելու։ Երբ Ուրիայի կինը ամուսնու մահուան բօթն առաւ, սկսեց սուգ անել. սգի օրերն անցնելուց յետոյ, Դաւիթը մարդ ուղարկեց կնոջ մօտ, տուն բերել տուեց և իւր կինը դարձրեց։

Դաւթի այս արարմունքն Աստուծուն դուր չեկաւ. Նաթան մարդարէին նորա մօտ ուղարկեց։ Սա թաղաւորի մօտ եկաւ և հետեւեալ առաւին ասաց. «Մի քաղաքում երկու մարդիկ էին կենում, մինը հարուստ, իսկ միւսն աղքատ։ Հարուստն ունէր շատ հօտեր և անդէաներ, իսկ աղքատը միմիայն մի գառը. աղքատը շատ էր սիրում գառանը—նորան իւր հետն էր ուտացնում խմացնում և իրա զոգումն էր քնացնում որդու նման։ Մի օր հարուստի մօտ հիւր եկաւ. նա խնայեց իւր ոչխարներէն կամ տաւարներէն մինը մորթելու, այլ աղքատից նրա գառը խնց և նորանով հիւրին պատուեց»։ Դաւիթը բարկացաւ այդ արարմունքի վերայ և ասաց Նաթանին. «Այդ մարդը մահու պատժի արժանի է»։ Նաթանն ասաց Դաւթին. «Այդ մարդը դու ես, դու խնցիւր Ուրիայի կինը, իրան էլ ամուսնացուց սրով սպանել տուիր։ Աստուած այսպէս է ասում. ես քեզ Սաուղի ձեռքից ազատեցի և Յուդայի ու Իսրայէլի տան վերայ թագաւոր նշանակեցի, ի՞նչու դու իմ խօսքը արհամարհեցիր և այսպիսի չարութիւն գործեցիր։ Քո տանից քո դէմ չարիք—անբաղտութիւն կհանեմ. դու ծածուկ չարութիւն գործեցիր, իսկ ես քեզ կպատժեմ յայտնի կերպով ամբողջ Իսրայէլի և արեգական առաջ»։

Այն ժամանակ Դաւիթն ասաց Նաթանին. «Ես

մեղաւոր եմ Աստուծոյ առաջ»։ Դաւիթը գետնի վերայ ընկած աղօթում էր և ասում. «Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ Սիրտ սուրբ հաստատեա լիս, Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։ Մի ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց և զհոգի սուրբ քո մի հաներ լինէն»։ Նաթանն ասաց. «Աստուած ներեց քեզ քո յանցանքը, դու չես մեռնի»։ Նաթանը գնաց տուն։ Դորանից յետոյ Բերսաբէն մի որդի ունեցաւ, որին Սողոմոն անուանեց։ Աստուած նորան սիրում էր։ Դաւիթը Նաթան մարդարէին յանձնեց Սողոմոնի կրթութիւնը և նա էլ նորա անունը Յեղեղի դրեց։

Ար ծածկէ զամբարշտութիւն իւր՝ ոչ յաջողեցի՛ իսկ որ պատմէ եւ յանդիմանէ, սիրելի եղիցի»։ Առակք Սող. իր. 13.

§ 61.

Աբիսողոմ:

ա.

Բոլոր Իսրայէլի մէջ Դաւիթի որդի Աբիսողոմի նման զեղեցիկ մարդ չկար—ոտքի թաթից սկսած մինչև գազաթը ոչ մի պակասութիւն չունէր. Աբիսողոմի ամենազեղեցիկ զարդարանքը նորա գլխի մագաքերն էր։ Սորանից յետոյ Աբիսողոմը ձեռք բերեց կառքեր և ձիեր. լիսուն հատ սուրհանդակ ունէր։ Առաւօտները վաղ վեր էր կենում և կանգնումէր քաղաքի դրանը ճանապարհի վերայ։ Ամենքին, որոնք

գանդատներով թագաւորի մօտն էին գնում, ասումէր Աբիսողոմը. «Դու արդար ես, բայց ո՞վ կայ թագաւորի մօտ, որ քեզ պաշտպանէ: Երանի ինձ դատաւոր նշանակէին այս երկրի վերայ, ես գիտէի թէ ինչպէս արդարութեամբ կ'պաշտպանէի ամենքի իրաւունքը»: Եթէ մինը խոնարհումէր նորան երկրպագութիւն տալու, ձեռքից բռնում, վեր էր կացնում և համբուրումէր: Այս ձևով Աբիսողոմը գրաւեց իսրայէլի որդւոց սիրտը դէպի ինքը:

Սորանից յետոյ ասաց Դաւթին. «Թող տո՛ւր ինձ, հայր, որ Քեբեռոն ուխտ գնամ և Տիրոջը խոստացած զոհս մատուցանեմ»: Թագաւորն ասաց նորան. «Գնա խաղաղութեամբ»: Բայց Աբիսողոմը առաջուց մարդ էր ուղարկել իսրայէլի բոլոր քաղաքներն ասելու. «Երբ որ փողի ձայնը լսէք, ասացէք որ Աբիսողոմը Քեբեռոնում թագաւոր է դառել: Աբիսողոմը Քեբեռոն գնաց. դաւաճանութիւնը քանի գնում զօրանումէր. մեծ բազմութիւն էր հետևում նորան:

Երբ այս բանը Դաւթին իմաց տուին. Երուսաղէմում եղող բոլոր ծառաներին ասաց. «Վեր կացէ՛ք փախչենք Աբիսողոմի երեսից. շտապեցէ՛ք, մի գուցէ մեզ հասնէ և կոտորէ ու քաղաքն էլ սրի կերակուր դարձնէ»: Թագաւորը քաղաքից ոտով փախաւ իւր ծառաների հետ միասին. նորան հետևումէր մեծ բազմութիւն և դառն կերպով բարձրաձայն լաց լինում: Դաւիթն անցաւ Կետրոնի վտակը և լալով բարձրանումէր Ձիթենեաց լեռուը. թագաւորը գնում էր գլուխը ծածկած և ոտաբոբիկ: Սաւուղի տնից մի մարդ՝ Սեմէի անունով պատահեց Դաւթին, որին ա-

նիծումէր, քարեր արձակում վերան ու ասում. «Դո՛ւրս, դո՛ւրս, ո՞վ արիւնահեղ. Սաւուղի տան արիւնը Աստուած քեզ վերայ է դարձրել, քո թագաւորութիւնը յանձնեց քո որդի Աբիսողոմին. այժմ դու ես անբաղտութեան մէջ»: Այն ժամանակ Աբեստան պատասխանեց. «Ի՛նչպէս է վստահանում նա իմ տէր թագաւորին այսպէս անարգել, իրաւունք տո՛ւր, անցնեմ և նորա գլուխը կտրեմ»: Թագաւորն ասաց. «Թող տո՛ւր նորան անիծելու, Տիրոջ կամքն է այդ: Ահա հարազատ որդիս իմ ետևիցն է ընկել, որոնումէ՛ իմ անձը, ի՛նչ դարմանալու բան կայ, որ օտար Սեմէին աչքպէս է վարվում, դուցէ Աստուած նայէ իմ նեղութիւնը»: Այսպէս էր շարունակում Դաւիթը իւր ճանապարհը: Աբիսողոմը մտաւ Երուսաղէմ և առաւ այն բոլորն, ինչ որ իւր հօրն էր պատկանում:

Սորանից յետոյ Աբիսողոմը իւր մարդկանց հետ Յորդանանն անցաւ՝ հօրը հալածելու համար: Դաւիթն իւր մօտ եղած ժողովուրդը կարգադրեց և ասաց. «Ես ևս ձեզ հետ կամենումեմ թշնամու առաջ դուրս գալ»: Ժողովուրդը պատասխանեց. «Դու մի արի, դու մեզ համար տասն հազար մարդու հաւասար ես»: Ժողովուրդը գնաց, իսկ Դաւիթը Յովաբին, Աբեսային և բոլոր զլիաւորներին պատուիրեց ու ասաց. «Իմ սիրոյ համար ինայեցէ՛ք Աբիսողոմին»: Երբ պատերազմի դաշտը դուրս եկան, Եփրեմի անտառում հանդիպեցին իրար. պատերազմն արիւնահեղ էր. իսրայէլի ժողովուրդը մեծ հարուած ստացաւ Դաւթի ծառաներից: Աբիսողոմը ջորու վերայ նստած փախաւ

և երբ մի մեծ կաղնու թաւ աստերի տակովն անցնումէր, մազերը ճիւղերի մէջ խճճուեցան, մնաց կախ ընկած ու ճօճումէր երկնքի ու երկրի մէջ, իսկ նորա տակի ջորին անցաւ, գնաց: Երբ այս բանը Յովաբին իմաց տուին, վեր առաւ երեք գեղարդ և խրեց Աբիսողոմի սիրտը: Յովաբը զինակիրները շրջապատեցին նորան, սպանեցին, ձգեցին մի փոսի մէջ և վերան քարակոյտ կազմեցին:

Աւետաբեր եկաւ Դաւթի մօտ պատերազմի դաշտից և յայտնեց նորան յաղթութեան լուրը: Դաւիթը հարցրեց. «Աբիսողոմ պատանին ո՞ղջէ»: Երբ որ տեղեկացաւ բոլոր իրողութեան հետ, տխրեց, լաց էր լինում և ասում. «Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսողոմ որդեակ իմ, երանի թէ ես մեռնէի քո փոխարէն, ո՞վ որդեակ իմ Աբիսողոմ»:

Սորանից յետոյ Յուդայի մարդիկը Դաւթի մօտ ուղարկեցին և ասացին. «Յետ արի վերստին, դու էլ, քո ծառաներն էլ»: Նրանք մինչև Յորդանան գնացին Դաւթին գիմաւորելու: Սեմէին ևս եկաւ դրանց հետ, թագաւորի ոտներն էր ընկնում և ասում. «Մի լիշիր իմ յանցանքը, ես խոստովանում եմ իմ սխալանքը»: Արեստան ասաց. «Նա պէտքէ մեռնի, վասն զի Աստուծոյ օճեալին անիծել է»: Դաւիթը պատասխանեց. «Այսօր ոչ ոք չպիտի մեռնի, երբ ես իսրայէլի վերայ թագաւոր եմ եղել»: Դաւիթը երդուեց Սեմէին, և ասաց. «Դու չես մեռնի»: Սորանից յետոյ Դաւիթը կրկին գիմեց Երուսաղէմ:

«Արդեամբք և բանիւք պատուեալ գհայր քո, զի եկեացէ ի վերայ քո օրհնութիւն ի նմանէ: Զի

օրհնութիւն հօր հաստատէ գտունս որդւոյ, և անէծք մօր՝ խլեն գհիմունս»: Սիրաբ. գ. 9—11.

Պատուիր քո հօրը՝ թէ գործքով և թէ խօսքով՝ որ նորա օրհնութիւնը քեզ վերայ գայ: Որովհետև հօր օրհնութիւնը հաստատում է որդւոյ տունը, իսկ մօր անէծքը՝ հիմքից կործանում:

«Որոց սիրենն գԱստուած՝ յամենայնի գործակից լինի ի բարիս»: Ն. ա. հռովմ. գ. 28.

«Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութան իւրեանց: Սաղ. հբ. 19.

§ 62.

Դաւթի մահը:

Երբ Դաւիթը ծերացաւ, Երուսաղէմ ժողովեց բոլոր իշխաններին, դատաւորներին և զինուորականներին ու ասաց. «Ինձ լսիր, ո՞վ ժողովուրդ, ես մտադիր էի Այտուծոյ համար մի տուն շինել, որպէսզի ուխտի տապանակն աջնտեղ դնեմ: Բայց Աստուած ինձ իւր ծառայ Նաթանի ձեռքով ասաց. ինձ համար դու տուն չես կարող շինել, որովհետև զինուոր մարդ ես, շատերի արիւնն ես թափել. երբ դու կմեռնիս, քո որդի Սողոմոնը քեզ կը յաջորդէ. նա պիտի ինձ համար մի տուն կառուցանէ. ես նորա թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ: Ուրեմն Աստուած իմ բոլոր որդւոց միջից Սողոմոնին ընտրեց իմ գահին ժառանգ: Այսպէս ուրեմն՝ Աստուծոյ բոլոր պատուիրանները պահեցէք, որպէս զի այս գեղեցիկ երկիրը ժառանգէք և ձեր որդւոց ժառան-

գել տաք: Իսկ դու, որդեակ իմ Սողոմոն ճանաչիր քո հօր Աստուծուն և ծառայիր նորան կատարեալ սրտով և յօժար կամքով. եթէ նորան որոնես, կգտնես, իսկ եթէ թողնես, մոռանաս, նա էլ քեզ կթողնէ, կմոռանայ: Աստուած քեզ ընտրեց իւր համար տուն կառուցանող: Ես գնում եմ այնտեղ, ուր ամենքն են գնում, բայց դու միւլիթարուիր, մի վախենար, իմ Աստուածը քեզ հետ կլինի»:

Դաւիթ թագաւորը տուեց իւր որդի Սողոմոնին տաճարի գաղափարը՝ թէ ինչ ձևով պիտի շինէ և յետոյ շարունակեց ժողովրդեան հետ խօսելը. «Աստուծոյ տունը կառուցանելը շատ մեծ գործ է. ես իմ կարողութեանս չափ բաւականին ոսկի, արծաթ, թանկագին քարեր, երկաթ, փայտ և մարմար ժողովել եմ: Բացի այդ Աստուծոյ տան վերայ ունեցած սիրոյս համար տալիս եմ 3,000 տաղանդ ոսկի և 7,000 տաղանդ արծաթ. իսկ ձեզանից ով է յօժար Աստուծոյ տան համար այսօր կամաւոր նուէր մատուցանելու»: Այն ժամանակ իշխանները, դատաւորները, ժողովուրդը ամենքն էլ իրենց կարողութեան չափ ընծայ տուին Աստուծոյ տան համար: Ժողովուրդը շատ ուրախացաւ: Որովհետեւ ամենքն էլ ազատ կամքով նուիրեցին, ուստի Դաւիթը ևս շատ ուրախացաւ. նա փառաբանում էր Աստուծուն և ասում. «Օրհնեցէք ձեր Տէր Աստուծոյ անունը»: Բոլոր ժողովուրդն էլ օրհնեց Աստուծոյ անունը և խոնարհելով երկրպագութիւն էին տալի, աղօթում և ողջակէզ մատուցանում: Քահանան էլ վեր առաւ իւրի եղջիւրը, Սողոմոնին թագաւոր օծեց. փողերը փչում էին, իսկ ժո-

ղովուրդն աղաղակում էր. «Յաջողութիւն Սողոմոն թագաւորին»:

Ձատ չքաշեց սորանից յետոյ, որ հին թագաւորը մեռաւ և թաղուեց Դաւիթի քաղաքում: Նա թագաւորեց իսրայէլի վերայ քառասուն տարի, որից յետոյ նորա որդի Սողոմոնը իրան յաջորդեց:

«Երանի մեռելոցն, որք 'ի Տէր ննջեցին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չօքան զհետ նոցա»: Յայտ. Յովհ. Ժդ. 13.

Երանի... որովհետեւ նրանք իրանց աշխատանքից հանգստացան. նոցա գործքերը իրանց հետեւում են:

Դ.

§ 63.

Սողոմոն թագաւորը:

ա.

Սողոմոնը սիրում էր Աստուծուն և իւր հայր Դաւիթի ճանապարհովն էր գնում: Երբ թագաւորը Դաւաւոնում զոհ էր մատուցանում, Աստուած գիշերով երեւաց երազում և ասաց. «Խնդրիր ինձանից ինչ որ ուզում ես»: Սողոմոնը պատասխանեց. «Ով Տէր իմ Աստուած, Դու թագաւորեցիր ծառայիդ իմ հայր Դաւիթի տեղը, որը քո ճանապարհով կեանք վարեց, իսկ ես մի փոքր տղայ եմ, չգիտեմ ոչ իմ բարին և ոչ չարը, ուրեմն տուր քո ծառային իմաստուն սիրտ՝ քո ժողովուրդը դատելու և կարողութիւն՝ լաւը վատից որոշելու»: Այս խօսքերն Աստուծուն դուր եկան: Նա ասաց. «Որովհետեւ դու այդ բանը

խնդրեցիր և չխնդրեցիր երկար օրեր և հարստութիւն, ահա տալիս եմ քեզ այնպիսի իմաստուն սիրտ, որը ոչ քեզանից առաջ եղել է և ոչ քեզանից յետոյ կլինի: Բացի այդ՝ ես տալիս եմ քեզ և այն, ինչ որ չխնդրեցիր, այն է հարստութիւն և փառք: Եթէ դու իմ ճանապարհովս կգնաս և իմ պատուիրանները կպահես, ինչպէս քո հայր Դաւիթը, քեզ երկար կեանք ևս կտամ»:

Բ.

Այդ օրերում երկու կանայք թագաւորի մօտ դանգատի եկան: Կանանցից մինն ասաց. «Ո՛հ, Տէր իմ, ես և այս կինը մի տան մէջ ենք կենում: Ես մի որդի ծնայ. երեք օրից յետոյ նա ևս մի որդի ունեցաւ. մենք միայնակ էինք. մեզնից աւելի ոչ ոք չկար այն տան մէջ: Այս կնոջ որդին գիշերը մեռնումէ, որովհետեւ վրան պառկումէ ու խեղդում: Կէս գիշերին վեր է կենում, առնում իմ որդին գրկիցս և իւր խեղդուած որդուն իմ ծոցն է դնում: Առաւօտը վեր կացայ տղային ծիծ տալու, տեսայ որ մեռած էր և ցերեկն ուշադրութեամբ նայելով՝ գտայ որ իմ որդին չէ»: Իսկ միւս կինը խօսեց և ասաց. «Այգպէս չէ, կենդանին իմ տղան է, մեռածը քոնն է»: Իսկ առաջինը պատասխանեց. «Ո՛հ, մեռածը քո տղան է, իսկ կենդանին իմն է»: Այսպէս էին խօսում նրանք թագաւորի առաջ:

Այն ժամանակ թագաւորն ասաց. «Սուր բերէք ինձ մօտ»: Եւ երբ սուրբ բերին, Սողոմոնն ասաց. «Կէս արէք կենդանի երեխային, մի կէսը տուէք միւսին, իսկ միւս կէսը՝ միւսին»: Կանանցից մինն ա-

սաց թագաւորին. «Մի սպանէք»: Իսկ միւսն ասում էր. «Ո՛հ ինձ լինի, ո՛չ քեզ, թող կտրեն»: Թագաւորն ասաց. «Առաջին կնոջը տուէք կենդանի երեխան, որովհետեւ նա է հարազատ մայրը»: Այս դատաստանը յայտնի եղաւ բոլոր իսրայէլի մէջ և ամենքը քաշվում էին նորանից, որովհետեւ նորա մէջ դատաստան անելու աստուածային իմաստութիւն նկատեցին:

Գ.

Սողոմոնը թագաւորումէր այն բոլոր երկիրների վերայ, որ իւր հայրն էր նուաճել. նրան ընծաներ էին բերում և ծառայում էին իւրեանց կեանքի ընթացքում:

Սողոմոնն ունէր 40,000 կառքի ձիաներ և 12,000 ձիաւոր: Նորա գործակալներն ամենայն բան հոգում էին, ոչինչ թերութիւն չկար: Պալատում իւրաքանչիւր օր գործ էր անում 90 քու ալիւր, 30 տաւար և 100 ոչխար:

Երկրի մէջ խաղաղութիւն էր տիրապետում Սողոմոնի կենդանութեան ժամանակ. Յուդայի և Իսրայէլի տները հանգիստ կեանք էին վարում իւրաքանչիւրը իրենց որթի և թզենու տակ:

Աստուած Սողոմոնին մեծ իմաստութիւն տուեց. նա բոլոր մարդկանցից էլ իմաստուն էր. նորա անունը հեթանոսների մէջ տարածուած էր: Սողոմոնը 3,000 առակներ ասաց, իսկ նորա երգած երգերի թիւը 1,005 է: Երկրիս բոլոր ծայրերից մարդիկ գալիս էին Սողոմոնի իմաստութիւնը լսելու:

«Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ»։ Ի. Թ. Յովհ. Ե. 14.

Սա մի համարձակութիւն (ուրախութիւն) է մեզ համար, որովհետեւ ինչ որ նորա կամքի համաձայն խնդրելու լինենք, կ'լսէ մեզ։

«Սկիզբն զգօնութեան երկիւղ Տեառն»։ Սաղ. ճԺ. 10.

Իմաստութեան սկիզբը Աստուծոյ երկիւղն է։

§ 64.

Սողոմոնի տաճարի շինութիւնը։

ա.

Սողոմոնը մարդ ուղարկեց Տիւրոսի Քիրամ թագաւորի մօտ ասելու. «Դու գիտես, որ իմ հայր Դաւիթը պատերազմների պատճառով չկարողացաւ իւր Տէր Աստուծոյ համար՝ նորա անուան վայել մի տուն շինել։ Այժմ իմ Տէր Աստուածը ինձ խաղաղութիւն է պարգևել և ահա ես մտադիր եմ մի տուն շինել իմ Տէր Աստուծոյ համար։ Արդ՝ հրաման տուր իմ ծառաներին քո ծառաների հետ Լիբանանու անտառներից եղևիններ կտրել ինձ համար. զորա փոխարէն ես քեզ ցորեն, զինի և իւղ կ'վճարեմ»։ Քիրամը շատ ուրախացաւ և մարդ ուղարկեց Սողոմոնի մօտ ասելով. «Ամենայն բան քո ցանկութեան համաձայն կ'կատարեմ»։ Նրանք դաշն կապեցին միմեանց հետ։ Սողոմոն թագաւորը 30,000 մարդ ուղարկեց Լիբանան յաջորդաբար՝ ամիսն 10,000. նա 70,000 բեռնակիր, 80,000 քարհատ, բացի այդ 3,500

իշխաններ, վերակացուներ նշանակած ունէր գործի վրայ։ Սողոմոնի և Քիրամի վարպետները տաշում, պատրաստում էին քարերը Աստուծոյ տան շինութեան համար։

Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարումը Մորէա լեւան վերայ Սողոմոնի տաճարի հիմքը դրվեց։ Տիրոջ անուան համար կառուցանելի տունը 60 ոտնաչափ երկայնութիւն, 20 ոտնաչափ լայնութիւն և 30 ոտնաչափ բարձրութիւն ունէր։ Տունը ներսից շինուած էր եղևնու փայտով. յատակը կաշնու տախտակով. տախտակած տունը ներսից մաքուր ոսկով պատեց, իսկ յատակը՝ ոսկեայ թիթեղով, այնպէս որ ամբողջ տունը ոսկեով էր պատած։

Տաճարը բաժանուած էր երկուսի—սրբութիւն, սրբութիւն սրբոց. տապանակ ուխտին այստեղ պէտք է դնէին։ Տաճարի շուրջը Սողոմոնը երկու զաւիթ շինեց—արտաքինը ժողովրդի համար, իսկ ներքինը՝ քահանաների. այստեղ էր դրած զոհի սեղանը և պղնձէ ծովը քահանայից լուացուելու համար։ Եօթն տարուց յետոյ տաճարի շինութիւնն աւարտուեց։

Երբ շինութիւնը վերջացրեց Սողոմոնը, Երուսաղէմ կանչեց երկրի միջի բոլոր ճերերին և իշխաններին, նոյնպէս և ժողովրդին։ Քահանաները ուխտի տապանակը և բոլոր սրբազան անօթները Միօնի վերայից տաճարը տեղափոխեցին։

Սողոմոնը և ամբողջ հասարակութիւնը հետևում էր նրանց։ Երբ քահանայքը ուխտի տապանակը սրբութիւն սրբոցում դրին, թագաւորն օրհնեց ամ-

բողջ իսրայէլի ժողովուրդը. չոքեց Տիրոջ սեղանի առաջ, ձեռքերը երկինք կարկառեց և ասաց. «Տէր, իսրայէլի Աստուած, երկինքը և երկնից երկինքը բաւական չեն քեզ պարունակելու, ուր մնաց այս տունը, որ ես քո անուան համար կառուցի: Լսիր քո ծառայի աղօթքը և նորա խնդրուածքը. լսիր մեզ ամեն ժամանակ՝ թէ՛ զիշեր և թէ՛ ցերեկ: Լսիր այստեղ աղօթող քո իսրայէլ ժողովրդի աղօթքը. ողորմած եղիր դէպի նա նեղութեան ժամանակ, որպէս զի նրանք միշտ երկիւղած լինին և բնակուեն այն երկրում, որը Գու մեր պապերին ես տուել: Եթէ կըզայ մի այլազգի՝ հեռու երկրից այս տաճարում աղօթելու, նրան ևս լսիր, Տէր Աստուած. որպէս զի երկրիս վերայի բոլոր մարդիկը ճանաչեն քեզ և երկիւղ ունենան քեզնից, քո իսրայէլ ժողովրդի նման: Եթէ քո ժողովուրդը քո դէմ մեղանչի, որովհետեւ ով իցէ որ ոչ մեղիցէ, և ուղղուած սրտով քեզ դառնայ, նորա խնդրուածն էլ լսիր»:

Աղօթքը վերջացնելուց յետոյ Սողոմոնը վեր կացաւ սեղանի առաջից և օրհնեց բոլոր իսրայէլի ժողովրդին. թաղաւորն ամբողջ ժողովրդի հետ միասին շնորհակալութեան զօհ բերեցին Աստուծուն. Սողոմոնը եօթն օր և եօթն զիշեր տօն կատարեց, իսկ ութերորդ օրը արձակեց ժողովրդին: Ամենքն օրհնում էին թագաւորին և տուն դարձան ուրախ սրտով՝ փառաբանելով Աստուծոյ անունը, որը իսրայէլի ժողովրդին այդպիսի մեծ բարութիւն է արել:

«Տէր սիրեցի զվայելութիւն տան քո, եւ գտեղի չարկի փառաց քոց»: Սաղ. իե. 8.

Աստուած, ես սիրեցի քո տան գեղեցկութիւնը և քո փառքի բնակուելու տեղը:

«Տնոր ցիս, որդեակ, զսիրտ քո, եւ աչք քո ճանապարհաց իմոց սպասեցեն»: Առակ. Սող. իգ. 26.

Սիրտդ ինձ տնոր, որդեակ, թող քո աչքերը իմ ճանապարհին սպասեն:

§ 65.

Սողոմոնի փառքը, ընկնիլը և մահը:

ա.

Սողոմոնը եղևնու փայտից իւր համար մի տուն շինեց, որի երկարութիւնը 100, լայնութիւնը 50 և բարձրութիւնը 30 կանգուն էր: Այս տան շինութիւնը 30 տարի քաշեց. նրա շուրջը սրահներ շինեց՝ բոլորն էլ եղևնու փայտից: Ամուսնացաւ Փարաւոնի աղջկայ հետ և նորա համար ևս մի հոյակապ տուն շինել տուեց՝ քարից և եղևնու փայտից: Յետոյ մի սրահ ևս շինեց, ուր և դատում էր ժողովրդին. նոյնպէս շինել տուեց իւր համար փղոսկրեայ դահ՝ պատած աղնիւ ոսկով: Թագաւորի խմելու բոլոր բաժակները, նոյնպէս ամանները ոսկուց էին. արծաթը յարդի չէր: Յետոյ Սողոմոնը նաւեր շինել տուեց. Քիրամը նորա համար լաւ նաւաստիներ ուղարկեց, որոնք, հասկանում էին այդ արհեստը: Սրանք Սողոմոնի ծառաների հետ նաւումէին և նորա համար ոսկի, արծաթ, փղոսկր, կապիկ և սիրամարդեր էին բերում: Բացի այդ ամենքը բերումէին

Թագաւորի համար իբրեւ ընծայ ոսկեայ և արծաթեայ ամաններ, շորեր, զէնքեր, նոթոյնքեր և ջորիներ: Այսպէս Սողոմոնը իւր հարստութիւնով և իմաստութիւնով առաջին թագաւորը դառաւ աշխարհիս մէջ, այնպէս որ ամենքը ցանկանում էին նորան տեսնել և նորա իմաստութիւնը լսել:

Սաբայի թագուհին, որը Արարիայումն էր բնակվում, մեծ բազմութեամբ՝ ուղտերը բարձած խնկով, ոսկով և ազնիւ քարերով Սողոմոնի տեսութեան եկաւ: Թագուհին առաջարկեց այն բոլոր հարցերը, որոնք նա իւր սրտումն ունէր և բոլորի մեկնութիւնն էլ ստացաւ. մութը էլ ոչինչ չմնաց նորա համար: Երբ թագուհին լսեց Սողոմոնի իմաստութիւնը և տեսաւ նորա կառուցած տունը, ծառաներին և բոլոր փառահեղութիւնները, այլևս չկարողացաւ համբերել և ասաց. «Ինչ որ ես իմ երկրի մէջ լսել էի՝ քո և քո իմաստութեան մասին բոլորն էլ ուղիղ են: Այս բաներին ես չէի կամենում հաւատալ, դորա համար էլ եկայ իմ աչքով տեսնելու. այժմ նկատումեմ, որ ինձ իմ տեսածի կէսն էլ չեն պատմել, բաղդաւոր են քո ծառաները, որոնք միշտ քո առաջն են կանգնում և քո իմաստութիւնը լսում: Յետոյ տուեց Սողոմոնին 110 տաղանդ ոսկի, խունկ և պատուական քարեր: Սողոմոնն էլ տուեց թագուհուն այն բաները, ինչ որ նա ցանկանում էր և բացի այդ ուրիշ շատ ընծաներ: Թագուհին դարձաւ իւր երկիրը:

բ.

Սողոմոն թագաւորն ունէր շատ օտարազգի կանայք, որոնց թիւը 700-ի էր հասնում: Մերութեան

ժամանակ կանայքը փոխեցին Սողոմոնի սիրտը զէպի օտար աստուածներ, այնպէս որ նորա սիրտը ամբողջապէս ճշմարիտ Աստուծուն չէր նուիրուած: Սողոմոնն Աստուծուն չէր հետևում և իւր օտարազգի կանանց համար Երուսաղէմում տաճարներ շինել տուեց, ուր նրանք իրանց կուռքերին զոհեր էին մատուցանում և խունկ ծխում: Այս բանը դուր չեկաւ Աստուծուն, նա յայտնեց Սողոմոնին ասելով. «Որովհետեւ դու իմ ուխտը և իմ պատուիրանները չպահեցիր, ուստի ես քո թագաւորութիւնը կ'իյլեմ քեզնից, բայց ոչ կենդանութեանդ ժամանակ, այլ քո օրգու. նրանից չեմ խլի ամբողջ թագաւորութիւնը, այլ մի մասը քո հայր Դաւթի սիրոյ համար կ'թողնեմ»:

Սողոմոնի ծառաներից մինը Յերոբոամ անունով ապստամբեց թագաւորի դէմ. սա մի քաջ և պատերազմող մարդ էր: Սողոմոնը հրամայեց, որ սպանեն նորան, բայց նա Եզիպտոս փախաւ: Սողոմոնը 40 տարի թագաւորեց իսրայէլի ժողովրդի վերայ և յետոյ մեռաւ ու թաղուեց Դաւթի քաղաքում: Նորա օրդի Ռոբոամը թագաւորեց հօր տեղը:

«Աշխարհս անցանէ՝ եւ ցանկութիւն. իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ ՚ի յաւիտեան»: Ի. Թ. Յովհ. բ. 17.

Աշխարհս իւր ցանկութիւններով անցուորական է, իսկ ով որ Աստուծոյ կամքովն է շարժվում, նա յաւիտեանականէ մնում:

Ե.

ԹԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՒ ՎԵՐՋԷ:

§ 66.

Յերբովամ և Ռորովամ:

ա.

Ռորովամը գնաց Սիւքէմ, որովհետեւ ամբողջ իսրայէլը այնտեղ էր հաւաքուել՝ նորան թագաւոր օծելու համար: Իսկ ոմանք մարդ էին ուղարկել Յերբովամին կանչելու: Յերբովամը և ամբողջ իսրայէլը ասացին Ռորովամին. «Քո հայրը մեր լուծը շատ ծանրացրեց, մենք այն պայմանով քեզ հպատակ կմնանք, եթէ մեր լուծը թեթեւացնես»: Ռորովամը խորհուրդ արեց ժողովրդի ձերբեր հետ, որոնք նորա հօր խորհրդականներն էին և ասաց. «Ի՞նչ խորհուրդ էք տալի»: Նրանք պատասխանեցին. «Եթէ դու այսօր լսես այս ժողովրդին և նրանց հետ սիրով խօսես, բարի խոստումներ անես, քանի որ կենդանի ես՝ քեզ հաւատարմութեամբ կծառայեն»: Ռորովամը մերժեց ձերբեր խորհուրդը և իւր հասակակից ընկերների հետ խորհուրդ կազմեց. նրանք այսպէս խորհուրդ տուին. «Պո՛ւ ժողովրդին այսպէս պատասխանիր. իմ հայրը ձեզ խարազանով էր պատժում, իսկ ես մտրակով և կարիճով պէտքէ պատժեմ»:

Ռորովամը պատասխանեց Յերբովամին և բոլոր ժողովրդին այնպէս, ինչպէս իւր երիտասարդ ընկերներն էին խորհուրդ տուել: Երբ ժողովուրդը նկատեց, որ թագաւորը իրան չի ուզում լսել, ասացին.

«Մենք ինչ գործ ունենք Դաւթի տան հետ. [Ժող իսրայէլը իւր վրանները դառնայ]: Նրանք տուն դարձան և Յերբովամին թագաւոր օծեցին: Այսպէս իսրայէլը բաժանուեց Ռորովամից. այլ ևս ոչ ոք չէր լսում Դաւթի տան թագաւորին բացի Բենիամինի ցեղից:

բ.

Յերբովամը ամրացրեց Սիւքէմը և իրան մայրաքաղաք դարձրեց: Նա ասում էր. «Եթէ իմ ժողովուրդը Երուսաղէմ գնայ զոհ բերելու Տիրոջ տան մէջ, նորա սիրտը կհակուի դէպի Ռորովամը, Յուդայի տան թագաւորը և ինձնից կհեռանայ: Թագաւորը խորհուրդ կազմեց, երկու հատ ոսկէ հորթեր շինել տուեց ու ասաց ժողովրդին. «Բաւական է ինչքան Երուսաղէմ գնացիք, ահա ձեր աստուածները, որոնք ձեզ Եզրիպտոսից ազատեցին»: Հորթերից մինը Բեթէլում իսկ միւսը Դանում նշանակեց և ժողովուրդը յաճախում էր թէ մինի և թէ միւսի մօտ: Թագաւորը մի բլրի վերայ մի մեհեան ևս շինեց և քրմներ նշանակեց նրանց պաշտօն մատուցանելու, բաց ոչ Ղևիի ցեղից: Տօն կատարել տուեց Բեթէլում, ինչպէս սովոր էին Յուդայի երկրում. ժողովուրդը պահք էր պահում ու ծխում հորթի առաջ: Սորա համար ևս Աստուած մարգարէի բերանով յայտնեց նորան ասելով. «Քո տունը կանքողդացնեմ և քո թագաւորութիւնը կջնջեմ իսպառ»:

Յուդայի տունը ևս սկսեց Աստուծոյ դէմ չալութիւններ գործել. նրանք բարձրաւանդակների վերայ աստուածներ և անտառի կուռքեր շինեցին.

բարձր բոլորների վերայ և կանաչ ծառերի տակ գործումէին Հեթանոսների բոլոր չարութիւնները: Եգիպտոսի թագաւորը Երուսաղէմի վերայ եկաւ և Աստուծոյ տան զանձերը տարաւ, նոյնպէս և Ռոբո-վամ թագաւորի տան Հարստութիւնները ու այն ամենը՝ ինչ որ գին ունէր: Ռոբովամը և Յերոբովամը իրանց ամբողջ կեանքում պարապած էին ներքին պատերազմներով:

Միութիւնը գորութիւն է:

«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք»: Առակք. ԺԳ. 34.

§ 67.

Եղիա:

ա.

Իսրայէլի թագաւորներէն մինի անունն էր Աքա-ար: Նա ամուսնացաւ Միզոն քաղաքի թագաւորի աղջկայ՝ Յեզաբելի հետ և նրանց Բահադ կուռքին երկրպագութիւն էր անում: Սամարիայում կռատուն էլ շինեց. իւր վատ գործերով իրանից առաջ եղած իսրայէլի բոլոր թագաւորներէն առաւել բարկացրեց Աստուծուն: Յեզաբելը խեղդել տուեց բոլոր մարդա-րէներին: Այն ժամանակ Եղիա մարգարէն եկաւ Աքա-արի մօտ և ասաց. «Այս տարի ոչ անձրև և ոչ ցօղ կիջնի երկնքից»:

Բ.

Աստուած ասաց Եղիային. «Գնա՛ Բերիտ Հեղե-ղատը. այնտեղ ջուր կ'իմես, իսկ ագռաւներին հրա-

մայել եմ որ քեզ կերակրեն»: Նա լսեց Տիրոջ խօսքին և գնաց. ագռաւները նորա համար հաց և միս էին բերում, իսկ ջուրը հեղեղատիցն էր խմում: Մի քանի օրից յետոյ Հեղեղատի ջուրը ցամաքեց, որովհետև անձրև չէր գալիս երկրի մէջ: Աստուած ասաց նո-րան. «Վեր կ'աց և գնա՛ Սարեպտա, այնտեղ մի որբ-ւայրի կ'նոջ հրամայել եմ, որ քեզ կերակրէ»:

Եղիան վեր կացաւ և երբ քաղաքի դրանը հա-տաւ, տեսաւ մի որբւայրի կին, որ փայտ էր հաւա-քում: Եղիան ասաց. «Խնդրեմ ինձ համար փոքր ինչ ջուր բեր, որ խմեմ, նոյնպէս պատառ հաց»: Կինը պատասխանեց. «Աստուծոյ անունը վկայ լինի, որ մի բուռը ալիւրից և մի քիչ իւղից աւելի ոչինչ չունիմ. ահա այս փայտերը տանում եմ որ հաց թխեմ, ես և իմ միակ զրդին ուտենք, որ չմեռնենք»: Եղիան ասաց նորան. «Գնա՛, մի վախենար, պատրաստիր քեզ համար էլ, ինձ համար էլ, որովհետև Աստուած այս-պէս է ասում. քո տաշտից ալիւրը և ամանից իւղը չպիտի պակսի մինչև այն օրը, երբ Աստուած անձրև կուղարկէ»: Կինը գնաց և այնպէս էլ արեց, նա կե-րաւ, նմանապէս կինը և իւր օրդին: Տիրոջ ասածին համաձայն՝ տաշտից ալիւրը և ամանից իւղը երբէք չպակասեց:

Գ.

Սովի երրորդ տարին Աստուած ասաց Եղիա-յին. «Գնա՛ Աքաարի մօտ և ասա՛ որ անձրև պիտի թափեմ երկրիս վերայ»: Եղիան գնաց: Երբ Աքաարը Եղիային տեսաւ, ասաց. «Այդ գո՞ւ ես, իսրայէլի խանգարիչ»: Եղիան ասաց. «Ես չեմ իսրայէլին խանգա-

րողը, այլ դու և քո տունը, որովհետև դուք Աստուծոյ պատուիրանները բարձի թողի էք արել—Բաճաղին էք լսում: Մարդ ուղարկիր և ժողովրդեան Կարմելոս լե-
րան վերայ հաւաքել տնւր՝ նոյնպէս բաճաղի 450 մարդարէներին»: Այդպէս էլ արեց Աքաաբը: Այն ժա-
մանակ Եղիան ժողովրդեան առաջ դուրս եկաւ և
ասաց. «Մինչև երբ պիտի կաղաք երկու կողմի վե-
րայ, եթէ Աստուածը Եհովան է, գնացէք նորա՝ յե-
տևից, իսկ եթէ Բաճաղն է՝ նորան լսեցէք»: Փողո-
վուրդը ոչինչ չպատասխանեց, Եղիան շարունակեց.
«Միայն Եհովայի մարգարէներէց ես եմ մնացել, իսկ Բա-
ճաղինը՝ 450 են: Արդ՝ թող մեզ երկու եզր տան, մինը
սորանք վերցնեն, կոտորեն, դնեն փայտերի վերայ ա-
ռանց կրակի, իսկ միւսն էլ ես կվերցնեմ և նոյնպէս կը
վարուիմ: Յետոյ դուք ձեր Աստուծոյ անունը տուէք,
իսկ ես Եհովայինը: Այն Աստուածը, որը կրակով պա-
տասխան կտայ, ահա նա է ճշմարիտ Աստուածը: Բոլոր
ժողովուրդը պատասխանեց. «Ձատ իրաւացի խօսք է»:

Բաճաղի քուրմերը վեր առան մի եղը և այն-
պէս արին, ինչպէս որ ասած էր ու սկսեցին առա-
ւօտից մինչև կէս օր Բաճաղի անունը տալ և ասել.
«Ո՛վ Բաճաղ, պատասխան տո՛ւր»: Բայց ոչ մի պա-
տասխան չկար: Եղիան ծաղրում էր նրանց և ասում.
«Բարձր ձայնով կանչեցէք, դուցէ նա զբաղուած է
կամ ճանապարհորդութիւն է անում, շատ կարելի է
քնած է»: Նրանք սկսեցին ևս աւելի բարձրաձայն
աղաղակել. մարմինները սրով կտրատել, բայց ոչ մի պա-
տասխան չէին ստանում: Եղիան ասաց բոլոր ժողո-
վրդին. «Եկէք ինձ մօտ»: Նա սեղան կազմեց շուրջը

փոս փորեց. սեղանի վերայ փայտեր դարսեց. եզր
կտրատեց, և դարսեց փայտերի վերայ: Երեք անգամ
ողջակիդի փայտի վերայ ջուր ածել տուեց, այնպէս
որ փոսը ծովի պէս ջրով լցուեց: Սրանից յետոյ եկաւ
Եղիան և ասաց. «Ո՛վ Աբրահամի Իսահակի և Իսրա-
էլի Աստուած, ցոյց տուր այսօր, որ դու ես իսրա-
էլի Աստուածը, իսկ ես՝ քո ծառան. լսիր Աստուած,
լսիր ինձ. թող այս ժողովուրդն իմանայ, թէ դու ես
Տէր Աստուածը և յետ դառնայ»: Իսկոյն կրակ ըն-
կաւ երկնքից և այրեց ողջակէզը: Բոլոր ժողովուրդը
երեսի վերայ ընկաւ և ասաց. «Եհովան է ճշմարիտ
Աստուածը, Եհովան է ճշմարիտ Աստուածը»: Եղիան
պատասխանեց. «Բաճաղի մարգարէներին բռնեցէք,
որ չփախչեն»: Բռնեցին և Կիսոն հեղեղատի մօտ
սպանեցին: Եղիան ասաց Աքաաբին. «Լծիր կառքդ և
վայր իջիր, որ անձրևը քեզ չթրջէ»: Իսկոյն քամի
փչեց. երկինքը ծածկեց սև ամպով և յորդ անձրև
եկաւ:

Գ.

Աքաաբը պատմեց Յէզաբելին այն ամենը, ինչ
որ Եղիան արեց: Յէզաբելը գետպան ուղարկեց Եղիայի
մօտ, որ պոնն. «Աստուածները ինձ թող պատժեն,
եթէ քեզ էլ այնպէս տպանել չտամ, ինչպէս դու Բաճաղի
քուրմերին անել տուիր»: Եղիան փախաւ Յուդայի անա-
պատը. նստեց մի ծառի տակ և ասաց. «Բաւական է, Տէր
Աստուած, առ իմ հոգին. ես իմ հայրերից լաւը չեմ»:
Նա պառկեց այնտեղ և քնեց: Յետոյ վեր կացաւ 40
օր ճանապարհ դնաց մինչև Աստուծոյ լեռը՝ Քորէբ
և այնտեղ մի այլի մէջ ապրումէր: Աստուած ասաց

նորան. «Ի՞նչ ես անում այստեղ, Եղիա»: Նա պատասխանեց. «Ես քո անուանը նախանձախնդիր եղայ, որովհետև իսրայելի որդիները մոռացել էին քո ուխտը. մոռացել, կործանել էին քո անունով շինած սեղանները. քո մարգարէներին սրով կոտորեցին. ես միայն ազատուել եմ. նրանք իմ կեանքիս յետևիցն էլ են ընկել»: Աստուած ասաց. «Գուրս արի, բարձրացիր լեռը: Եւ ահա Աստուած անցաւ նորա մօտովը: Մեծ փոթորիկ բարձրացաւ, լեռները և ապառաժները քիչ մնաց խորտակէր, բայց Աստուած հողմի մէջը չէր: Հողմից յետոյ երկրաշարժ եղաւ, Աստուած երկրաշարժի մէջ էլ չէր: Երկրաշարժից յետոյ կրակ եղաւ, բայց Աստուած կրակի մէջն էլ չէր. իսկ կրակից յետոյ մի մեղմ և բարակ ձայն լսուեց: Այն ժամանակ Եղիան ծածկեց երեսը և Աստուած ասաց նորան. «Դարձիր յետ անապատի միջով և ֆեուին իսրայելի վերայ թագաւոր օծիր, իսկ Եղիսէն՝ մարգարէ քո փոխարէն: Իսրայելի մէջ դեռ 7,000 հոգի ունիմ, որոնք Բաղադի առաջ ծուներ չեն դնում:

Եղիան գնաց և Եղիսէին գտաւ վար անելիս: Նա իւր վերարկուն նորա վերայ ծածկեց: Եղիսէն թողեց եզները. համբուրեց հօրն ու մօրը, և դնաց Եղիայի յետևից ու ծառայում էր նորան:

«Նրանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր:»
Մատ. ե. 5.

«Զի զոր սիրէ, Տէր, խրատէ»: Ն. ա. Եբր. Ժբ. 6.

«Առ Աստուծոյ ամենայն ինչ զօրաւոր»: Մատ.
ԺԹ. 26.

Աստուծոյ մօտ ամեն բան կարելի է:

§ 68.

Աքաաբը մեղանչումէ Նաբովթի դէմ և Եղիայի մահը:

ա.

Յեզրայելացի Նաբովթը Աքաաբի պալատի մօտ մի այգի ունէր: Մի անգամ Աքաաբն ասաց Նաբովթին. «Քո այգին ինձ տուր, ես կ'ամենումեմ ինձ համար պարտէղ շինել, որովհետև իմ պալատին մօտիկ է, իսկ դորա փոխարէն ես քեզ կամ մի ուրիշ աւելի լաւ այգի կտամ և կամ ինչ որ արժէ, կվճարեմ»: Նաբովթը պատասխանեց. «Աստուած մի արացցէ, որ իմ հայրենի ժառանգութիւնը քեզ տամ»: Աքաաբը բարկացած տուն վերադարձաւ, անկողին մտաւ և ոչինչ չէր ուտում: Նորա կին Յեզաբելը հարցրեց նորա տխրութեան պատճառը և նա պատմեց նորան բոլորը: Յեզաբելն ասաց. «Այդպէս ես դու իսրայելի վերայ թագաւորում. վեր կ'աց և կ'եր. Յեզրայելացի Նոբովթի այգին քոնն է»: Կինը իսկոյն նամակ գրեց Աքաաբի անունով և կնքով՝ նոյն քաղաքի մեծամեծներին և ծերերին ու պատուիրումէր նրանց ասելով. «Երկու անօրէն մարդու հրամայեցէք, որ վկայութիւն տան, թէ Նաբովթը Աստուծուն և թագաւորին հայհուցումէր. յետոյ նորան քաղաքից դուրս տարէք և քարկոծեցէք»: Քաղաքի մեծամեծ-

ները և ծերերը այդպէս էլ արին: Երբ Յեզաբելը Նաբովթի քարկոծուելը լսեց, ասաց Աքաաբին. «Վեր կ'աց, ժառանգիր յեզրայելացի Նաբովթի այգին, նա այլևս կենդանի չէ»: Աքաաբը այգին իջաւ և ժառանգեց նրան:

Աստուած ասաց Եղիային. «Վեր կ'աց, դնաւ Աքաաբի մօտ և ասա. «Որովհետեւ դու Նաբովթին սպանել տուիր և նորա այգին ժառանգեցիր, դորա փոխարէն՝ այնտեղ ուր շները Նաբովթի արիւնը լիղեցին, քո արիւնը կ'իղեն և Յեզաբելի մարմինն էլ քաղաքի պարիսպների վերայ կ'ուտեն»:

Այս բանից երեք տարի յետոյ՝ Աքաաբը պատերազմ ունեցաւ ասորուց հետ: Մի մարդ լարեց իւր աղեղը, խփեց թագաւորին. նետը զրահիցն անցաւ և արիւնը սկսեց հոսել: Կառքը արիւնով լքցուեց: Թագաւորը մեռաւ երեկոյեան. նորա մարմինը Սամարիա բերին: Երբ կառքը աւագանի մօտ հասաւ և լուսնումէին՝ շները լիղումէին նորա արիւնը: Այսպէս կատարուեց Տիրոջ խօսքը:

Մի տարուց յետոյ Յէուէն թագաւորեց Իսրայէլի վերայ և իւր բանակով տեղափոխուեց Յեզրայել քաղաքը: Յեզաբելը զարդարուած՝ պատուհանից դուրս էր նայում: Յէուէն ասաց իւր ծառաներին. «Վալը ձգէք դորան»: Երկու մարդ թագուհուն վալը ձգեցին, այնպէս որ նորա արիւնով ներկուեցին պատը և ձիաները, որոնք ոտի տակ առին և յետոյ շները կերան նորա մարմինը: Յէուէն ջնջել տուեց Աքաաբի տան բոլոր ժառանգներին:

Եղիան զգաց իւր մահուան օրերը. նա ասաց Եղիսէին. «Մնա այստեղ, Աստուած ինձ Յորդանան է ուղարկում»: Եղիսէն ասաց. «Վկայ լինի կենդանի Աստուածը, որ քեզնից չեմ բաժանուի»: Այն ժամանակ երկուսն էլ զնացին Յորդանան: Եղիան ասաց Եղիսէին. «Մահուանիցս առաջ խնդրիր, ինչ որ կամենում ես»: Եղիսէն պատասխանեց. «Թող քո հոգին կրկնապատիկ իջնի իմ վերայ»: Եւ երբ նրանք մեասին գնումէին, երկնքից հրեղէն կառք իջաւ՝ հրեղէն ձիաներ լծած. Եղիան մէջը նստեց. մըրիկը նորան երկինք բարձրացրեց: Եղիսէն նայում էր նորա յետևից և աղաղակում. «Հայր, Հայր, կառքդ իսրայէլի և հեծեալք նորա» և նորան այլ ևս չտեսաւ:

«Որ զրպարտէ գտնանկն, բարկացուցանէ զարարիչն նորա»: Գիրք առակաց Ժ. 31.

Աղքատին նեղողը՝ նորա Երարչին է անարգում:

«Մի խաբէիք, Աստուած ոչ արհամարհի. զի զոր ինչ սերմանէ մարդ, գնոյն եւ հնձեսցէ»: Թ. ա. Գաղ. գ. 7.

Մի խաբուիք, Աստուած թոյլ չի տայ արհամարհել, որովհետեւ...

§ 69.

Իսրայէլի և Յուդայի թագաւորութեան կործանումը:

ա.

Իսրայէլի որդիքը յաճախ մեղանչում էին Աստուծոյ դէմ և հեթանոսական կեանք վարում: Նրանք բոլոր քաղաքներում կռատուններ էին շինել. Բազա-

ղին երկրպագութիւն էին տալի. հաւատում էին վհուկներին և կախարդներին ու նոցա հետ ամեն տեսակ չարութիւններ գործում: Աստուած մարգարէի բերանով յայտնում էր նրանց ասելով. «Թողէ՛ք ձեր չարութիւնները, հեռացէ՛ք նրանցից և հետևեցէ՛ք իմ պատուիրաններին», բայց նրանք երբէք ուշք չէին դարձնում այս խօսքերին, արհամարհում էին նորա պատուիրանները և մոռանում այն դաշը, որը Աստուած նրանց պապերի հետ կապել էր: Այն ժամանակ Աստուած էլ աչքից ձգեց նրանց, ինչպէս և յայտնել էր մարգարէի բերանով:

Իսրայէլի վերջին թագաւորն եղաւ Ովսէն: Սա ևս Աստուծոյ ճանապարհով չգնաց: Ասորեստանի Սաղմանասար թագաւորը սորա դէմ պատերազմի դուրս եկաւ: Ովսէն յաղթուեց, հպատակ դարձաւ և հարկ էր վճարում նորան: Բայց որովհետև նա Եգիպտոսի թագաւորի հետ դաշն էր կապել և տարեկան հարկը կանոնաւոր կերպով չէր ուղարկում Ասորեստան, ուստի Սաղմանասարը Իսրայէլի թագաւորութեան վերայ եկաւ և Սամարիան երեք տարի շարունակ պաշարեց: Յետոյ քաղաքն առաւ և իսրայէլացւոց գերի տարաւ Ասորեստան: Նա իւր երկրից բաղմաթիւ հեթանոսներ բերել տուեց և Սամարիայի քաղաքներում բնակեցրեց: Երկրի մէջ իսրայէլացիք ևս մնացել էին, որոնք Տիրոջը հաւատում էին: Հեթանոսները խառնուեցան այս իսրայէլացիներին հետ և սոցանից յառաջացաւ Սամարացի կոչուած ժողովուրդը, որոնք աղօթում էին Տիրոջը, բայց միևնույն ժամանակ պաշտում էին և օտար աստուածներ:

բ.

Երբ որ Սաղմանասարը իսրայէլի թագաւորութեանը վերջ դրեց, կործանեց, Յուդայի տան վերայ թագաւորում էր Եզեկիան: Սա Աստուծոյ ճանապարհովն էր գնում և այն էր անում, ինչ որ Աստուածուն հաճելի էր: Նա կործանեց կոքերի սեղանները և բաց արեց Տիրոջ տան դռները, որոնց իւր հայրը կողպել էր տուել. պատուիրեց Աստուծոյ տունը մաքրել և սրբել: Դեսպաններ ուղարկեց Իսրայէլի և Յուդայի տէրութեան մէջ և հրաւիրում էր ամենքին Երուսաղէմ Պասէքի տօնը տօնելու, որ վաղուց չէին կատարել: Նա դեսպանների բերանով յայտնեց. «Ով Իսրայէլացիներ, դարձէ՛ք դէպի ձեր Աստուածը. նա ողորմած է. նա բարի է. նա իւր երեսը ձեզանից չի դարձնի, եթէ դուք նրան դառնաք»: Մեծ բազմութիւն հաւաքուեց Երուսաղէմում, Իսրայէլի թագաւորութիւնից ևս մարդիկ էին եկել: Այստեղ բազմութիւնն ինքը կործանեց Բազաղի սեղանը և Կեդրոնի ձորակը գլորեց ու եօթն օր շարունակ Պասէքի տօնն էին կատարում: Սողոմոնի օրից մինչև այսօր այսպիսի ուրախութիւն չէր տեսնուած Երուսաղէմում: Այսպէս Եզեկիան Աստուծոյ ճանապարհովն էր գնում և Աստուած էլ միշտ նորա հետն էր: Ասորեստանի նոր թագաւորը՝ Սենքերիմը սորանից յետոյ Յուդայի թագաւորութեան վերայ եկաւ, վերցրեց շատ քաղաքներ և պաշարեց Երուսաղէմը: Դեսպանի բերանով քաղաքի պարիսպների վերայ զրտնուող մարդկանցը յայտնեց. «Ասորեստանի մեծ թագաւորի խօսքին լսեցէ՛ք՝ Եզեկիային մի հաւատացէ՛ք,

որ ասումէ թէ Աստուած մեզ կազատէ. եթէ նորա Աստուածը ազատող լինէր ինչո՞ւ երկիրը չազատեց Ասորեստանի թագաւորի ձեռքից: Երբ Եգեկիան այս բանը լսեց, պատառեց շորերը, գնաց Տիրոջ տունը և մարդ ուղարկեց Եսայի մարգարէի մօտ ասելու. «Հեթանոսների թագաւորը նախատումէ կենդանի Աստուծուն, աղօթիր մեզ Համար»: Եսային պատասխան ուղարկեց ասելով. «Մի վախենար, որովհետեւ Աստուած այսպէս է ասում Ասորեստանի Հեթանոս թագաւորի մասին. նա քաղաք չի մտնի, այլ կդառնայ այն ճանապարհով, որով եկել է»: Այդ մի և նոյն գիշեր Աստուծոյ Հրեշտակը ասորեստանցւոյ բանակից 185,000 մարդ կոտորեց: Սենեքերիմը յետ դարձաւ Նինուէ:

Եգեկիայի որդի Մանասէն շեղուեց կրկին Աստուծոյ ճանապարհից. սկսեց կռուքերին երկրպագութիւն տալ և Տիրոջ տաճարի մէջ Բահադի Համար սեղաններ շինեց. նա պահում էր կախարդներ և Հմայողներ, որոնք ժողովրդին գալթակղեցնումէին և այսպէս Աստուծուն աւելի էին բարկացնում. քան թէ Հեթանոսները: Մանասէն շատ անմեղների արիւն ևս թափեց: Մարգարէի բերանով նորան ասաց. «Ես այնպիսի չարիք պիտի բերեմ Երուսաղէմի և Յուդայի տան վերայ, որ լսողի ականջները ձայն տայ»:

Սորանից յետոյ Յուդայի տան թագաւորները, մինը միւսից վատ եղան: Յովակիմը, որը Յուդայի թագաւորներից մինն էր, նմանապէս չար ճանապարհով գնաց: Սորա ժամանակ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը պաշարեց Երուսաղէմը. թա-

գաւորն անձնատուր եղաւ: Նաբուգոդոնոսորը վեր առաւ թէ տաճարի և թէ պալատի գանձերը, բոլոր իշխաններին, Հիւսներին և դարբիններին գերի տաւ, նմանապէս թագաւորին իւր ընտանիքով դէպի Բաբելոն, մնացին միայն աղքատները, իսկ Սեդեկիային թագաւոր դրեց Յովակիմի տեղ:

Սեդեկիան ևս Աստուծոյ ճանապարհով չգնաց. նա ապստամբուեց Նաբուգոդոնոսորի դէմ: Բաբելոնի թագաւորը երկրորդ անգամ եկաւ Երուսաղէմի վերայ իւր բոլոր զօրութեամբ. նա քաղաքի շուրջը պարիսպ կառուցեց ու պաշարեց մի և կէս տարի. սովը սաստկացաւ քաղաքում: Սեդեկիան և իւրաքիչները գիշերով փախան քաղաքից, բայց թշնամիները բռնեցին և Նաբուգոդոնոսորի մօտ տարան, ուր նորա դատաստանը կտրեց: Սեդեկիայի որդւոց իւր աչքի առաջ մորթեցին, իրան կուրացրին, շրջթաներով կապեցին և Բաբելոն տարան:

Միւհնոյն գիշերը, երբ Սեդեկիան փախաւ, թշնամիները մտան Երուսաղէմ. կոտորեցին բնակիչներին, կողոպտեցին բոլորին. այրեցին Տիրոջ տաճարը, թագաւորի պալատը և քաղաքի պարիսպներն էլ կործանեցին ու գետնին հաւասար դարձրին: Մնացած ժողովուրդը և բոլոր գանձերը Նաբուգոդոնոսորը Բաբելոն տանել հրամայեց: Այսպէս Յուդայի տունը կործանուեցաւ:

«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք». Առակք Սող. Ժդ. 34.

«Սէր չաւիտենական սիրեցի գբեզ, վասն այնորիկ ձգեցի գբեզ ի գթութիւն»: Երեմիա. լա. 3.

Յաւիտենական սիրով սիրեցի քեզ, դորա համար էլ քեզ ինձ մօտ քաշեցի:

§ 70.

Բաբելոնի գերութիւնը և սորա վախճանը.

ա.

Նաբուգոդոնոսոր թագաւորը հրամայեց, որ իսրայէլացիներէից այնպիսի երեխաներ ընտրեն, որոնք արատ չունենան—գեղեցկադէմ լինին և ընդունակ թագաւորին ծառայելու և միևնոյն ժամանակ քաղաքացւոց գիրն աւելցուն սովորեն: Սրանց թուի մէջն էր Դանիէլը իւր երեք ընկերներով: Թագաւորը հրամայեց իւր սեղանից կերակրեն նրանց և իւր խմած գինուցը խմեցնեն: Բայց Դանիէլը և երեք ընկերները որոշեցին չուտել թագաւորի սեղանի կերակուրներէից, որովհետեւ Մովսէսի օրէնքին հակառակ էր, ուստի խնդրեցին թագաւորի ներքինապետին, թող տալու իրենց միայն կանաչեղէն ուտել և ջուր խմել: Ներքինապետը տասն օր ժամանակ տուեց նրանց փորձելու համար և տեսաւ որ աւելի գեղեցիկ դարձան՝ քան թէ թագաւորի սեղանից ուտողները: Աստուած իսրայէլի մանուկներին հանճար և իմաստութիւն, իսկ Դանիէլին երազ մեկնելու շնորհ պարգեւեց: Նաբուգոդոնոսոր թագաւորը մի քանի ժամանակից յետոյ հարց ու փորձ արաւ, խօսեցրեց և նկատեց որ նրանք տասն անգամ հանճարեղ, իմաստուն են ամեն բանի մէջ, քան թէ իւր ամբողջ

թագաւորութեան մէջ եղող աստեղագէտները և մոգերը: Թագաւորը Դանիէլին և նորա երեք ընկերներին Բաբելաստանում մեծ պաշտօններ յանձնեց:

բ.

Դորանից յետոյ Նաբուգոդոնոսոր թագաւորը մի ոսկէ արձան շինել տուեց. կանչեց իւր մեծամեծներին և Բաբելոնի ժողովրդին ու ասաց. «Երբ դուք փողի ձայնը լսէք, այս ոսկէ արձանի առաջ պէտքէ չոգէք և երկրպագութիւն տաք, իսկ ով որ չի հնազանդի, իսկոյն կձգուի կրակով բոլորքած հնոցի մէջ»: Փողը փչելուն պէս՝ ամենքն էլ վաչր ընկան գետնի վերայ և ոսկէ արձանին երկրպագութիւն տուին: Մի քանի քաղաքացիներ գանգատուեցին թագաւորին Դանիէլի երեք ընկերներէից և ասացին. «Սրանք անպատեւ են քո հրամանը և կանգնեցրած ոսկէ արձանիդ երկրպագութիւն չեն տալի»: Նաբուգոդոնոսորը բարկացաւ—կանչել տուեց երեքին էլ և ասաց. «Եթէ դուք այս արձանին երկրպագութիւն չէք տալ, իսկոյն ձեզ կձգեն կրակով բոլորքուած հնոցի մէջ, տեսնեմ այն որ Աստուածն է, որ ձեզ իմ ձեռքից պէտքէ ազատէ»: Նրանք պատասխանեցին. «Մեր Աստուածը մեզ կազատէ և եթէ չկամենայ ազատել, իմացած եղիր, որ մենք քո արձանին դարձեալ երկրպագութիւն չենք տալ»:

Նաբուգոդոնոսորն աւելի ևս բարկացաւ. հրամայեց հնոցի կրակը ևս առաւել սաստկացնեն. կապել տուեց շորերով երեքին էլ և բոլորքուած հնոցի մէջ ձգեց: Թագաւորը նայեց նրանց վերայ, զարհուրեց, հարցրեց իւր խորհրդականին և ասաց. «2^է

որ մենք երեք մարդ կապած ձգեցինք հնոցի մէջ, ես չորսն եմ տեսնում. նրանք ազատ ման են գալի կրակի մէջ և անվնաս են, իսկ չորրորդի կերպարանքը աստուածների որդւոց կերպարանքի նման է»: Թագաւորը հնոցին մօտեցաւ և ասաց. «Ով Աստուծոյ ծառաներ, դուրս եկէ՛ք»: Դուրս եկան կրակի միջից. կրակը նրանց մի մազն էլ չէր այրել և ոչ շորերը խանձել: Նաբուգոդոնոսորը պատասխանեց. «Յրհնեալ է այն Աստուածը, որը ուղարկեց իւր հրեշտակին և ազատեց իւրան վերայ յոյս դնող ծառաներին: Այսուհետև իմ հրամանն այսէ—ով որ այս մարդկանց Աստուծուն անպատուէ, կտոր—կտոր կլինի»: Թագաւորը մեծ իշխանութիւն տուեց երեքին էլ Բաբելոնի գաւառումը:

Գ.

Մի անգամ Նաբուգոդոնոսոր թագաւորը երազ տեսաւ: Երբ քնից զարթեց խիստ վախեցաւ: Կանչել տուեց բոլոր մոգերին, հմայողներին և կախարդներին, որ երազը մեկնեն. նրանք ասացին թագաւորին. «Պատմիր մեզ քո երազը, որ մեկնենք»: Իսկ թագաւորը պատասխանեց. «Երազը մոռացել եմ, եթէ դուք չէք գտնի և չէք մեկնի, ամենքդ էլ մահու պատիժ կստանաք»: Նրանք պատասխանեցին. «Երկրիս վերայ մարդ չկայ, որ թագաւորի պահանջածն իմանայ, այդ անկարելի բան է»: Թագաւորը խիստ բարկացաւ և հրամայեց Բաբելոնի բոլոր իմաստուններին կոտորեն: Երբ Դանիէլն այս վճիռն իմացաւ, խնդրեց որ իրեն ժամանակ տան. տուն գնաց և իւր ընկերների հետ աղօթում էր Աստուծուն: Գիշերուայ

գաղտնիքը տեսիլքում յայտնուեց Դանիէլին: Դանիէլն օրհնում էր և փառաբանում Աստուծոյ անունը: Գորանից յետոյ շտապով գնաց թագաւորի մօտ և ասաց. «Այն գաղտնիքը, որը թագաւորը պահանջում է իմաստուններից, միայն երկնքի Աստուածը կարողէ յայտնել և նա յայտնումէ թէ ինչ պիտի պատահէ ապագայում, Ով թագաւոր, դու երազում տեսել ես մի մեծ արձան. նորա գլուխը մաքուր ոսկուց էր, կուրծքը և բազուկները արծաթից, մէջքն ու երանքները պղնձից, սրունքները երկաթից, ոտների մէկ մասը երկաթից, իսկ միւս մասը կաւից: Մի քար պոկուեց առանց ձեռքի, զիպաւ արձանի ոտներին և կոտրատեց: Այնժամանակ փշրուեցան երկաթը, կաւը, պղինձը, արծաթը, ոսկին և անյայտացան, իսկ այն քարը մեծացաւ լեռան չափ և լքցրեց բոլոր երկիրը: Սա երազն է. այժմ մեկնութիւնը—դու թագաւորների թագաւորն ես, դու ես այն ոսկէ գլուխը, քեզանից յետոյ ուրիշ թագաւորութիւն կգայ, որը քո թագաւորութիւնից ստոր կլինի. յետոյ երրորդ թագաւորութիւնը կգայ, որը պղնձիցն է: Չորրորդը երկաթի նման խիստ կլինի և ամեն բան կփշրէ, կջարգէ—սա էլ մասամբ զօրեղ և մասամբ թույլ կլինի: Այդ ժամանակներումն Աստուած երկնքիցը մէկ թագաւորութիւն կյարուցանէ որ կփշրէ, կվերջացնէ այս բոլոր թագաւորութիւնները. այն թագաւորութեանը յաւիտեան վերջ չի լինի: Նաբուգոդոնոսորը երեսի վերայ ընկաւ և ասաց. «Յիւրաւի, որ Ձեր Աստուածն է աստուածների Աստուածը, թագաւորների տէրը և գաղտնիքներ յայտնողը»:

Թագաւորը Դանիէլի աստիճանը բարձրացրեց և շատ սլարգեւներ տուեց ու նորան իշխան նշանակեց Բաբելոնի ամբողջ գաւառի վերայ, այլև իշխան քաղաքի բոլոր իմաստուններն վերայ:

դ.

Երբ Բաղդասարը Բաբելոնի վերայ Թագաւոր էր, պարսից Կիւրոս Թագաւորը պաշարեց քաղաքը իւր բոլոր զօրութեամբը և կամենում էր առնել: Այդ միջոցին Բաղդասար Թագաւորը մեծ խնջոյք ունէր, ուր հրաւիրուած էին իւր Թագաւորութեան բոլոր մեծամեծները: Ճաշի ժամանակ հրամայեց, որ Նաբուգոդոնոսորի ձեռքով՝ Երուսաղէմից գերի բերուած ոսկեայ սրբազան անօթները բերեն և նորանցով զուարճանան: Երբ բերին, սկսեցին խմել՝ թէ իւր մեծամեծները և թէ կանայքը: Գինին խմում էին և զոհանում ոսկեայ, արծաթեայ, պղնձեայ, երկաթեայ, փայտեայ և քարէ չաստուածներից: Նոյն ժամուն երևեցան մարդու ձեռքի մատներ, որոնք զրում էին արքունի դահլիճի պատի վերայ: Երբ Թագաւորը ձեռքը նկատեց, գոչնը փոխվեց. ոտներն սկսեցին դողդողալ. Թագաւորն իսկոյն պահանջեց մոգերին: Մոգերը եկան, բայց նրանցից և ոչ մինը կարողացաւ կարգալ և մեկնել: Այս բանից Թագաւորն աւելի վախեցաւ. ահա պատեց մեծամեծներին: Թագուհին պատմեց Թագաւորին իմաստուն Դանիէլի մասին, որին իսկոյն կանչեցին: Դանիէլն ասաց Թագաւորին. «Որովհետեւ դու մեծամտեցիր և արհամարհեցիր երկնից Աստուծուն, դորա համար ևս Նա այդ ձեռքը և այդ գիրն է ուղարկել: Գրուածքն այս է—մանէ, թեկեղ ու փարէս,

այսինքն, չափեցի, կշռեցի և բաժանեցի: Քո Թագաւորութեան օրերը չափած են. քեզ կշռեցին և թեթեւ գտան. քո Թագաւորութիւնը կբաժանուի և պարսիկներին կտրուի:

Այդ միևնոյն գիշերում Բաղդասար Թագաւորն սպանուեց. պարսից Կիւրոսն առաւ քաղաքը և բաբելացոց Թագաւորութեանը տիրեց:

ե.

Կիւրոսի Թագաւորութեան առաջին տարին Աստուած զարթեցրեց Թագաւորի սիրտը, այնպէս որ նա հրաման հանեց ամբողջ Թագաւորութեան մէջ՝ ասելով. «Երկնքի Աստուածը՝ Եհովան ինձ է տուել բոլոր Թագաւորութիւնները, նա հրամայեց որ Երուսաղէմումն իրա համար մի տուն շինեմ: Այժմ ձեզանից ով իրան՝ նորա ժողովուրդն է համարում, թող Երուսաղէմ դնայ և Աստուծոյ տունը կառուցանէ: Այն ժամանակ վեր կացան Յուդայի և Բենիամինի տան տոհմապետները, քահանաները և ղետացիները—առ հասարակ այն անձինքը, որոց հոգին Աստուած զարթեցրեց, իսկ նրանք, որոնք չկարողացան դառնալ, տուեցին գնացողներին արծաթեայ և ոսկեայ անօթներ և ուրիշ ստացուածներ: Կիւրոս Թագաւորն էլ դուրս հանեց Տիրոջ տան անօթները, որոնք Նաբուգոդոնոսորը դուրս էր բերել Երուսաղէմիցը: Հայրենիք դարձողների թիւը 42,000-ից աւելի էր, ի բաց առեալ նոցա ծառաները և աղախիները: Նորանց առաջնորդներն էին Զօրաբաբէլը, որը Դաւթի տանիցն էր, Յեսուն և քահանայապետը: Երուսաղէմ հասնելուն պէս սեղան կազմեցին և զոհ էին մատուցանում

Աստուծուն: Երկրորդ տարին սկսեցին արդէն տաճարը կառուցանել: Հիմը ձգելիս քահանաներն զգեստաւորուած էին և փողեր ունէին. ղեւտացիները ծնծղաներով օրհնում, փառաբանումէին Աստուծուն Գաւթի երգերով: Ամբողջ ժողովուրդը երգումէր նրանց հետ, ամենքը գովում և օրհնաբանումէին Տիրոջը, որ նա բարի է, որ նորա ողորմութիւնը յաւիտեան է իսրայէլի վերայ: Իսկ ծերերից շատերը, որոնք հին տաճարը տեսել էին, դառնապէս լաց էին լինում:

Երբ Սամարացիներն իմացան, որ գերութիւնից դարձող հրէաներն սկսել են Աստուծոյ համար տուն շինել, եկան Զորաբարէլի և ժողովրդի տոհմապետների մօտ ու ասացին. «Մենք ևս կամենում ենք Աստուծոյ տան շինութեան մասնակից լինել»: Իսկ նրանք պատասխանեցին. «Չի վայելի ձեզ և մեզ միասին մեր Աստուծոյ տունը կառուցանել, մենք կամենում ենք միայնակ շինել»: Այդ օրից սկսած՝ Սամարացիներն աշխատումէին խանգարել շինութիւնը և ժողովրդին սառեցնել: Բայց Աստուած իւր ժողովրդի հետն էր: Նրանք աւարտեցին տաճարը և մեծ հանդէսով և ուրախութեամբ օծեցին: Սորանից յետոյ նրանք Պատէքի տօնը ևս կատարեցին, որովհետեւ Աստուած նրանց սիրտն ուրախացրել էր:

Մի քանի տարի սորանից յետոյ Եզրասը, որը մի ընդունակ և գիտնական մարդ էր, պարձաւ Երուսաղէմ. սորա հետ եկան և շատ քահանաներ և ղեւտացիներ ու էլի մեծ բազմութիւն ժողովրդեան: Նա վերականգնեց աստուածապաշտութեան կարգը Մովսէսի դրուածքներին համաձայն և հաւաքեց այն

բոլոր դրուածքներն, որոնք Մովսէսից սկսած յայտնի էին: Ժողովրդից ոմանք հեթանոս կանայք ունէին: Եզրասը Աստուծոյ անունով պատուիրեց նրանց, որ բաժանուեն իրանց կանանցից և բաժանուեցին:

Պարսից Թագաւորի տակառապետ Նէեմին Յուդայի տան մի քանի մարդկանցից լսեց, որ Երուսաղէմի պարիսպները դեռ ևս կործանուած են: Նա գնաց իւր Թագաւորի մօտն և ասաց. «Եթէ քեզ հաճելի է, Թոյլ տո՛ւր, արձակիր ծառայիդ որ գնամ և իմ հայրերի քաղաքը շինեմ»: Թագաւորը Թոյլ տուեց նորան. Նէեմին վերադարձաւ հայրենիք և խօսեց ժողովրդի տոհմապետների հետ: Այն ժամանակ սկսեց քաղաքի պարիսպները և դռները շինել: Երբ այս բանը սամարացիներն իմացան, հաւաքուեցան, խումբ կազմեցին և սկսեցին պատերազմել հրէաների հետ: Նէեմին ասաց. «Մեր Աստուածը մեր փոխարէն կպատերազմէ» և պահապաններ նշանակեց թշնամիների դէմ, որ զիշեր և ցերեկ հսկեն: Հրէաների կէսը զինուորուած՝ զէնքը ձեռին—սրերով, նիզակներով, աղեղով և նետով պատերազմումէին, իսկ միւս կէսը պարիսպներն էր կառուցանում—ամենայն մի աշխատաւոր սուրը մէջքին ունէր կապած: Այսպէս նրանք մի ձեռքով աշխատումէին, իսկ միւսով զէնքն ունէին բռնած: Այս ձևով վերջացրին քաղաքի պարիսպները: Սորանից յետոյ Նէեմին բոլոր ժողովրդին Յուդայի քաղաքներից Երուսաղէմ հաւաքեց: Եզրասը դուրս բերեց Մովսէսի օրինաց գիրքը. դուրս եկաւ ժողովրդի առաջ և կարդումէր՝ առաւօտից մինչև երեկոյ: Բոլոր ժողովուրդն արտասովումէր օրինաց

խօսքերն լսելուն պէս: Եզրասն ասաց, «Եկէք Աստու-
ծոյ հետ հաստատ մի դաշն կապենք»: Նրանք խոստո-
վանեցին իրանց յանցանքը և երդուեցին, որ Աստու-
ծոյ օրէնքների համաձայն կվարուին, նրա պատուի-
րաններից չեն անցնի»:


«Որ համբերեացն իսպառ, նա կեցցէ»: Մատ. իդ. 13:

Ով որ մինչև վերջը համբերէ, նա կփրկուի:

«Ոչ սպառնալեօք իմովք շարժել զլերինս, եւ փո-
փոխել զբերս»: «Ոչ ողորմութիւն իմ պակասեցի
'ի քէն եւ ոչ ուխտ խաղաղութեան քոյ անցցէ»:
Եսայի ծգ. 10.


Լեռները կշարժուին և բլուրները կսասանին,
բայց իմ ողորմութիւնը քեզանից չի քաշուիլ և իմ
խաղաղութեան ուխտը զի սասանուիլ:

Վ Ե Ր Զ



70.9.

Արտագնական Ե 1057թ.



1572

1573

1572

<< Ազգային գրադարան



NL0028596

1573

<< Ազգային գրադարան



NL0028595

